ՀԱՅԱՍՏԱՆԻ Բ. ԱԶԳԱՅԻՆ

8460 բ. ա.

# Բուրվառ

## ԱՂՕԹԻՑ

Ի Վենետիկ

Ի Սուրբն Ղազար

1831

[illegible]



## ԱՂՕԹՔ

# ԱՌԱՒՕՏԵԱՆ

Ընդ լուսանալն 'ի ժամ
առաւօտին:

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Եւ ապա երիցս խաչակնքելով
ասա:

Օրհնեալ հայր սուրբ ա̃ծ ճշմարիտ: Օրհնեալ որդին ս̃բ ա̃ծ ճշմարիտ: Օրհնեալ

հոգիդ սուրբ ա̃ծ Ճշմարիտ: Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի սուրբ երրորդութիւն՝ հայր և որդի և հոգի սուրբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աստուած ա̃ծ իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ. ծարաւեցաւ առ քեզ հոգի իմ. քանի պատիկ ևս և մարմին իմ: Որպէս երկիր անապատ և անջուր՝ ուր ոչ գոյ ՚ի նմա Ճանապարհ: — Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ ա̃ծ: Ծարաւի է անձն իմ առ քեզ

ած, հզօր և կենդանի. Երր եկից երևեցայց երեսացդ ոյ: Հայր մեր որ յերկինս:

## Աղօթք առաւօտեան:

Երրորդութիւն անբաժանելի ած յաւիտենական՝ անկեալ առաջի մեծութեն փառաց քոց գոհանամ և շնորհս մատուցանեմ վասն անբաւ ողորմութեան քո, որ պահպանեցեր և հասուցեր զիս յայս ժամ առաւօտուս: Օրհնեմ և փառաւորեմ ըզքեզ, և մատուցանեմ արարչիդ խնում զամ զխորհուրդս զբանս և զգործս իմ. և առաջադրեմ առնել

այսօր և զա՟մ աւուրս կենաց իմոց զա՟մ ինչ 'ի սէր և 'ի փառս քո, և 'ի լնուլ զա՟ծային կամս քո, և սիրով յանձն առնուլ զոր առաքէ հայրախնամ նախախնամութիւնդ 'ի վերայ իմ: Վասն որոյ ընկալեալ զյօժարութիւն սրտի իմոյ՝ օգնեա տկարութեանս և տարտամութեանս իմում. զօրացո զիս 'ի պահպանութիւն պատուիրանաց քոց. պահեա զիս յա՟մ փորձութե՟ց հոգւոյ և մարմ՟նոյ: Տուր ինձ զշնորհս քո, զի ընդ իս լիցի, ընդ իս գործեսցէ, և ընդ իս մինչ 'ի սպառ կացցէ մնասցէ, և շնորհեա ինձ հանապազ այնմ ցանկալ և

փափաքել, որ առաւել հա-
ճոյ է քեզ և ընդունելի։
Քո կամք իմ լիցին, և իմ
կամք քոյ կամաց միշտ ըղ-
հետ երթիցեն։ Տէր ուսո
ինձ առնել զկամս քո. ու-
սո ինձ առաջի քո արժա-
նապէս և խոնարհութեամբ
գնալ։ Տուր ինձ տէր զիմաս-
տութիւն երկնային, զի ու-
սայց քան զա̃մ զքեզ խնդ-
րել և գտանել, քան զա-
մենայն զքեզ խորհել և սի-
րել։ Տուր ինձ 'ի վեր քան
զամենայն ցանկալիս 'ի քեզ
հանգչել, և զսիրտ իմ 'ի քեզ
խաղաղել։ Զի դու միայն ես
ճշմարիտ խաղաղութի սըր-
տի, դու միայն հանգիստ,

և քեզ փառք յաւիտեանս. ամէն:

Այլ աղօթք առաւօտեան:

Տէր իմ և Ած իմ, շնորհակալ եմ զքեզ, զի 'ի վերայ այլոց բարերարութեանց քոց յաւելեր և զայս, զի զարթուցեալ զիս 'ի քնոյ՝ հասուցեր 'ի յայս ժամ առաւօտուս առ 'ի փառաւորել զանուն քո սուրբ, և ընդունել 'ի քէն զշնորհս՝ որով զօրացեալ կարացից անել զհաճոյս քո: Ուստի խնդրեմ զի ընդ առաւօտանալ աւուրս, առաւօտասցին 'ի յիս լուսաւորութիւնք շնոր-

հաց քոց. զի որպէս մարմին իմ՝ ի մարմնաւոր լոյս տուընջեան, նոյնպէս և հոգի իմ յիմանալի լոյս շնորհաց քոց շրջեսցի զօրն ողջոյն. ամէն։

## Ա. Ներբողեան Շնորհակալութեան Երգ առ Տէր Երրորդութիւնն։

Անբաժանելի և համագոյ Երրորդութիւն համաձայնեալ ընդ զօրս երկնից փառս մատուցանեմք։ — Փառք քեզ։ Որ յանարուեստ յաթոռ բարձրացեալ հանգչիս, ո̃ւ ա̃ծ հզօր և սքանչելագործ։ — Փառք քեզ։ Որ յանէից գոյացուցեր զա̃մ արարածս, ո̃ւ ա̃ծ անճառ

Հօր անեղ Որդի: — Փառք քեզ: Որ տեսչութե՟ խնամես զմեզ արարածս, սուրբ ա՟ծ բղխումն անսպառ աղբեր: — Տէր, ժողովրդապետք եկեղեցւոյ ՚ի քէն հայցեն ասելով, հովիւ բարի ողորմեա բանաւոր հօտի: — Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Յանձնարարութիւն առ սուրբ աստուածամայրն :

Ով ամենօրհնեալ մ՟ր ա՟ծածին, մայր գթութեան և բարեխօս ամենայն հաւատացելոց որդւոցս. յանձն առնեմ զիս այսօր ամենա-

գութ հոգաբարձուն քում սա ՚ի պատսպարել զիս յամենայն արկածից հնոյ օձին սատանայի, զորս դժոխն կոխեալ ջախջախեցեր, որպէս զի զերծեալ ՚ի մեղաց՝ արժանի եղէց ծառայել քեզ անխիծ վարուք, և փառաւորել զա՟ծորդին քո ընդ հօր և ընդ հոգւոյն ս՟բ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ընդ հովանեաւ պաշտպանութեան քո ապաւինիմք ս՟բ Ա՟ծածին, մի՛ անտես առներ զաղաչանս մեր ՚ի կարիս մեր, այլ յա՟մ վտանգէ ապրեցո՛ զմեզ մշտակոյս փառաւորեալ և օրհնեալ:

Փառաբանութիւն հրեշտակական։

Փառք 'ի բարձունս ա՟յ, և
յերկիր խաղաղութի, 'ի մար-
դիկ հաճութի։ Ըւ օրհնութի
քեզ 'ի բարձունս. օրհնեալ
ես տ՟ր ա՟ծ մեր. օրհնեմք զզ-
քեզ, և գովեմք զքեզ։ Խոս-
տովանիմք առ զքեզ և եր-
կիր պագանեմք քեզ. փա-
ռաւորեմք զքեզ, գոհանամք
առ զքէն վասն մեծի փա-
ռաց քոց։ Տէր Թագաւոր
ս՟բգ երկնային՝ ա՟ծ և հայր
ամենակալ։ Տէր և որդի հօր
միածին յ՟ս ք՟ս և ս՟բ որդի։
Տէր ա՟ծ գառն ա՟յ, և որդի
հօր, որ առեր զմեղս 'ի կու-

սէն , ողորմեցար բարձեր ըզ-
մեղս աշխարհի ։ Եւ արդ ըն-
կալ զաղաչանս մեր ․ սուրբդ
որ նստիս ընդ աջմէ հօր՝ ո-
ղորմեաց մեզ ։ Զի դու միայն
ս̃բ ․ դու միայն բարձրեալ
ես ․ դու միայն տէր մեր յ̃ս
ք̃ս տէր և հոգիդ սուրբ , որ
՚ի փառս ա̃ծ ընդ հօր ․ ամէն ։
Եւ յա̃մ ժամ օրհնեմք ըզ-
քեզ ․ տէր և գովեմք զանուն
սուրբ քո յաւիտեան և յա-
ւիտեանս յաւիտենից ։ Ար-
ժանի արա տէր զօրս զայս
խաղաղութեամբ , և առանց
մեղաց պահել զմեզ ։ Օրհ-
նեալ ես տէր ա̃ծ հարցն մե-
րոց ․ գովեալ և փառաւո-
րեալ է անուն սուրբ քո՝ յա-

ւիտեանս. ամէն: Օրհնեալ տէր ուսո ինձ զարդարութիւնս քո. Երիցս կրկնէ: Տէր ապաւէն եղեր մեր ազգէ յազգ: Ես ասացի տէր ողորմեա ինձ, և բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ: Ցոյց մեզ տէր զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տուր մեզ: Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի անտես առներ: Տէր իմ, զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես Ած իմ: Ի քէն է տէր աղբիւր կենդանութեան, և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Ծագեա զողորմութիւնս քո, որք ճանաչեն զքեզ տէր:

Ս. Գրիգորի Նարեկացւոյ ա-
ղօթք առաւօտեան:

Արքայ երկնաւոր, Թագա-ւոր բարձրեալ, Տ՟ր բոլորից, ամենից ակնկալութ՟ին, տեղ-ծող տեսականաց, հաստիչ իմանալեաց, պատճառ եղա-նութեանց, կազմիչ հան-դերձելոց, տուիչ լուսոյ, ա-ռիթ առաւօտու, պատրաս-տիչ վաղորդայնի, երևեցու-ցիչ երեկորի, տարրիչ խա-ւարի, արուեստաւոր բարե-հնար, իմաստութեան գոր-ծօնեայ, քաւարան օրհնեալ, հալիչ մեղանաց, հալածիչ ցաւոց, քակտիչ գառնու-

թեանց, պահպանարան համ-
գլատեան, հնարք նիրհման,
յարմարիչ քնոյ, պարգևիչ
ննջման, շնչոյ յարակարգու-
թեան, զգայութեան պէտողու-
թեան, ցրիչ ցնորից, յեղա-
նակիչ անրջոց, փոխարկու-
թեան զարհուրմանց, այլայ-
լութեան տխրութեանց, խա-
փանիչ խիթմանց, ընդար-
ձակիչ կարծեաց, համադրու-
թեան ծփմանց, ահագնութե
խարդախմանց, հարուածիչ
գիւաց, փախուցիչ ախտից,
ընկղմիչ գայթակղութեանց:
Պաշտպանեա երկնաստեղծ
ձեռամբդ, զօրայո բարձրա-
ցեալ քո աջովդ, ամփոփեա
ամենակալդ թևօք, ծածկեա

ռծեան խնամօքդ, ամրացո վերակացութեամբ վերնայնոցդ, շուրջանակի պարըսպեա գումարտակօքդ անմահից, 'ի յամենուստ պարփակեա կցորդութեամբ հրեշտակաց, վանեա զընդդիմամարտն իմ զինուորութեամբ զուարթնոցդ, պատսպարեա զպատանեակս՝ Աստուածածնիդ մաղթանօք, զբանակս անդրանկացդ բարեկարգեա ինձ պահապան: Բայց ընդաչացս դիմաց և զմտացս իմ տեսանելիս, զգաստ արա ընդոդւոցս և զծանրաբեռն կըրիցս դանդաղութիւն, վերացո տէր 'ի զգայութենցս զմածեալս յիմարութի. բարձ,

միայն բարեգործ, զպատ-
րուակիս թանձրութի: Ընդ
սկզբան բերմանս լուսոյ՝ զօ-
զորմութն քո ծագեա. ընդ
Էլից արեւուն՝ արդարութե
արեգակնդ 'ի յանձկութիւն
սրտիս մոցէ. Ճառագայթ
քո փառացդ 'ի յիմաստից
խորհրդանոց ջահեսցի. խա-
չիդ տեսանողութիւն ընդ
շունչս եւ ընդ մարմինս համա-
տիխ տարածեսցի: Ցանձն
առնեմ քեզ յաւուրս զքո
յարմարել տապալաւարս պահ-
պանաւ ոգւոյս՝ որ 'ի սմին:
Զի դու ես ա՛ծ անքնին, ա-
մենեսին բաւական, եւ յա-
մենայնում բովանդակ, օրհ-
նեալ յաւիտեանս. ամէն: յդ:

Սրբուհւոյ Ածածնին բա-րեխօսութեամբ ընկալ տէր զմաղթանս մեր, յորժամ յարևելից լուսածագիս ան-ձառ հրաշիւք, կարապետ առնելով զյաղթանակ ն̃ր նշանն. աղաչեմք զքեզ տէր պահպանեա զմեզ ընդ հո-վանեաւ խաչի քո սուրբ։

Խոստովանութեան հաւատոյ։

Ճանապարհ և Ճշմարտութի̃ն և կեանք, տ̃ր իմ և ա̃ծ իմ, որ առաջնորդես հոգւոց մերոց 'ի ձեռն եկեղեցւոյ քում ս̃բյ. և ես հաւատամ և դաւանեմ զոր ինչ ուսա-ցանէ կաթողիկէ և առաքե-

լական ս̃բ եկեղեցի · և ցան-
կամ շնորհօք քո կեալ մինչև
ցմահ 'ի ս̃բ հաւատս յայս:

Յուսոյ:

Ամենակալ և բազմողորմ
ա̃ծ, յոյս յուսացելոց 'ի քեզ,
որ խոստացար հաւատացե-
լոց քոց տալ թողութ̃ն մե-
ղաց, և արժանի լինել ար-
քայութ̃եդ երկնից · մեղու-
ցեալ ծառայս քո կարդամ
առ քեզ, յուսացեալ ա-
պաշխարութ̃բ և գործովք
բարեաց հանդիպել 'ի քէն
թողութ̃ե մեղաց և կենացն
յաւիտենից 'ի ձեռն չարչա-
րանաց և մահուան միածնի

քո տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի․ ընդ
որում քեզ հօր և ս՟բ հո-
գւոյդ վայելէ փառք իշխա-
նութ՟ն և պատիւ այժմ և
միշտ և յաւիտեանս յաւի-
տենից․ ամէն։

## Սէրոյ։

Որ աղբիւրդ ես ա՟մ բա-
րութե՟ց, և պարգևատու արա-
րածոց քոց․ որ ստեղծերդ
զիս և փրկեցեր․ սիրեմ զ-
քեզ 'ի բոլոր սրտէ և 'ի բո-
վանդակ մտաց․ և վ՟ն սիրոյ
քո սիրեմ և զբարեկամս և
զթշնամիս իմ, զոր հրամայե-
ցեր․ և ընտրեմ զմահ քան
խոտորել երբեք 'ի պատուի-
րանաց քոց։

Զղջման ։

Տէր ա՜ծ փրկու՜թ իմոյ, որ ողորմած ես և գթած, երկայնամիտ և բազումողորմ. որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա 'ի չար ճանապարհէն և զկեալ։ Քեզ մեղայ, և չար առաջի քո արարի. արդ անկեալ աղաչեմ զքեզ, և խնդրեմ զթողու՜թն յանցանաց իմոց. ա՜ծ քաւեա զիս զմեղաւորս. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո ինձ զպատմուճանն՝ զոր մերկացայ մեղօք. և հաստատեա զիս 'ի շնորհս քո, զի մի ևս այսուհետև մեղայց քեզ ։

Որ դատաւորդ ես
Ծածկելոց գիտող,
Տէր արա անտես
Ըզմեղս իմ և թող։
Զի դիւրագայթ եմ
Եւ տըկար մարմին,
Պատկերըդ վըսեմ
Եղծեալ յիս նախկին։
Բազում են մեղք իմ
Քան զաւազ անթիւ.
Այլ ես յայնց գարշիմ
Բոլորով սըրտիւ։
Մեղայ տէր յերկինս
Եւ առաջի քո,
Զարեան քո ըզգինս
Յիշեա և կեցո։

### Յանձնարարութիւն անձին 'ի խընամս Աստուծոյ:

Զի՞նչ դէպք այսօր ընդ իս անցանիցեն՝ չգիտեմ տէր. գիտեմ և եթ զի ոչ ինչ դիպեսցի ինձ, զոր չիցէ քո նախատեսեալ, կամեցեալ, կարգեալ և հրամայեալ 'ի յաւիտենից, և շատ է ինձ այս: Երկրպագեմ անքննալի խորհրդոց քոց յաւիտենից, և հնազանդիմ այնոցիկ 'ի բոլոր սրտէ վասն սիրոյ քո. կամիմ և ընդունիմ և նուիրեմ քեզ զայն ա՟մ ընդ նուիրմանն Յ՟ի Ք՟ի փրկչին իմոյ, խնդրելով յանուն նո-

րա և վասն ամենայն վաստակոց Նորա համբերութիւն ՚ի վիշտս իմ և զկատարեալ հպատակութիւն ամի որ ինչ կամիս. և Թողացուցանես:

Ցանկամ տէր՚ի բոլոր սրտէ զի կատարեսցին յիս բարեսէր և ամենօրհնեալ կամք քո, ես և հակառակք յօժարութեան կամաց իմոց:

Լուսաւորեա զիս տր̃, փարատեա զխաւար մտաց իմոց, տուր ինձ հաւատս ամբիծ, յոյս հաստատուն, և սէր կատարեալ: Տուր ինձ այնպէս ճանաչել զքեզ, զի

զո̃մ ինչ գործեցից լուսով քով ըստ կամաց քոց բարեսիրաց:

Լոյս տուր, տէր, աչաց իմոց, զի մի՛ երբէք ննջեցից 'ի մահ:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես ա̃ծ իմ:

ԱՂՕԹՔ

# ԸՍՏ ԱՒՈՒՐՑ ԵՕԹՆԵԿԻ

## Ի կիւրակէի:

Ով սիրելի փեսայդ իմ Յս Քս՝ գերամաքուր սիրող, որ տէրդ ես ամ արարածոց, ո՛ տայր ինձ թեւս ճշմարիտ ազատութե՛ն, թռչել և հանգչել 'ի քեզ: Ե՛րբ լիով տացի ինձ ճաշակել և տեսանել, զի քաղցր ես տէր ած իմ:

Ե՛րբ լոկ պատսպարեցայց 'ի քեզ, մինչև վասն սիրոյ քո չխորհել ինչ զիս, այլ զքեզ միայն 'ի վեր քան զամենայն միտս, օրինակաւ որ չէ ամենեցուն յայտնի: Աւ այժմ ստէպ յոգւոց հանեմ, և թըշուառութեան խմում ցաւագին տանիմ. զի բազում չարեք յայսմ հովտի տառապանաց պատահեն՝ որ զիս յոլովակի խռովեն, տրտմեցուցանեն, և մռայլ զինև արկանեն. բազում անգամ խափանեն և զբաղեցուցանեն. խոտորեցուցանեն և թակարդեն, զի մի՛ ազատ մտաւ ունիցիմ առ քեզ, վայելել 'ի քաղցր գրկախառ-

նութիւնան , յոր վայելէն միշտ երանելեացն դասք ։ Գութ արկցէ 'ի քեզ հեծութեն իմ, և բազմադէմ ամայութիւն իմ յերկրի ։

Յն ճառագայթ յաւիտենական փառաց , սփոփութիւն պանդխտեալս հոգւոյ. առ քեզ է բերան իմ անբարբառ , և լռութիւն իմ խօսի ընդ քեզ ։ Մինչև ցե՞րբ յամէ տէր իմ 'ի գալ ։ Եկեսցէ առ իս յաղքատիկ իւր , և ուրախ արասցէ ։ Զգեսցէ զձեռն իւր , և փրկեսցէ ըզտառապեալս յա̃մ նեղուէ ։ Ե՛կ էկ , զի առանց քո չէք ինչ օր կամ ժամ ուրախութեան. վա̃ զի դու ես ուրա-

խութիւն իմ, և առանց քո թափուր է սեղան իմ։ Տառապեալ եմ ես, և որպէս թէ 'ի բանտ արկեալ և յունահատս ընդեալ․ մինչև լուսով երեսաց քոց հանգուցես զիս, և յազատութիւն հանցես, և զխրախ դէմս քո ցուցցես։

Յերկուշաբաթի։

Տուր ինձ տէր օգնութիւն 'ի նեղութեան․ զի ընդունայն է փրկութիւն մարդոյ։ Քանիցս անգամ չգտի հաւատարմութիւն անդ՝ ուր կարծէի գտանել, և քանիցս անգամ գտի անդ՝ ուր ոչ կարծէի։

Այս ընդունայն է յուսալ 'ի մարդիկ. և փրկութիւն արդարոց 'ի քէն է տէր։ Օրհնեալ ես տէր ա̃ծ յա̃մի, որ ինչ անցանէ ընդ մեզ։ Տկար եմք և յողդողդ. վաղվաղակի խաբիմք և փոփոխիմք։ Ո՞վ է մարդ, որ այնպէս ըզգուշաւոր և աչալուրջ յամենայնի անձնապահ լիցի, մինչ ոչ երբէք անկանիլ նմա 'ի պատրանս ինչ կամ 'ի տարակոյս։ Այլ որ 'ի քեզ տէր յուսացեալ է, և միամիտ սրտիւ զքեզ խնդրէ, ոչ դիւրաւ սահի։ Եւ թէ անկանի 'ի նեղութիւն ինչ, որպէս և պաշարեսցի, վաղվաղակի քև փրկանի՝ կամ մխիթա-

րութիւն 'ի քէն ընդունի. զի ոչ անտես առնես զյուսացեալս 'ի քեզ 'ի սպառ: Ո՞ւր իցէ մտերիմ բարեկամ, որ յամենայն 'ի վիշտս առ բարեկամի իւրում կայցէ մընայցէ: Դու տ՟ր, դու միայն ես մտերիմ յա՟մի. և բաց 'ի քէն չիք ոք այլ:

Յերեկոյեանն:

Տ՟ր ա՟ծ իմ, որ արարեր զիս ըստ պատկերի քում և ըստ նմանութեան, շնորհեա ինձ զշնորհդ զայդ՝ զոր ցուցեր այսչափ մեծ և հարկաւոր առ փրկութիւն զի յաղթեցից իմում ապականեալ բը-

նութեան, որ ձգէ 'ի մեղս և 'ի կորուստ: Զի տեսանեմ 'ի մարմնի իմում զօրէնս մեղաց, որ հակառակ կայ օրինաց մտաց իմոց, և գերէ զիս 'ի հնազանդութիւն զգայութե՛ 'ի բազումն: Եւ ոչ կարեմ ընդդէմ դառնալ կրից նորա, Թէ ոչ օգնէ ինձ շնորհ քո սուրբ՝ ջերմ հեղեալ 'ի սիրտ իմ:

Ո՛վ երանաւէտ շնորհ, որ զաղքատն հոգւով՝ ճոխացուցանես առաքինութե՛ք, և զճոխացեալն բազում բարեօք՝ խոնարհ առնես սըրտիւ: Ե՛կ էջ առ իս. լից զիս յայգուէ մխիթարութեամբ քով, զի մի՛ նուաղեսցի 'ի վհատութենէ և 'ի ցամաքու-

թենէ մնայց անձն իմ: Տուր տէր, պատմել ինձ շնորհս առաջի քո. զի շատ է ինձ շնորհ քո, թէպէտ և ոչ ինչ ունիցիմ՝ ի ցանկալեաց ըննութեան: Եթէ փորձեցայց և տառապեցայց վշտօք բազմօք, ոչ երկեայց 'ի չարէ, 'ի լինել շնորհի քո ընդ իս. նա է իմ զօրութիւն, նա տայ ինձ խորհուրդ և օգնութի̄: Քան զա̃մ թշնամիս է զօրագոյն, և քան զա̃մ իմաստունս իմաստնագոյն:

Ի ԵՐԵՔՍՐԲԵԱՆՆ:

Ահա ա̃ծ իմ, և ա̃մ ինչ: Զինչ այլ կամիմ. և որո̃ւմ ի-

մեք լուսաւոյն ըղձանալ մար_
թիմ։ Ո՛վ անուշակ և քաղցր
բան, բայց սիրողին զբանն,
և ոչ զաշխարհ և զորս յաշ_
խարհի են։ Ա՜ծ իմ և ա՜մ
ինչ։ Ի միտ առողին շատ է
տասցեալս, և սիրողին քաղ_
ցըր է ստէպ կրկնել զայն։
Ապաքէն ուր դու կաս, քաղ_
ցըր է ա՜մ. բայց թէ 'ի բա_
ցէ ես, դառն է ա՜մ։ Դու
տաս սրտի հանդարտութի՜ն,
մեծ խաղաղութի՜ն, և ցնծա_
լից ուրախութի՜ն։ Դու տաս
ուղիղ խորհել զա՜մ, և օրհ_
նել զքեզ յա՜մի, և առանց
քո ոչ ինչ հաճոյ թուի ընդ
երկար. այլ առ հաճոյ լի_
նել և քաղցրանալ՝ պարտ է

նմա զշնորհ քո առընթեր ունել, և համեմիւք իմաստութեան քո համեմիլ։

Որում քաղցր ես դու, զի՞նչ ոչ քաղցրանայ նմա. և որում չես դու քաղցր, զի՞նչ քաղցրասցի նմա։ Բայց վըրէպ են յիմաստուէ քումմէ իմաստունք աշխարհի, և որոց քաղցր է մարմին։ Զի անդ է բազում ունայնութի, և առ մահ։ Բայց որք արհամարհօք աշխարհայնոց և մեռելութբ մարմնոյ զհետ երթան քո, ճշմարտապէս իմաստուն ճանաչին, զի 'ի նանրութէ 'ի ճշմարտութի, և 'ի մարմնոյ 'ի հոգի փոխադրին։ Այսպիսեաց քաղցր

է ա̅ծ. և որ ինչ բարութիւն գտանի յարարածս, զն̅մն 'ի գովեստ մատուցանեն իւրեանց արարչին: Այլ աննըման է քաղցրութիւն արարչին և արարածոց, յաւիտենից և ժամանակի, լուսոյն անստեղծի և լուսոյն լուսաւորելոյ:

### Ի ՀԻՆԳՇԱԲԱԹԻ:

Ո՞ տացէ ինձ տէր, գտանել զքեզ միայն, բանալ քեզ բովանդակ զսիրտ իմ և վայելել 'ի քեզ, որպէս փափաքէ անձն իմ, մինչ զի յայնմ հետէ ոչ ոք իցէ՝ որ զիս անգոսնեսցէ, և ոչ

ստեղծուած ինչ զիս շար-
ժեսցէ, կամ բնաւ իսկ յիս
հայեսցի. այլ դու միայն ընդ
իս խօսեսցիս, և ես ընդ քեզ.
զոր օրինակ խօսիցի սիրելին
ընդ սիրելւոյ, և կերցէ բարե-
կամն ընդ բարեկամի: Զայս
աղաչեմ և այսմ ըղձանամ,
զի ընդ քեզ բոլորովին միա-
ցայց, և զսիրտ իմ յամ ա-
րարածոց 'ի բաց դարձուցից,
և սուրբ հաղորդութեամբ
և ստէպ պատարագմամբ ու-
սայց ևս քան զևս քաղցրա-
նալ յերկնային խոկմունս:
Ե՞րբ տէր բոլորովին ընդ քեզ
միացայց, և 'ի քեզ ընկլայց:
Շնորհեա տէր քեզ յիս լի-
նել՝ և ինձ 'ի քեզ, և այն-

պէս մնալ մեզ 'ի միասին : Դու ես սիրելի իմ, ընտարեալ 'ի բիւրուց, յոր հաճեցաւ անձն իմ բնակել զամ աւուրս կենաց իմոց : Դու ես իմ խաղաղարար, յորում է ամենակատար խաղաղութիւն և հանգիստ ճըշմարիտ · և արտաքոյ նորա վաստակք և ցաւք, և անհնարին թշուառութին : Դու ես ած ծածկեալ, և խորհուրդ քո չէ ընդ ամբարիշտըս, այլ ընդ խոնարհս և ընդ պարզամիտս էն խօսք քո : Ո՜վ, որպէս քաղցր է հոգի քո տէր, որ 'ի ցուցանել ըղքաղցրութին քո առ որդիս՝ անուշակ հացիւ որ իջեալ

է յերկնից՝ յանձն առնուս զնոսա կերակրել: Չիք այլ ազգ այնպէս մեծ, որ ունիցի ածս իւր հպաւորս՝ որպէս դու ած մեր մերձ ես ամ հաւատացելոց քոց, որոց 'ի հանապազորդ աղօթանս և առ ուղղելոյ ըզ-սիրտ նոցա յերկինս՝ զքեզ ջամբես 'ի կերակուր և 'ի ըմպելս:

Ի ՅՈՒՐՀՆԱՆՍ:

Տէր՝ ամ ինչ քո է, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի: Ցանկամ զանձն իմ քեզ կամաւոր պատարագ մատուցանել, և քոյ լինել 'ի սպառ:

Տէր, սրբութիւն սրտի մա-
տուցանեմ զիս քեզ այսօր
'ի մշտնջենաւոր ծառայ, 'ի
պաշտօն և 'ի պատարագ հա-
նապազորդ օրհնութեան: Ըն-
կալ զիս ընդ ո̃ր նուիրանացս
պատուական մարմնոյ քոյ,
զոր քեզ այսօր առաջի հրեշ-
տակաց յաներևոյթս յանդի-
ման եղելոց՝ մատուցանեմ.
զի լիցի վասն իմ, և վասն
ա̃մ ժողովրդեան քո 'ի փըր-
կութիւն:

Տ̅ր, առաջի առնեմ քեզ զա̃մ
մեղս և զյանցանս իմ զոր
գործեցի առաջի քո, և ս̃րց
հրեշտակաց քոց, յորէ յոր-
մէ սկիզբն արարի մեղան-
չել, մինչև ցայսօր, 'ի վե-

րայ հաշտարար սեղանոյ քո. զի առ հասարակ զմեզ այրեսցես և կիզուցուս հրով սիրոյ քո, և ջնջեսցես զամենայն բիծս մեղաց իմոց, և զխիղճ մտաց իմոց յամ յանցուածոց մաքրեսցես, և պարձուսցես զիս զշնորհ քո՝ զոր մեղօք կորուսի, 'ի ներել ինձ լիով զամենայն, և յընդունել զիս մարդասիրաբէս 'ի համբոյր հաշտութեան:

Զի՞նչ կարող իցեմ՝ անել վասն մեղաց իմոց, բայց խոնարհութեամբ խոստովանել և ողբալ, և զքո ներողութիւնդ անդադար աղաչել: Պաղատիմ առ քեզ, Լուր ինձ գը-

թուլթեամբ ՚ի կալ իմում առաջի քո , ա՜ծ իմ: Ամենայն մեղք իմ չար թուին ինձ յոյժ , և այլ ոչ երբէք կամիմ գործել· այլ զղջացեալ եմ ՚ի նոցանէ , և զղջացայց յորչափ իցեմ կենդանի· պատրաստ եմ ապաշխարել և ըստ կարի վճարել: Թող ինձ տէր , թող ինձ զմեղս իմ վ՜ն անուանդ քում ս՜ր · կեցո զհոգի իմ, զոր պատուական արեամբ քո գնեցեր : Ահա յանձն առնեմ զիս ողորմութեան քում, և ՚ի ձեռս քո աւանդեմ զիս : Արա ընդ իս ըստ բարութե՜ն քում, և մի ըստ չարութեան և անօրէնութեան իմում:

Ի շաբաթու :

Ո՛վ լոյս մշտնջենաւոր, որ 'ի վերդ ես քան զամ լոյս եղական · փայլեա զփայլատակունս 'ի բարձանց՝ մտանել 'ի շտեմարանս սրտի իմոյ : Մաքրեա, ուրախացո, պայծառացո, և կենդանագործեա զհոգի իմ և զզօրութիւնս սորա՝ յարել 'ի քեզ հրճուաղական հիացմամբ : Ե՛րբ եկեսցէ այն երանաւէտ ժամ ցանկալի, զի տեսլեամբ քո զիս յագեցուսցես, և լիցիս ինձ ամ յամի : Մինչև է տուեալ այս, ոչ լինի լնուլի խնդութիւն · բայց է, դեռ

կենդանի է յիս հին մարդն ,
չև է բոլորովին 'ի խաչ ե-
լեալ և ոչ կատարելապէս
մեռեալ : Դեռ բուռն ցանկայ
հակառակ հոգւոյ · պատե-
րազմունս յարուցանէ ներ-
քինս , և չթողու թագաւո-
րութեան հոգւոյ կալ յան-
դորրու : Այլ դու որ տիրես
զօրութեան ծովու , և զձայն
ալեաց նորա ցածուցանես ,
արի օգնեա ինձ : Ցրուեա
զհեթանոսս՝ որք կամին ընդ
պատերազմ · խորտակեա ըզ-
նոսա զօրութե̃ քով : Ցոյց
զմեծամեծս քո , և փառա-
ւորեսցի աջ քո : Զի չէք իմ
այլ յոյս և ապաւէն բաց 'ի
քէն , տէր ա̃ծ իմ :

## Ս. ԵՓՐԵՄԻ հայցուածք կա-րեւորք:

Ծագեա, տէր, առաւօտ խաղաղութեան սրտի իմոյ. և զցաւագին գիշեր և զխաւար մեղաց 'ի մտաց իմոց հալածեա. և մարմնոյ իմոյ շնորհեա զարխական վարս՝ առաքինութե̅ կեալ 'ի հաճոյս կամաց քոց:

Զարթո՛ զիս, տէր, յահագին խորութե̃ քնոյ մեղաց իմոց. և զտկարացեալ մարմինս իմ զգաստացո՛ յա̃մ գործս բարիս խորհել միշտ, և մեծաւ երկիւղիւ առնել զհաճոյս քո յա̃մ ժամ:

Առաքեա, տէ՛ր, զհրեշտակ խաղաղութ՟ն քո վերակացու և պահապան անձին իմոյ. և որպէս ետուր իշխանութ՟ն գնալ 'ի վերայ իժի և քարբի, և կոխել զա՟մ զօրութ՟ս թշնամւոյն, աներկիւղս արասցես զմեզ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն, և պահեսցես որպէս բիբ ական ընդ հովանեաւ թևոց քոց:

Յորժամ երթայցեմ, տէ՛ր, 'ի ճանապարհի, մի՛ թողուր զիս միայն. այլ առաքեա զօգնութ՟ն քո զհետ իմ, պահել զիս յա՟մ փորձութ՟ց սատանայի 'ի տուէ և 'ի գիշերի, և մի՛ տալ թոյլ մեղանչել յողդողդ և թոյլ մը-

տաց իմոց. այլ կոծել զկոծ մեծ 'ի վերայ մեղաց և անօրէնութեանց իմոց:

Պաշտեա զիս, տէր, 'ի բանից և 'ի գործոց և տեսուե̃ց գերիչ խորհրդոց, և զերկիւղ դատաստանի քո տպաւորեա 'ի սրտի իմում, անզբաղ յօժարութեամբ փութալ պաշտել զպատուիրանս քո:

---

Յոյս իմ 'ի մանկուէ̃ իմմէ, մի թողուր զիս տէր ա̃ծ իմ: Յոյս իմ 'ի ժամանակի ծերուԹե̃ իմոյ, մի թողուր զիս տէր: Յոյս իմ 'ի միւսանգամ

գալստեանն քո, մի անտես առներ զիս տէր ա̃ծ իմ:

Առ քեզ ապաւինիմք ամենասրբուհի, գերագոյն և հրաշալի և բաշխող բարութե̃ց, աղբիւր ես ծարաւեաց և հանգիստ աշխատելոց, և եղեր վերընկալ աստուածային բանին:

Ի քեզ անկայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես ա̃ծ իմ:

Տուր զօրութի̃ն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քոյ, և արա առ իս նշան բարութե̃ :
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս:

ԱՂՕԹՔ

# ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ

# ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

*Նախ քան զխոստովանութիւնն ։*

*Ահաւասիկ տէր իմ Յ՜ս Ք՜ս միայն յոյս փրկութեան իմոյ, 'ի ձեռն նշուլից շնորհաց քոյ ծանեայ՝ զի մեղուցեալ եմ առաջի մեծի աստուածութեան քո ։ Մեղայ ար-*

դարեւ ընդդէմ ստեղծողին իմ, մեղայ ։ Մեղայ ընդդէմ փրկչին իմ մարդասիրի, մեղայ ։ Մեղայ ընդդէմ շնորհաղարդողին հոգւոյս իմ, մեղայ ։ Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի ։ Զղջամ և ցաւիմ 'ի վերայ ամ մեղաց իմոց, որովք դառնացուցի զքեզ զծովդ ամ քաղցրութեան ։ Գթա յիս աղաչեմ 'ի մեղուցեալ ծառայս քո, զոր անչափ բարերարութեամբ ըստեղծեր և անձառ մարդասիրութք փրկեցեր ։ Եւ թող ինձ զանօրէնութիս իմ, զոր ինձէն գիտեմ, և 'ի միտ առեալ զնոսին՝ ցաւիմ 'ի սըր-

տէ. և յուսով ողորմութեան քո առաջադրեմ խոստովանել ամբողջապէս, և ապաշխարել ըստ կարի, և ուղղել զվարս իմ օգնականութեամբ շնորհաց քոց: Ընկալ զիս աղաչեմ վերստին 'ի շնորհս և 'ի սէր քո՝ բարեխօսութե̃ ամենօրհնեալ մօր քոյ Մարիամու միշտ կուսին, և համօրէն սրբոց քոց, 'ի փառս անճառելի ողորմութե̃ քո, և 'ի պատիւ կենդանարար խաչի և մահուան քո. ամէն:

Ընդ անառակին արդեօք գոչեմք առ Հայրդ գթած, մեղաք յերկինս և առաջի քո

քաւիչ յանցանաց, եւ ընդ-առաջ սիրով, դրկեա համ-բուրիւ. մաքրեա զմեզ 'ի մե-ղաց մերոց:

Զմեղս իմ ցուցից քեզ Քն, որ բժիշկդ ես հոգւոց և տէր կե-նաց. բժշկեա և զիմ զհիւան-դութիւնս, որ միայնդ ես բազ-մագութ:

Որ գիտակդ ես գաղտնեաց մարդկան հոգիդ սուրբ տէր և կենդանարար, ընկալ զա-ղաչանս մեր:

Մարիամ կոյս անարատ, զա-նապական փեսայդ աղաչեա, զի հաշտեսցի ընդ սուրբ ե-ղեալ հոգիս, և միաւորեսցի դարձեալ սիրով ընդ հեռա-ցեալս 'ի նմանէ:

Աղաչեմ զքեզ սուրբ հրեշտակ իմ՝ բարեխնամ պահապան անձին իմոյ, և ա՟մ սբ՟ք իմ · հայցեցէք 'ի տեառնէ օգնական լինել ինձ՝ բարւոք առնել զայս խոստովանութիւնս իմ, և ընդունել զթողութիւն մեղաց և զշնորհս 'ի փառս տեառն, և 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ · ամէն :

Ս· Եփրեմի յայն հատուածոյ :

Նայեա, տէր, 'ի փրկութիւն անձին զոր կողոպտեաց թշնամին · և այժմ խայտառակ և ամօթալի կամ առաջի քո, մարդասէր : Զգեցո ինձ հանդերձ հարսանեաց · մեծ և

ուրախացո 'ի կոչումն բաղ-մնլոյ քոյ:

Ջգեցո ինձ, տէր, զպատմուճանն առաջին զոր մերկացայ մեղօք իմովք. ցոյց զանոխակալութիւն քո յիս, և լուսափայլ ողորմութբ̅ քո զարդարեա զմերկութիւնս իմ:

Լուր, տէր, աղաղակի անառակիս՝ որ ամօթով կամ առաջի քո. զգանձն հայրենի վատնեալ և սովամահ կորնչիմ: կերակրիչ, հաւասար եղէ խոզից անասնոց և անբանից և նմանեաց նոցա:

Մի զրկեր զիս, տէր, 'ի հայրական գթոյ քո. համարձակիմ 'ի գութ տղեաց

քոյ. 'ի ծնողէդ վերջացայ և զորդիութիւն իմ ուրացայ: Մե֊ և ղայ յերկինս և առաջի քո. չեմ արժանի կոչել որդի քո, արա զիս իբրև զմի 'ի վարձ֊կանաց քոց:

Զարդարեա զիս, ով, մե֊ծաւ երկիւղիւ քո, և դարձո յանառակութենէ յարդա֊րութիւն, յաղտեղութ̃է 'ի սրբութ̃ն, 'ի ծուլութենէ 'ի զգաստութ̃ն, ժուժկալութ̃ և համբերութեամբ գնալ զճանապարհս քո անդա֊դար:

Զգութ սիրոյ քո միաւո֊րեա յիս, տէր, և զարգե֊լեալս 'ի բանտի յանցանաց արձակեա. զկապ մեղացն

խղեա, և յարդարութեան ճանապարհն ինձ առաջնորդեա. զտեղի յարկի քո պատրաստեա, և ընդ նոցա վկայիցն զիս պսակեա:

Աղօթք յետ խոստովանութեան :

Ամենախնամ ամենակալ տէր իմ Յ̃ս Ք̃ս, հայցեմ յանչափ մարդասիրութենէդ, զի որ ինչ պակասութիւնք եղեն յինէն անգիտութ̃ե և ակամայ յայսմիկ խոստովանութե, լցուսցես ողորմութիւն քո և հեղումն արեան քո 'ի խաչին : Եւ հաճեսցիս պահպանել զիս յերկիւղ քո սուրբ, և 'ի սէր ա̃ծութեան, և 'ի շնորհս

հոգւոյդ սրբոյ ։ Որպէս զի մի եղիցի ինձ դարձեալ մեղանչել ընդդէմ մեծվայելչութեան քում. այլ սիրել զքեզ միշտ, և 'ի ծառայութեան քում մնալ յայսմ հետէ մինչև յաւիտեան. ամէն։

Ս. Եփրեմ աղերս առ Աստուած։

Ընկալ, տէր, զզղջումն խոստովանութեան իմոյ, զհառաչումն ապաշխարութեան. և ջնջեա զանթիւ զանօրէնութիւնս տմարդութեան իմոյ։ Զի տկարացայ ի բերել զմարդ, մեղայ և անկայ 'ի խորս չարեաց։ Գթա և քա-

ւեա, և յարո իբրև զած և
թեթևացո, և կանգնեա յա-
ներևոյթ գլորմանէ, և ըն-
կալ զսուղ ապաշխարութի
ապաշխարութե իմոյ, մար-
գասէր. և թեթևացո զծան-
րութիւն մեղաց իմոց զոր
մեղայ քեզ, բարերար: Քո
եմ գործ ձեռաց, մի անտես
առներ զիս, ողորմած. որ
առ քեզ զաչս 'ի վեր եմ ամ-
բարձեալ 'ի մաղթել զձեռս
մոացս տարածեալ աչացս,
և ծունր իջեալ պաղատա-
նօք զմեղս իմ խոստովանիմ
առ քեզ և աղաչեմ ողբա-
լով. Հայր մեղայ յերկինս և
առաջի քո, քաւեա զանօ-
րէնութիւնս իմ ողորմած:

Եւ մի՛ այլ ևս թողուր զիս 'ի պատուիրանս քո մեղանչել, բարերար. այլ շնորհեա ինձ առ քեզ պաղատել ապաշխարութեամբ, պաղատանօք և ջանիւ աղօթից, անդադար հառաչմամբ և գորովագութ ողորմ ողբալով առ քեզ հանապազ արտասուել, աղաչել և խնդրել մեղաց թողութիւն. զի կարող ես յա̃մի մարդասիրութեամբ քո:

Բարձր առնեմ զքեզ տէր զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս: Տէր ա̃ծ իմ, կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս, տէր

հանէր 'ի դժոխոց զանձն իմ։ Որպէս սաղմոս ասասցէն քեզ փառք իմ, և այլ մի ես զղջացայց՝ տէր ած իմ, յաւիտեան խոստովան եղէց քեզ։

Աղօթք նախ քան զհաղորդութիւնն ։

Տէր իմ և ած իմ Յս Քս, ծայրագոյն սիրելի հոգւոյ իմոյ։ Գթա յիս աղաչեմ 'ի մեղուցեալ ծառայս քո, և արդեամբ չարչարանաց և մահուան քո մաքրեա զսիրտ իմ յամ երկրաւոր ըղձից և ախտաժանաց․ որպէս զի կարացից արժանապէս ընդու-

նել զամենասուրբ զահաւոր խորհուրդ մարմնոյ և արեան քո : Քանզի Ճշմարտապէս հաւատամ զի դու առաջիկայ ես յամենասուրբ խորհուրդս յայս՝ յս̃. քս̃ ա̃ծ և մարդ. և կամիս զի ընկալայց զքեզ 'ի հոգի իմ, և սիրով միացայց ընդ քեզ : Փոխակերպեա զիս աղաչեմ սովաւ 'ի քեզ միաւորութեամբ սիրոյ . որպէս զի յայսմ հետէ 'ի քեզ և վասն քոյ կեցից մինչև 'ի կատարած կենաց իմոց , միշտ սիրելով զքեզ 'ի վեր քան զա̃մ, և ծառայելով մեծ վայելչութեան քում. ամէն :

ժողովեալքս 'ի քէն հայցեմք ընդ ժողովեալ մետասանին, որ զկենարարդ քո մարմին բաշխեալ եստուր ընդ բաժակին. շնորհեա և մեզ տէր ընդ նոսին, հաղորդ լինել քում սեղանին, կենաց հացիդ յոր փափագեմք, և ըմպելոյդ ում ծարաւիմք ։ Մաքրեա զմիտս և զխորհուրդս, զի և մեք հաղորդեացուք սրբութեամբ ընդ ս̃ց քոց առաքելոցն այսօր 'ի ս̃բ վերնատունն, աղաչեմք փըրկիչ ողորմեա ։

Ծառ կենաց որ զանմահութ̃ն պտուղն 'ի քէն եստուր նախնոյ մօրն Եւայի 'ի մահաբեր երկանց ազատելով, բարե-

խօսեա առ տէր վասն մերոյ փրկութեան:

### Աղօթք առ Յս պատարագեալ:

Եւ ցո՞ր վայր, փրկիչ իմ Յս, սէր քոյին եհաս, մինչև մարմնով քով և պատուական արեամբ պատրաստել առաջի իմ սեղան և տալ ինձ դեղ բովանդակ: Յայսքան գութ սիրոյ ո՞ դեղ էած, բայց սիրելի սիրտ քոյին. ո՜վ երկրպագելի սիրտ իմոյն Յսի, հնոց հրաբորբոք ածային սիրոյն, ընկալ զհոգի իմ յամենասուրբ վէրս քո, զի ՚ի վարժոցի անդ սիրոյ ուսայց փոխադարձել իս

խմոյ սէր՝ որ այսպիսի գթա-
ւական անհասանելի զսիրոյն
իւրոյ ետ ինձ. ամէն:

[illegible] ,
[illegible] :

[illegible]
[illegible] :

Հաւատամ տր օգնեա ան-
հաւատութեանս իմոյ :

Ի քեզ տէր յուսացայ՝ մի
ամաչեցից յաւիտեան :

Տէր և դու գիտես , զի սի-
րեմ զքեզ :

Աստուած , քաւեա զիս ըզ-
մեղաւորս :

Տէր չեմ բաւական եթէ
ընդ յարկաւ իմով մտցես :

Աղօթք յետ հաղորդութեան ։

Յս̃ Քս̃ յոյս անմահութեան, և երանութիւն յաւիտենական. շնորհակալ եմ զքէն յաղագս անչափ սիրոյդ, որով հաճեցար գալ բնակել 'ի յիս յանարժան ծառայս քո ։ Ես հայցեմ 'ի քէն խոնարհութբ̃, զի ջերմեռանդութեամբ ամենաքաղցր սիրոյ քոյ բորբոքեսցես զսիրտ իմ, և մաքրեսցես և ձգեսցես առ քեզ զզգայութիւնս իմ ։ Որպէս զի սիրով քով բոլորովիմբ վառեալ՝ մոռացայց զիս գլխովին, և զունայնութի̃ կենցաղոյս, և միայն զքէն

խորհեցայց ,քեզ միայն փա-
փագեցայց , և ընդ քեզ միայն
կատարելապէս եղէց միա-
ցեալ հոգւով: Եւ զա̃մ ըղ-
գործս իմ 'ի փառս և 'ի գո-
վեստ անուան քո կատարե-
ցից խոնարհութ̃բ և հնա-
զանդութ̃բ , սիրով և բեր-
կրութեամբ: Եւ դու միայն
եղիցիս միշտ յոյս իմ, մեծու-
թիւն իմ, իմաստութիւն իմ,
զուարճութիւն իմ , ուրա-
խութիւն իմ, հանգիստ իմ,
ապաւէն իմ , օգնական իմ,
բաժին իմ , և ժառանգութի̃
իմ, յորում հանապազ բնե-
ռեալ և հաստատեալ լիցի
միտք իմ և սիրտ իմ: Եւ մի
երբէք թոյլ տացես ինձ 'ի

մահուչափ մեղս ինչ անկա֊նել՝ և լքանել յերեսաց քոց, որ ես կեանք հոգւոյ իմոյ : Որպէս զի միշտ քեզ ծառա֊յելով փառաւորեսցես զքեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ ս՟բյ յաւիտեանս . ամէն :

Այլ աղօթք գոհութեան՝ Թովմայի առաքելոյ ասացեալ :

Մարմին քո պատուական լիցի ինձ ՚ի կեանս , և սուրբ արիւն քո ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց իմոց : Եւ փոխանակ լեղւոյն զոր ար֊բուցին քեզ վ՟ մեր՝ բարձցի ՚ի մէնջ լեղութ՟ի թշնամւոյն : Եւ վասն քացախոյն զոր ձա֊

շակեցեր վասն մեր՝ զօրացո տկարութիւնս մեր: Եւ վասն Թքոյն զոր առեր վասն մեր, ընկալցուք մեք զցօղ անմահութեան: Եւ վասն հարուածի եղեգանն՝ զոր հարար վասն մեր, ընկալցուք զկատարեալ զկեանս քո: Եւ ընդ փշեղէն պսակին զոր եդին 'ի գլուխ քո վ՟ մեր, ընկալցուք մեք զանթառամ պսակ սիրոյ քո: Եւ փոխանակ պատելոյն զքեզ պատառակալաւ վասն մեր, զօրութ՟ քով պնդեսցուք մեք 'ի սէր ած՟ութ՟ քո: Եւ փոխանակ մահուան քո՝ կենդանացուսցես զմեռեալս մեղօք: Եւ զի թաղեցար 'ի նոր

գերեզմանի, ընկալցուք մեք դարձեալ զնոր յաւիտեանն՝ որ 'ի քէն եղև: Եւ վս̃ յարութե̃ քո որ 'ի մեռելոց եղև, զի և մեզ եղիցի յարութիւն 'ի կեանս ն̃ր և անմահ: Եւ ընդ արդար դատաստանաց քոց՝ լիցուք փրկեալք յաններելի տանջանաց:

Գոհութի̃ս այս եղիցի մեզ 'ի կեանս և ուրախութի̃, առողջութիւն հոգւոց և բժըշկութիւն մարմնոց, և 'ի թողութիւն մեղաց, և 'ի փառս քո ք̃ս ա̃ծ մեր, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յա̃ծային կայծակունսն 'ի սրովբէից անհպելին, ան-

մաքրապէս մերձեցաք գո՛ղ պարտապան քում խորհըրդոյ . շնորհեա զնոյն մաքրութեամբ՝ ի Թողութիւն մեղաց մերոց ։

### Այլ աղօթք ։

Հոգի քնի սրբեա զիս։ Մարմին քնի փրկեա զիս ։ Արիւն քնի արբո զիս ։ Ջուր կողին քնի լուա զիս ։ Չարչարանք քնի զօրացո զիս ։ Ով բարի Յն լուր ինձ , և մի Թողուր զիս ։ Ի նենգութենէ չարին պահեա զիս , և՝ ի ժամ մահուան իմոյ կոչեա զիս . մերձ առ քեզ դիր զիս ։ Ընդ. հրեշտակս քո օրհնեսցես զքեզ

յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

---

Լցաք 'ի բարուեց քոց տէր Ճաշակելով զմարմին քո և զարիւն · փառք 'ի բարձունս կերակրողիդ զմեզ ։ Որ հանապազ կերակրես զմեզ՝ առաքեա 'ի մեզ զհոգևոր քո զօրհնութիւն · փառք 'ի բարձունս կերակրողիդ զմեզ ։

Գոհանամք զքէն ամ՟ որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քո , բաշխելով զմարմին և զարիւնդ 'ի փրրկութիւն աշխարհի , և կեանք անձանց մերոց ։

Ծառ կենաց անկեալ յա-
դին ոչ կոյս՝ որ զհայրածինն
բղխեցեր զծաղիկ և ետուր 'ի
ժամու զորդին պտուղ մարդ-
կան, զորոյ զմարմինն Ճաշա-
կեալ անմահացաք յուսով.
վասն որոյ օրհնաբանեմք ըզ-
քեզ յաւուր քո ծննդեան:

Որ վառեցար 'ի յարփւոյն
եւ ոչ կիզար ըստ մորենւոյն,
այլ ետուր զհացն կենաց կե-
րակուր բանաւորաց. բարե-
խօսեա առ քո ջնջել զգիր մե-
ղաց մերոց:

Հանգանակ հաւատոյ ։

Հաւատամք 'ի մի Աստուած հայրն ամենակալ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից ։ Եւ 'ի մի տէր յն̅ քն̅ յորդին աստուածոյ ծնեալն յա̅յ հօրէ միածին, նախ քան զա̅մ յաւիտեանս ։ Ա̅ծ յա̅յ, լոյս 'ի լուսոյ․ ա̅ծ ճշմարիտ յա̅յ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած ։ Նոյն ինքն համագոյակից հօր, որով ա̅մ ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք ։ Որ յաղագս մեր մարդկան և վ̅ն մերոյ փրկութեան իջեալ 'ի

յերկնից մարմնացաւ, մար-
դացաւ, ծնաւ կատարելա-
պէս 'ի Մարիամայ սբյ կու-
սէն հոգւովն սրբով: Որով
էառ մարմին, հոգի, միտս,
և զամենայն որ ինչ է 'ի
մարդ՝ ճշմարտապէս և ոչ
կարծեօք: Չարչարեալ, խա-
չեալ, թաղեալ, յերրորդ աւ-
ուր յարուցեալ, ելեալ 'ի
յերկինս՝ նովին մարմնովն
նստաւ ընդ աջմէ հօր: Գա-
լոց է նովին մարմնովն և փա-
ռօք հօր 'ի դատել զկենդա-
նիս և զմեռեալս, որոյ թա-
գաւորութեն ոչ գոյ վախ-
ճան: Հաւատամք և 'ի սուրբ
հոգին յանեղն և 'ի կատա-
րեալն որ 'ի հօրէ և յոր-

դւոյ բղխի: Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս , որ էջն 'ի յորդանան , քարոզեաց զառաքեալսն, և բնակեցաւ 'ի սուրբսն : Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի . 'ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն , 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց : Ի յարութիւն մեռելոց : Ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց : Յարքայութիւն երկնից և 'ի կեանսն յաւիտենականսն ամէն :

---

Լուսով աստուածութեան քո քրիստոս լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի, պահեա զնա անշարժ յաւիտեան:

Ի մշտնջենաւոր քո լերանց օրինադրեցաք փառաւորել ո̃ք զերրորդութիւնդ Թագաւ-ւոր յաւիտենից:

Պահապան խնդրեմք 'ի քէն քո̃ մի անտես առներ, այլ շնորհեա խնդրողացս 'ի քէն զամենայաղթ զօրութիւն ո̃ք խաչին քո յօգնութիւն անձանց մերոց: Եւ մի տար սասանուէ զոտս մեր փրկիչ, այլ ամրա-ցո հաստատուն հաւատով յանձինս մեր զյոյս զսէր և զհաւատս մինչև յաւիտեան:

Աղբերացուցես 'ի մեզ զշը-
նորհս քո զողորմութեան , տէր
ա՟ծ խոստովանեսցուք հաւա-
տով սուրբ զերրորդութիդ՝
զհայր և զորդի և զսուրբ ըզ-
հոգիդ յաւիտեանս. ամէն:

Թագաւոր երկնաւոր, որ
զԹիւ սրբոց քոց բարեգթու-
թե՟բ լցեր , զմիաբանութիւնս
մեր օրհնեա, զի մի՛ ոք օտարեալ
'ի բանսարկուէն ելցէ ար-
տաքս 'ի կորստական բաղա-
նիան. Ճգնութե՟բ ն՟ցն մաղ-
թեսցուք զհաշտութիւն ան-
ձանց:



### ԱՂՕԹՔ

# Ի ԺԱՄ ՄՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Հառաչանք առ Քրիստոս Յիսուս:

Գառն Ա͞յ՝ տէր իմ և Ա͞ծ յ͞ս. ք͞ս, որ զենար ՚ի վերայ խաչին և բարձեր զմեղս աշխարհի: Մեղուցեալ ծառայս և ծանրաբեռնեալս յանցանօք՝ անկեալ աղաչեմ զքեզ տէր իմ և Ա͞ծ իմ:

Ողորմեա ինձ, որպէս ողոր-
մեցար համօրէն աշխարհի,
զի դու ես յոյս և լոյս աշ-
խարհի, ճանապարհ և ճըշ-
մարտութիւն և կեանք: Զմա-
հացեալս մեղօք և զանօրի-
նեալս յանցանօք մի անտես
առներ, այլ ողորմեա ինձ
վասն ամ͞ անօրինական կրից
քոց, որոց առար համբե-
րութ͞բ բազմաւ: Յիշեա ա-
մենակեցոյց տ͞ր, զիջումն քո
'ի հայրական ծոցոյն, և ըզ-
մարմնանալն 'ի սրբոյ կուսէն
Մարիամայ: Յիշեա ամենօրհ-
նեալ տէր՝ զշրջելն քո իբրև
զմարդ 'ի մէջ մեղաւորաց
մարդկան: Յիշեա ամենա͞ք
տէր՝ զմկրտելն քո 'ի Յորդա-

նան 'ի Յովհաննէ ։ Յեշեա ամենագէտ տէր՝ զգարովանսն 'ի դպրացն և զփորձանսն 'ի փարիսեցւոցն ։ Յիշեա յառաջատես տէր՝ զմատնիլն 'ի Յուդայէ , և զքամահելն 'ի քահանայից ։ Յիշեա ամենազօր տ͞ր՝ զըմբռնիլն 'ի սպարտիզին , և զձեռնակապիլն 'ի խուժանէն ։ Յիշեա ամենակարող տէր՝ զկալն առաջի Կայիափայի , և զհարցումն 'ի յԱննայէ ։ Յիշեա անոխակալ տէր՝ զապտակն 'ի ծառայէն , և զկռուփն 'ի կատաղեացն ։ Յիշեա երկայնամիտ տէր՝ զթուքն 'ի յերբայեցւոցն , և զծեծն եղեգամբ ։ Յիշեա արքայ ար-

քայլից՝ զկապանօք կանգնիլն 'ի յատենին Պիղատոսի, և զգանիլն 'ի նմանէ ։ Յիշեա անմատոյց լոյս՝ զքղամիդն կարմիր, և զպսակն փշեղէն ։ Յիշեա անյիշաչար տէր՝ զժամն զայն, յորժամ բարձեր զխաչափայտն կենսաբեր ուսովդ։ Յիշեա բարձրեալ՝ զբարձրանալն քո 'ի վերայ կենդանարմատ փայտին, և զպրապնդիլն բեւեռօք ։ Յիշեա մի մոռանար զպապաքումն ծարաւոյն, և զճաշակ լեղւոյն և քացախին ։ Յիշեա մի մոռանար զձայնն էլի էլի, և զխոցումն 'ի զինուորէն ։ Յիշեա մի մոռանար զհոսումն վարդա-

գոյն սուրբ արեանդ, և զխո-
նարհին ծածացեալ գլխոյդ:
Յիշեա կենդանիդ յաւիտե-
նից՝ զթաղումն երեքօրեայ,
և զյարութիւնն ծածապէս,
և զհամբարձումն հրաշափա-
ռապէս: Յիշեա յիշեա յի-
շատակդ յաւիտենից զկո-
րուսեալս. քանզի վասն մե-
ղաւորիս յանձն առեր զայս
ամենայն ամենագութ տէր:
Արդ զայս ծմ ունիմ առ
քեզ միջնորդ և բարեխօս.
բազումողորմ ողորմեա ինձ,
և թող զամենայն յանցանս
իմ, և սրբեա 'ի մեղաց. ա-
զատեա յանվախճան վշտաց
գեհենէն, և տուր ինձ տե-
ղի յարքայութեանդ քում.

զի դու ես մարդասէր տէր։ Եւ քեզ ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Նուաէր սրբոյն առ Տէրն Յիսուս։

Երկրպագելի փրկիչ իմ Յս̃, սէր քո առ իս անցանէ քան զա̃մ միտս և զբան. դու առ 'ի նմանեցուցանել զիս քեզ՝ եղեր մարդ իբրև զիս, առ 'ի փրկել զիս 'ի յաւիտենական մահուանէ և 'ի դժոխոց՝ ետուր զքեզ 'ի մահ, և 'ի մահ նախատանաց և խաչի. առ 'ի զերծու-

ցանել զիս յարդարութենէ Հօր քո երկնաւորի՝ յանձն առեր լինել տիգախոց 'ի մ̃ջ սիրտ քոյին. և 'ի լուսն անճառ հրաշիցդ՝ զօրհնապաղ պատարագիս 'ի վերայ սեղանոյ, և տաս ինձ զքեզ 'ի կերակուր 'ի ո̃ւ հաղորդութեան: Սէր գերահրաշ, գորով ծայրագոյն. և զի՞նչ ընդ այսր մ̃ծի սիրոյ և բարերարութեան խնդրես յինէն արիտուր, բայց զսիրտ իմ. այլ զառ չեցեմ իսկ պարտականքեզ, ով սիրելի սիրտ Յ̃ի: Անկեալ աւասիկ յոտս քո՝ նուիրեմ զայն քեզ առաջի երկնի և երկրի, վկայ զնոսա կոչելով ուխտիս: Եւ

քանզի հաճիս, բարերար Աստուած, ընդունել ըզսիրտս զայս մեղապարտ և անարժան քան զա՟մ սիրտ, մատուցանեմ քեզ զայն 'ի նուէր. ահա կայ նա 'ի ստորոտ խաչի քո, թաթաւեալ յուղխից շնորհաց քոց, ողողեալ յարտասուաց և յարենէ քումմէ: Այլ աւա՜ղ, զի յոյժ անարժան է քեզ սա վիրալից և անսուրբ յայնքանեաց ախտից, ապականեալ յայնքանեաց մեղաց: Յիսուս փրկիչ իմ, նուիրեմ քեզ զսիրտ իմ, նուիրեմ և զամենայն զգայմունս սորա, զամենայն յօժարութիւնս և զիղձս: Ո՞ տայր ինձ զսիրտս

մարդկան առ հասարակ և զմայլութիւնս հրեշտակաց և երանելեաց առ 'ի նուիրել քեզ զայնս, իսկ ես չունիմ, տէր, բայց 'ի միջէ սատի սրտէ, և տամ քեզ զէթ զսա բոլորանուէր: Ո՛հ, եթէ խստիւ արդարութեան քո զիս դատէիր, խորասուզեալ գտանէի արդ 'ի հուր դժոխոց. իսկ դու կամիս իսկ՝ զի երկնային հրով սիրոյ քո բորբոքեցայց, կամիս իսկ տալ ինձ տեղի 'ի գորովագութ և յամենողորմ սըրտի քում: Ընկալ ապա, փըրկիչ իմ Յ՟ս, զսիրտ իմ, և արա զսա արժանաւոր քեզ. տուր ինձ սիրտ ն՟ր և խո-

նորհ, սիրտ շնորհակալու-
պարտեաց քոց, սիրտ զղջա-
ցեալ ընդ մեղս իւր, սիրտ
հաւատարիմ առ շնորհս քո,
սիրտ հնազանդ պաշտելի կա-
մաց քոց, լցեալ հոգիա-
ցեալ և վառեալ սիրով քով:
Ընկալ զսիրտ իմ, կամ մա-
նաւանդ առ զայն քեզէն․
այլ յառնուլ քո զայն, մի՛
ես տացես 'ի բաց: Բազում
անգամ ետու քեզ զայն,
այլ առի ապա թշուառա-
բար 'ի բաց՝ յափշտակելով
աշխարհի զայն 'ի քէն: Պահ-
պանեա զայն 'ի սպառ, ծած-
կեա զայն 'ի քումդ սրտի·
յայսմ իսկ օրէ և յամ ա-
ւուրս կենաց իմոց, 'ի մա-

հու. իմում և ընդ ամենայն յաւիտեանս լիցի՛ նմա սիրել ևեթ զքեզ, ա̃ծ իմ, օրհնել և փառաւորել. ամէն:

Սիրտ իմ առ քեզ աղաղակէ Բանդ որ ընդ Հօր 'ի սկզբանէ, որ կամաւոր վասն մարդկան կրեցեր մարմնով զայս ա̃մ. ինձ լսելի արա զձայն յարքայութեանդ քո կոչման, ընդ ժողովոց անդ անդրանկացն օրհնել զքեզ միշտ յաւիտեան:

Ս. Գրիգորի Նարեկացւոյ մաղթանք առ Յիսուս յիշատակա- տէրունեան պատարագի

Արեգակն արդար, ճառագայթ օրհնեալ, լուսոյ կերպարան, փափագ անձկութեան, բարձրեալ անքնին, զօրեղ անպատում, բարւոյ բերկրութի՛ն, յուսոյ տեսութի՛ն, գովեալ երկնաւոր, թագաւոր փառաց, քո արարիչ, խոստովանեալ կեանք: Եւ արդ զթերութի՛ն վրիպանաց բազմախառն ձայնի եղկելոյս ամենազօրդ բանիւ լցեալ մատուցես յաղերս հաճութեան հօր քում բարձրելոյ:

Որ վասն իմ՝ ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութիւն, ամենևին կենաց օրհնութիւն, վերնոց և ներքնոց բարեխնամող տեսուչ համայնից: Զի թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ՝ ած և տէրդ բոլորեցուն, ո՛րչափ հաճեսցիս առաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ազգակցաւ մարմնոյդ առելոյ 'ի մէնջ՝ առ համապատիւդ քո հայր: Եւ վասն արեանդ պատուականի միշտ մատուցելոյ 'ի հաճութեն կամաց արարչիդ՝ բարձցին վտանգք մեղուցել դատապարտելոյս. Թողցին

պարտէզքն , ապաքինեցի ա-
մօթն , մոռացին պատկա-
ռանքն, բարեգործեցին դա-
տակնիքն , սատակեցին ու-
դունքն , վերացի լոյն, հան-
դարտեցէ կրճումն ատա-
մանցն , սպառեցին ողբքն ,
հատցին արտասուքն , մեր-
ժեցի սուգն , հալածեցի
խաւարն , վանեցի հուրն
սատակութեան , հերքեցին
տանջանարանքն բազմօրի-
նակք : Նկեցեն գթութիք
կամօղիդ և պարգևօղիդ կե-
նաց ամենից, ծագեցի լոյսդ,
արագեցէ փրկութինդ ,
հասցէ օգնութինդ , ժամա-
նեցէ այցելութինդ · կան-
խեցէ ցօղդ ողորմութեան ,

յառաջեսցէ արբուսցէ զան-
դաստանս պայքեալ՝ ան-
կեալ ոսկերացս թշուառու-
թեամբ՝ ՚ի վիհն մահու. ծաղ-
կեցուսցէ պտղաբերեսցէ բա-
ժակդ երկնաւոր արեան կե-
նարարիդ զերկիրս խնամեալ
աւուրն լուսոյ, որ անծա-
խապէս միշտ պատարագիլ յի-
շատակ կենաց փրկութեան
հոգւոց ննջեցելոց: Զի ա-
մենայնիւ մահացեալ հոգիս
մարմնովս մեղաց՝ շնորհօք քո
գթած, ՚ի քեզ զօրացեալ քև
նորոգեսցայց, զատեալ ՚ի մե-
ղաց անմահ կենդանութե̃ ՚ի
յարութեանն արդարոց, հօր
քումօրհնեցեալ: Ընդ որում
քեզ փառք, և հոգւոյդ սըր-

բոյ բարեբանութիւն վայելչական գոհութեամբ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։ ղբ .

### Ս . Ներսէսի Շնորհալւոյ առ սուրբ խորհուրդն ։

ա. Լոյս ճշմարիտ և ճառագայթ Հօր , ծագումն և կնիք, բան և ծնունդ ։ Որ կանգնեցեր յեօթեանց սեանց զեկեղեցի սուրբ , ածեալ 'ի սպանդ զեզն պարարակ ։ Շնորհեա մեզ կերակրել յիմաստութե̃ սեղանոյ քում . ողորմեա ։

բ. Հաց կենաց և անմահութեան ճաշակ , սուրբ և ան-

Ճառ սոսկալի խորհուրդ : Որ 'ի յերկնից իջեր կենդանութիւն մարդկան՝ կենդանի և կենդանարար : Պարգևեա քաղցելոցս զքաղցրութիւն քում Ճաշակումն . ողորմեա :

ժէ . Դուռն երկնից , և Ճանապարհ արքայութեան , որ երկնի , 'ի յերկնայնոցն օրհնեալ դասուց : Որ զմարմին քո և զարիւնդ անապական բաշխեցեր առաքելոցն : Մաքրեա զմեզ հաղորդիլ սրբութեան քում խորհրդոյ . ողորմեա :

ժը . Բան հօր և քահանայապետ սուրբ , յանմարմնոցն գովեալ 'ի բարձունս : Որ 'ի

վերայ խաչին պատարագեալ մարմնով հեղեր զարիւնդ 'ի փրկու̃ն։ Սրբեա զմեղս մեր կենարար և փրկական քաւիչ քո արեամբդ. ողորմեա։

Ե. Վէմ հոգևոր և գլուխ անկեան օծեալ, բարեբանեալ 'ի հրեշտակաց։ Որ 'ի խաչին բացեր զկողահոս աղբիւրդ, զանմահութեան ցօղեալ տխեղերաց։ Արբո և մեզ ծարաւեացս զբաժակ քո փրկութեան. ողորմեա։

Զ. Գառն այ̃ զենեալ միշտ, և կենդանի, անմեղ եկեալ 'ի պատարագ։ Որ 'ի հաշտութ̃ն հօր պատարագեալ բառնաս զմեղս աշխարհի, յանմահից զօրաց փառաւո-

բեալ: Յիշեա զհօգիս հաւատով 'ի քեզ ննջեցելոյն մերոց. ողորմեա:

## Երգ առ Ս. Հաղորդութիւն:

Մայր հաւատոյ սուրբ հարսնարան,
Եւ առագաստ գերադրական,
Տուն փեսային անմահական,
Որ զարդարեաց զքեզ անվախճան։
Երկրորդ Երկին դու հրաշական,
Փառօք ի փառս բարձրական,
Որ զմեզ ծնանիս լուսոյ նման,
Աւազանաւդ որդեգրական։
Բաշխես ըղհացդ մաքրական.
Զարիւն ըմպել աստ սոսկական.
Հանես ի վեր գերաստիճան,
Յիմանալեացըն զուգական։
Եկայք որդիք նոր սիոնի,
Առէք առ Տէր մեր սրբութեամբ.
Ճաշակեցէք և տեսէք,
Զի քաղցր է Տէր մեր զօրութեամբ։
Հին օրինակ քեզ և նման,
Դու խորանին գերադրական.
Նա խորտակեաց զգլուխս անզգամանց,
Դու դժոխոց զգլուխս ի հիմանց։

Նա բաժանեաց ըզյորդանան,
Դու զծով մեղաց աշխարհական.
Նըմա Ցեառն էր զօրական,
Եւ քեզ Յիսուս Հօր միական։
Հացս այս մարմին է Քրիստոսի.
Բաժակս արիւն նորոյ ուխտի.
Ծածկեալ խորհուրդըն մեծ յայսմնի.
Աստուած ի սմա մեզ տեսանի։
Սա է Քրիստոս բանն Աստուած,
Որ ընդ աջմէ Հօրըն բազմի,
Եւ աստ ի մեզ պատարագի,
Բառնայ ըզմեղըս աշխարհի։
Այն որ օրհնեալ է յաւիտեան,
Հայր և Հոգւովըն միաբան.
Այժմ և յաւէտ և յապագայն
Եւ անսպառ միշտ յաւիտեանս Ամէն։

## Ս. ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ ԱՂԵՐՍ ԱՌ ԽԱՉԵԱԼՆ ՅՍ։

Առ քեզ ակնարկեմ, աղբիւր ջրոյ կենդանւոյ, և աղաղակեմ, թէ ընդէ՞ր է ինձ որբուն ծարաւել, երբ դու

ես իմ սրբութիւն, կամ ընէր փափաքեմ մաքրութեն, մինչ դու ես իմ մաքրութին: Այսուհետև ունեալ, եթէ դու ես իմաստութիւն մեզ յայ տուեալ արդարութիւն և սրբութիւն, առ քեզ ծարաւիմ, քեզ փափաքեմ, քեզ տափամ· տուր իմ ծարաւեալ ոգւոյս զքեզ զովացումն՝ աղբիւր ջրոյ կենդանւոյ խաղացելոյ 'ի կեանսդ յաւիտենից: Ծարաւիմ ըմպել 'ի կրկին վտակաց կողից, որով և սրբեալ սիրով քո զմայլիմ: Քաղցնում ուտել զմարմինդ, որով կենդանացեալ անմահ ես լինիմ: Փափաքեմ ողջագուրել ըզ-

խոցուած ձեռացդ , որով հասեալ առ քեզ պսակիմ: Տափամ ակնարկել զդէմսդ , որոյ ապտակաւն ՚ի վերայ իմոյ բժշկիմ: Վաղվաղակի լուր ինձ տէր , զի նուաղեաց յինէն հոգի իմ: Նուաղեցաւ հոգի իմ՚ի քո անձկագնիրոյ: Տոչորեցայ յառ քեզ տափանոցդ ո՛վ վասն իմ խաչեալ: Թալկացայ , յորժամ առ քեզ ակնարկեմ ո՛վ վասն իմ ապտակեալ: Եւ աղաղակեմ՝ ցոյց ինձ զդէմս քո. լսեցո՛ ինձ զբարբառ քո. զի ձայն քո քաղցր է , և դէմք քո գեղեցիկ: Ե՞րբ եկից երևեցայց քեզ: Արդ լո՛ւր ինձ , և արբեցո՛ զիս վաղվա-

ղակի քո գիտութեդ և սի-
րով, զի և յինէն որ հաւա-
տամ 'ի քեզ՝ բղխեսցեն աղ-
բիւրք ջրոց կենդանութեան։

Աղբերացն անապականն որ
յետ մահուն անմահարար
բղխեալ 'ի քէն վտակ կրկին
'ի նորոգումն կողածնին.
բաց զբերան իմ յարբուցու-
մն քո արեան կենարարին.
լուա դարձեալ յաւազանին
թէ ոչ շնորհօք այլ արտա-
սուօք:

Աղօթք առ սուրբ Մարիամն Կուսի յորժամ քահանայն բարձրացուցանէ [illegible] ժողովրդեանն:

Երկրպագեմ քեզ Քն փըրկութին աշխարհի, բան Հօր՝ պատարագ կենդանի, Ճըշմարիտ մարմին անարատ աստուածութեն և կատարեալ մարդ. ոպ բերանով խոստովանիմ, նոյնպէս և հոգւով դաւանիմ և հաւատամ: Աղաչեմ զքեզ որդի սուրբ ած՝ տէր ամենակալ, շնորհել մեղաց իմոց թողութիւն, և տալ ծառայիս քո հոգի զգաստութեան, որ և փրկեցայց քև յաւիտենա-

կան հրոյն՝ վասն կամաւոր չարչարանաց քոց. զի դու ես Ճշմարիտ գառն ա̃յ, որ բաշխիս 'ի փրկութիւն ազգի մարդկան, և բառնաս զմեղս աշխարհի:

Հաւատամ յամենա̃ը եր-րորդութիւն, 'ի հայր և յոր-դի և 'ի սուրբ հոգին:

Հաւատամ Ճաշակեմ զո̃բ և զկենդանարար մարմինդ քո 'ի քաւութիւն և 'ի թողութի̃ն մեղաց իմոց: Հաւատամ ըմ-պեմ զանապական և զմեղա-քաւիչ արիւնդ քո ք̃ո 'ի թո-ղութիւն մեղաց իմոց:

Աղօթք 'ի տէր արփիւնն Քրիստոսի։

Արփիւն Քրիստ, արփիւն պատուական, գինք յաւիտենից կենաց, վարձք և փըրկանք տիեզերաց, արքունին և լուսայունին հոգւոց մերոց, որ բարեխօսդ ես միշտ վասն մեր մարդկան առաջի աթոռոյ ողորմութեանն քո, խորին խոնարհութեամբ քեզ երկիր պագանեմ, և ցանկամ փոխարինել ըստ կարի խմուռմ անարգանացն և թըշնամանաց՝ զոր կրես հանապազ 'ի մարդկանէ, մինաւանդ յորոց ժպրհէին հայհոյել զքեզ։ Նա զիարդ ոչ

օրհնեցից զքեզ, արիւն պատուական, գանձ անկշռելի. և զիա՞րդ ոչ բորբոքեցայց ՚ի սէր Յ͞ի՝ որ եհեղն զքեզ. զի՞նչ լինէի ես առանց փըրկելոյ նորա զիս քև: Ո՞ արար հեղուլ զքեզ յերակաց տեառն իմոյ ցվերջին շիթ. ո՜հ մարդասիրութիւն նորա աներկբայապէս: Սէր անհուն՝ որ պարգևեցեր մեզ զկենարարս զայս ըմպելի. ըմպելի անգին՝ բղխեալ յողբերէ անապատ սիրոյ, տուր զի ամենեցուն սիրտ և ամենեցուն լեզու օրհնեսցէ ըզքեզ, գովեսցէ և փառաւորեսցէ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

Դարձեալ 'ի սուրբ մարմին և յարեանն Քսի, աղօթք 'ի ժամ պատարագի :

*Զերևեալդ ինձ 'ի փրկուն խոստովանիմ ճշմարտապէս մարմին և արիւն Քսի այ յուսոյ իմոյ, և աղաղակեմ առ քեզ, մեղայ յերկինս և առաջի քո : Սրբեա զիս յամենայն պղծութենէ հոգւոյ և մարմնոյ : Շնորհեա ինձ ժամանակ և ցանկութիւն ապաշխարութեան : Փրկեա զիս յերևելի և յաներևոյթ թշնամւոյն : Տպաւորեա զօգուտն հոգւոյ և մարմնոյ իմոյ : Պարգևեա ինձ բարե-*

պաշտութե՜ և բարեգործութե՜ զքեզ արժանապէս ճաշակել, և կատարել զկեանս իմ՛ ի փառս հօր և որդւոյդ միածնի, և հոգւոյդ քո փառակցի, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

Աղօթք զկնի արձակման
պատարագին:

Տէր ա՜ծ օրհնեալ յաւիտեան, օրհնեա՛ հոգւով զամենեսեան: Զխաղաղութիւն տուր ա՜մ աշխարհի, պահեա՛ անչար և անսասան. բարձ զցասումն յարարածոց՝ զսով, զսրածութիւն, և զմահտարաժամ: Զեղբայ

րութիւնս մեր պահեա՛ ամբողջ, սիրով կեալ միաբան :

Զշինող սուրբ եկեղեցւոյս դասաւորեա՛ յաջակողմեան:

Զսպասաւորս և զուխտաւորս արժանացո ողորմուէ :

Զառաջնորդս մեր՝ զեպիսկոպոսս, զքահանայս, և ըզվարդապետս , զպաշտօնեայքըս եկեղեցւոյ՝ առ հասարակ զամենեսեան պահեա՛ անփորձ և անամօթ սուտ և յապայան յաւիտեան :

Ծնողս մեր յիշեա՛ , և այց արա նոցա , հան մասն և բաժին 'ի հանգստեան: Եւ որք եկաք աղօթեցաք , լե՛ր յա՟մ ժամ օգնական . փրկեա՛ 'ի հրոյն գեհենական , և 'ի յոր-

դանցն անքննական, և քեզ ընդ հօր և ս̃բ հոգւոյդ փառք և պատիւ, այժմ և յաւիտեան ։

Այլ աղօթք ։

Օրհնեալ ք̃ս որդին ա̃յ, որ պատարագեցաւ այսօր ընդ ա̃մ տիեզերս՝ հօր 'ի հաշտութիւն և մեզ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց ։ Մասն և ողորմութիւն պարգևեսցէ ք̃ս որդին ա̃յ՝ մեզ և մեր ծնողացն, և մեր երախտաւորացն, և ա̃մ հաւատացելոց կենդանեաց և ննջեցելոց ։ Եւ ինքն օրհնեալ ընդ հօր և ս̃բ հոգւոյն, այժմ

*և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից . ամէն :*

## Աղօթք առ սուրբ Երրորդու-թիւնն :

*Ո՛վ երրորդութիւնդ անբա-
ժանելի, զոր խոստովանիմ,
և որում երկիր պագանեմ:
Ո՛վ տէր կենաց և մահու,
ով առաւել խնամակալդ այ-
սըր ստեղծուածոյ՝ քան ա-
մենայն ստեղծուածոց: Ար-
ժանի արա զմեզ զամենե-
սեան մասին սրբոցն, որք սըր-
բութեամբ սիրեցին զքեզ:
Եւ շնորհեա մեզ աչալըրջու-
թեամբ և համարձակութբ
կալ առաջի աթոռոյ փառաց*

քոյ : Եւ տուր մեզ քոյով մարդասիրութեամբդ լսել խնդութե̃ զերանաւէտ բարբառն՝ եթէ եկայք օրհնեալք Հօր իմոյ՝ ժառանգեցէք ըզպատրաստեալն ձեզ զարքայութիւնն 'ի սկզբանէ աշխարհի : Որում արժանի եղեալ անպատում առագաստին յաւէժական ցնծութեանցն օրհնեսցուք, գովեսցուք և փառաւորեսցուք զամենա̃բ երրորդութիւնդ և զմի ա̃ծութիւնդ, զհայր և զորդի և զս̃բ հոգի յանեղը և յանզրաւ յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Ս. Ներսէսի Լամբրոնացւոյ առ Տէր Հայր։

Սաղարթեմք քո միածնիդ· դա որթ է, և մեք ուռ· դա գլուխ է, և մեք անդամք· դա քն̃ է, և մեք քրիստոնեայք· դա արուեստաւոր է, և մեք գործք։ Մի՛ անտես առներ, այլ հայեա՛ց առ մեզ ողորմութեամբ, և մշակէ՛ գթութբ̃· և սրբեա՛ զուռս որթոյդ քո ճշմարտի 'ի ժանգէ և յաղտոյ վիշապին, որպէս զի կարասցուք լինել քոյին տածեալդ պտղաբերք։ Ծաղկեցո՛ 'ի մեզ հաւատն, և հաստատեա 'ի նոյն·

և ազոխացո՛ 'ի մեզ զթթութիւն երկիւղին, և ջերմացո՛ զնոյն, և խայծեցո՛ 'ի մեզ զքաղցրութիւն սիրոյն, և ճաշակեա՛ զնոյն։ Եւ հա՛ր զմեզ 'ի հնձանդ երկնային, և զմայլեցո վերնովդ, և ամբարեա 'ի շտեմարանս քո, և զուարճակից արա։ Զի կերիցուք և արբցուք յարքայութեան քո, ըստ անսուտ խոստման միածնի քո, ըղխորհուրդս, որոց այժմ քաղցեալք՝ մնամք անճաշակ, և փափաքեալք՝ մնամք ծարաւի։ Ո՛վ մարդասէր՝ արա զմեզ փշրանաց վերին սեղանոյդ արժանի, որպէս ստորին սեղանոյն

փշրանաց զկենն քանանացի: Եւ քեզ փառք փառակից միածնաւդ և էակից սուրբ հոգւոյդ՝ 'ի մի իշխանութեդ և ա̃ծութիւն՝ օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Նորին առ Ցն̃ երկնէ:

Փրկութիւն դու ես յմ̃, և առ այլ ո՞ յենուցումք: Փորձանակից դու ես, և առ այլ ո՞ ապաւինեցուք: Ո՞չ տայն փորձութիւն քո է, և առ այլ ո՞ ապաստանեսցուք: Ողորմած դու ես, և զո՞ւմ այլ ուրից՝ նմին կարօտեալքըս բուռն հարցուք: Հայեաց տէր 'ի փորձեալքս և

կործանեալքս, 'ի մատնեալ-
քըս և չարչարեալքս, 'ի խո-
ցեալքս և գիշատեալքս, 'ի
յարբեալքս և յիմարեալքս։
Փրկիչ որ զփրկութիւն ու-
սուցեր խնդրել, քոյովս ըզ-
քեզ թախանձեմք. փրկեա
զգերեալքս յորսողէն, որ ես
օրհնեալ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն։

Նորին աղերս առ Յս՝ վասն հրա-
ժարելոյ 'ի վայելմանց աշ-
խարհի։

Տուր ինձ տէր յս̃ և ամենե-
ցուն քո հօտիս լքանել զա-
մենայն ինչ. և 'ի քո քաղց-
րութիւնդ հայել՝ զսակաւ

ընթացս նանիր կենցաղոյս ։ Ի սպառ բարձ՝ հան 'ի սրտէ իմմէ զաշխարհական ցանկութիւն, և վերածեալ բարձրացո՛ միշտ 'ի քումդ երեսաց գիտութիւն ։

Զանձն իմ յանձնեմ քեզ նուէր, զքեզ տուր ինձ զօրութիւն՝ տալ քեզ, և ողորմութեան հատուցումն ընդունել, քեզ փառք յաւիտեանս ․ ամէն ։

Նորին խօսք ընդ Յսի ։

Այլ դու նայեա՛ յիս ամենակարող տէր իմ յս, յաթոռոյ փառացդ և շնորհաց, տալով անարժան քո ծառայիս զանխառն միտս 'ի

յոյս հանդերձեալ քոյ յու-
սոյդ ։ Տե՛ս տէր թէ որքա՛ն
վտանգիմք յաղցաւոր կե-
նացս կրից 'ի զանազան հող-
մոցս բքաբեր շնչմանց երեք-
ալեանն խռովութեամբ, թը-
շուառացեալ մտացս երե-
ւալ ։ Զունիմ՛ տէր , պտուղ
գործոց քեզ նուէր հաշտու-
թե՛ , քանզի զոր ունել կար-
ծէի մաշեալ պակասեաց՝ 'ի
քում ահաւորութեանդ ե-
կեալ գիտութիւն ։ Եւ ես
մերկ և թափուր , կիսամեռ՝
և ոգեկործան , միայն ըղ-
մարդասիրութե՛ ոտիցդ կա-
խիմ՛ բուռն հարեալ զգմա-
նէ , և ոչ երբէք զթողուլն
ախորժեմ՛ ։ Հան զիս 'ի չարս

շաւղաց, զոր բերանով ի-
մով աղաչեմ, և ուսո՛ ըզ-
ճանապարհս քո ուղիղս, ո-
րում կամօք սրտիս վկայեմ։
Անկայ 'ի մահիճս մեղաց,
և ես ինձէն զդարձութեն մե-
ղաց բողքեմ։ Տուր զբժըշ-
կութիւն ախտացեալ հոգ-
ւոյս՝ որ առողջացուցանել
զայն խարեմ։ Զուխտս հա-
ծեալս բանի յեկեղեցիդ անդ-
րանկաց առաջի ամ երկիւ-
ղածաց քոց նուիրեմ։ Կե-
րիցեն տնանկք, և յագե-
ցին 'ի սմանէ, և օրհնեսցեն
զքեզ՝ որ զտէրդ խնդրեն։
Զաղօտացեալ քո լոյս բա-
րեկամացն քոց ցուցանեմ,
յիշեսցեն սոքա, և դարձ-

ցի՛ն առ տէրդ՝ որք 'ի ծա֊
գաց երկրէ քումդ զխոստութե՛ն
փափաքեն։ Քեզ փառք՝ պար֊
ծանք և գրաւ աշխարհի՝ 'ի
յերկինս փառաւորեալ, յա֊
ւիտեանս · ամէն ։

Նորին աղերս առ Յս̃՝ յորժամ
ոփ 'ի խորհրդածութեան էջէ ։

Այլ շուրջ պատեալ 'ի տա֊
րակուսանաց յա̃մ կողմանց
սրտիւ շաղախեալքս, և ան֊
կընդրութեան կարօտեալ֊
քս՝ նայիմք առ քեզ փորձ
տկար բնութեանս քահա֊
նայապետդ յս̃ ։ Ո՛վ որ վասն
մեր մեղս եղեր, զի մեք լի֊
ցուք վասն քո արդարու֊

թխն: Ո՛վ որ վասն մեր եր-կրաւոր եղեր, զի մեզ լիցուք վասն քոյ երկնաւորք: Ո՛վ որ վասն մեր հաց եղեր, զի մեզ 'ի Ճաշակելն զքեզ՝ սըր-բեսցուք: Տո՛ւր զպատրաստեալ վճռօք մարմին քո՝ ամենայն սրտի սրբարար կերակուր: Մատռուակեա՛ զարեան քոյ վտակ անմեղ կայլակեալ՝ որդւոց մարդկան անմեղու-թեան զմայլումն: Ձգեա՛ զփրկական քոյ զխաչդ զօ-զելոցս 'ի ծով աշխարհիս՝ առ քեզ վերածիչ: Կարօ-տացաք շնորհի՝ սփռեա՛: Լցաք 'ի գործոց՝ քաւեա՛. խարխափեմք զխաւար՝ ճա-ռագայթեա՛. կործանեցաք

'ի հաւատոց՝ հաստատեմ։ Դու ես յոյս, դու ես լոյս, դու ես կեանք, դու ես քաւութիւն, դու ինքն և անմահութիւն։ Քեզ սպասեն յեցեալքս 'ի շնորհս քո, 'ի քէն կարօտին առնուլ փրկութի խառնեալքս 'ի մարմինդ քո. զքեզ ունին քաւիչ քաւանայ՝ գնեալ արեամբ հօտս քոյ։ Հայեաց յամենեսեան, ափոփեա՛ զտարակուսանս մեր քոյին վաստակովքդ։ Հանդարտացո՛ զխռովութիւս մեր՝ քոյին խաղաղութ՟եդ։ Հանգո՛ զաշխատանս մեր 'ի քոյ օթեվանսդ, ուր դու գնացեր ո՛վ տէր, և խոստացար։ Արժանացո՛ զքոյսս փառա-

ւորել զքեզ այդր ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ յաւիտեանս․ ամէն ։

### Նորէն դարձեալ առ սուրբ հոգին ։

Ո՛վ ա͞ծ յա͞յ և նորոգող ա͞մե ն͞ք հոգի, ՚ի քո խնամս պահպանութե͞ հովին քաջ ըղհօտս խւր արար ապաստան և սփռեաց զճառագայթ քո յեկեղեցի խւր մինչև ցյաւիտեան ։ Ի քէն շարժին լեզուք մեր ՚ի պատարագս օրհնութե͞, և անձինք մեր կարգեցան ՚ի սպաս զանազան շնորհաց քոց պաշտաման ։ Զքեզ աղաչեմք ամենեքին

միաբան , և խօսիմք ընդ քեզ համարձակ՝ որդիք երկանց արգանդի քո ծննդեան ։ Մի՛ գարշիր 'ի հօտէ քումմէ վասն հոտոյ մեղաց զազրութեան , և մի՛ տրտմիր վ̃ն անպարկեշտ բանի բարբառմանս։ Այլ մնա ընդ մեզ հաշտութեամբ մինչև 'ի կէտն աւարտման, և լե՛ր ունկնդիր յերկնային քո խորանսդ ։ Ո՛վ Տ̃ր , և զարտաքսեալքս 'ի վայրս նժդեհութեան , պարապեալ պահեա, 'ի թշնամեաց նետից խոցոտման ։ Զունիմք զօրութիւն հանդիսանալ 'ի մարտ Ճգնութեան , խնդրեմք հառաչմամբ՝ մի՛ տար զմեզ 'ի փորձանս դարանակալին չարու-

թեան ։ Տո՛ւր ծարաւեացս զգինի սիրոյ քո արբեցութե՟, զմատռուակեալն այսօր 'ի սուրբ վերնատան ։ Զի մխթարեսցուք 'ի խշտիս մերոյ տրտմութեան, և 'ի հանդերձեալ կենացն յոյս՝ կացցուք ապաստան ։ Ո՛վ բարերար սուրբ հոգի, և յայս նուէրս՝ որ 'ի քոյոցս քեւ բուրումն օրհնութե՟, հոտոտեա՛ քաղցրութեամբ ա՟ծ իմ, հոգի հեզութեան։ Եւ քեզ օրհնութիւն 'ի մէնջ մի բերան, ընդ հօր և որդւոյ 'ի մշտնջենաւոր կեանս և անվախճան · ամէն ։

Նորին առ սուրբ հոգին։

Ո՛վ տէր՝ և գաստիարակ, հեզ՝ և խնամող ա՟ծ իմ հոգի, շնչեա՛ 'ի մրրկեալ ծով խորհրդոյս զսիւգ շնորհիդ՝ որով խաղաղի. և որ̃ս միշտ երախտիւք քո ստացար զիս քեզ պարտական գոլեալ, լի՛ց և այժմ զբերան իմ օրհնութեամբ տէր ցնծալի. Թէպէտ և ես անարժան տաճար լինել քում հանգըստի, այլ դու առատ՝ ա՛ռ միայն գործի հնչման քո ձայնի, և զանձաւ խորհըրդոյ քոյ հանճար տարփալի, բացեալ փայլեցո՛ խնդրողաց

Նորի՛ն առաջի ։ Ի փառս պատուոյ մեծի քոյ անուա՛ն սէգ սիրելի , և ի՛նձ կշտամբա՛նս բարբառ բերա՛նոյս ժխտող ծառայի ։

---



# ՄԱՂԹԱՆՔ

## ԱՌ ՍՈՒՐԲ

# ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

Ողջոյն քեզ Մարիամ լի շնորհօք տէր ընդ քեզ · օրհնեալ ես դու 'ի կանայս , և օրհնեալ է պտուղ որովայնի քո Յս̅ : Սրբուհի Մարիամ մայր ա̅յ բարեխօսեա վասն մեր մեղաւորացս , այժմ և 'ի ժամու մահուան մերոյ · ամէն :

Հառաչանք առ սուրբ Տիրամայրն :

Ահա ընծամբք զքեզ երանեսցուք, մայրդ յո̃ի ա̃ծածին Մարիամ, որ այնքան շնորհաց ընդունակ եղեր, և ունիս համարձակութիւն բարեխօսել առ որդին քո միածին վասն քաւութեան մեղաց դաւանողաց քոց, որք անկեալ երկիր պագանեմք առաջի մարդասէր անոխակալ և անյիշաչար կամաց քոց, մայրդ շնորհաց. ողորմեա մեզ մեղաւորաց :

Օրհնութիւն կուսին
Մարիամու :

Մեծացուսցէ անձն իմ ըզ-Տէր, և ցնծասցէ հոգի իմ ա՟վ փրկչաւ իմով:

Այս արար ՚ի վ՟ր խոնարհութեան աղախնոյ իւրոյ, այսուհետև երանեսցեն ինձ ամենայն ազգք :

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և ս՟բ է անուն նորա :

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց, և արար զզօրութ՟ն բազկաւ իւրով:

Ցրուեաց զամբարտաւանս ՚ի մտաց սրտից, և քակեաց զհզօրս յաթոռոց :

Զխոնարհս բարձրացոյց , զկարօտս ելից բարութեամբ , և զմեծատունս արձակեաց ունայնս :

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ , յիշելով զողորմութիւն իւր :

Որպէս խօսեցաւ առ հարս մեր , ընդ Աբրահամու՝ և զաւակի նորա յաւիտեան :

---

Մաղթանք :

Ի.քեզ եմք ապաւինեալ.քն̃ի մայր ա̃յ մերոյ :

Որ.քան զերկինս բարձրագոյն Մարիամ , պարծանք և-

կեղեցւոյ.ք̃նի մայր տ̃ոյ մերոյ: Որ.քան զարեգակն պայծա-ռագոյն, Մ՛արիամ, մի դադա-րիր բարեխօսել վասն մեր , Քրիստոսի մայր աստուծոյ մերոյ :

Աղաչեմք զքեզ ո՛վ ա̃ծածին՝ առ.ք̃ն բարեխօսեա փրկել զժողովուրդս իւր զոր գնեաց արեամբ իւրով :

Արդ խնդրեմք 'ի.քէն ան-դադար բարեխօսեա վասն անձանց մերոց առ որդին.քո միածին փրկել զմեզ 'ի փոր-ձութենէ և յա̃մ վտանգից մերոց :

Զ.քեզ ունիմք բարեխօս կոյս անհարսնացեալ, մայր ա-նարատ էմմանուէլի, տաճար

բանին հօրն երկնաւորի, օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք ։

Մի՛ դադարիր վասն մեր բարեխօսել օրհնեալդ 'ի կանայս ։

## Երգ պաղատանաց առ սուրբ Աստուածածինն ։

Մայր սուրբ անճառելի լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտենից յորովայնի քում կրեցեր, և ցնծութեն աշխարհի ծնար զբանն Աստուած · աղաչեմք ։ Մայր սուրբ բարեխօսեա ։

Աղաչեա վասն մեր զառ 'ի քէն զմարմնացեալն ած, որ

խոնարհեցաւ 'ի հայրական ծոցոյ. եկաւ մարմին ըստ մարդկային բնութեանն՝ առնել խաղաղութիւն յերկինս և յերկրի. աղաչեմք: Մայր սուրբ բարեխօսեա:

Աղաչեա վասն: Ներել մեզ անտես առնել զյանցանս մեր, և տալ օգնականութիւն ընդդիմակաց լինել հակառակամարտից 'ի պատերազմի. աղաչեմք:

Աղաչեա: Զի լռեսցեն պատերազմունք. դադարեսցին յարձակմունք թշնամեաց. տնկեսցի սէր և արդարութիւն 'ի յերկրի. աղա:

Աղաչեա: Աճեցուցանել յերկրի մերում զքաղցր

բղխումն աղբերաց, զառատ պտղաբերութիւն բուսոց և անկոց՝ առ՚ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց. աղաչեմք:

Աղաչեա: Զի միաբանեսցէ զեկեղեցի քո սուրբ. շինեալ 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. պահել անարատ մինչև յօր երևելոյ գալստեան քոյ. աղաչեմք:

Աղաչեա վասն մեր սըրբուհի զմիածին քո զորդին. և վասն հօտոյն հանգուցելոց՝ ընդունել յարքայութեան երկնից, և տալ մասն և բաժին ընդ սուրբս ամ. աղա:

Յիշեա տէր և ողորմեա:

Եւ ես առաւել զյորդո-րումն սիրոյ և զգործս բա-րեաց պարգևել մեզ խնդ-րեմք։

Տուր մեզ տէր Աստուած մեր։

Զանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենա-կալին յանձն արասցուք։

Քեզ տեառնդ յանձն է-ղիցուք։

Ողորմեաց մեզ տէր Աս-տուած մեր՝ ըստ մեծի ողոր-մութե̃ քում, ասասցուք ամե-նեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա․ տէր ողոր-մեա․ մայր սուրբ բարեխօ-սեա առ տէր վասն մեր։

Սրբուհի Մարիամ, աս-

փոր ոսկի, և տապանակ կը-տակարանաց. որ զ՚ի վե-րուստ շնորհն կենաց պար-գևեցեր քաղցեալ բնութե-ան. նա միշտ բարեխօսեա վասն քաւութեան մեղաց մերոց:

Աղօթք զօրաւորք առ սուրբ Տէ-րամայրն յէշապաճաւ պնօրհնու-թեանցն Քրի ։

Ածածին մայր քո՛ւ, և ծնող միածնին հօր, բարձող անէ-ծից, և պարծանք ազգի մարդ-կան. յերկնային զօրացն ե-րանեալ, և ՚ի հրեղինաց օրհ-նաբանեալ. միջնորդ ա՛յ և մարդկան, և հաշտարար հօր

ընդ արարածս. Թագ և սըր-
սակ կուսից, և համարձակ
բարեխօս մեղաւորաց: Մե-
ղուցեալս յոյժ՝ անկանիմ
առաջի քո, և աղաչեմ բա-
րեխօսեա վասն իմ առ բանն
ած՝ զոր ծնար մարմնով,
զոր կերակրեցեր՝ զկերակ-
րիչն ամենայնի և ամենայն
կենդանեաց: Աղաչեա վասն
իմ զանդրանիկդ քո, կացո
առաջի նորա միջնորդ և բա-
րեխօս զմանկութիւն իմ,
զկաթամբ սնանիլն որպէս
մանուկ, զուսումն բառնիլն,
զգրկօք գգուիլն, զշրթամբք
համբուրիլն, զողջագուրիլն
որպէս աղայ, զերթևեկիլն
քո ընդ նմա յեգիպտոս և

'ի նազարէթ և յիմ տեղիս ։ Զարմանութի՜ տառապելին վ̃ն դորա 'ի ժամ չարչարանացըն ․ զյանձնառութիւնն քո առ յովհաննէս , յորժամ հեղուսեալ կայր վշտօք 'ի վերայ խաչին ․ զցաւն արտասուսն քո զոր վտակօրէն հեղուիր՝ յորժամ տեսանէիր զնա վտանգեալ 'ի վերայ խաչին։ Վասն որոյ մատնի 'ի դատաստան՝ տառապէիր կսկըծակոծ, վասն չարաչար չարչարանացն , վասն սաստիկ ծարաւմանն , վասն Ճաշակման լեղւոյն և քացախին , վասն տեսանելոյն զբերմատեսակ արեւնն իջեալ , վասն իջուցանելոյ 'ի խաչէն արե-

նաղանդ մարմնով, վասն զխա-
ղարգիկ զնելյն 'ի սուրբ գե-
րեզմանն :

Աղաչեմ զքեզ մայր լուսոյ՝
հայցեա վասն իմ. զիր աղերս
աղաչանաց առաջի գորագ̃մ
կիրս չարչարանացն իւրոց
զի վասն իմ կրեաց բարե-
րարն և մարդասէրն : Յիշե-
ցո սուրբ կոյս զայդքան չար-
չարանքս, զի թերևս ողոր-
մեսցի և ներեսցէ բազմամե-
ղիս, և ջնջեսցէ զձեռագիր
յանցանաց իմոց, և իւրով
անմեղ մահամբն և սուրբ ա-
րեամբն դրոշմեսցէ զգեղե-
ցեալս 'ի դպրութիւն կենացն
անվախճանից առ ամ̃ սուրբս
իւր. զի ընդ նոսին փառաւո

ընկեց զամենամբ զերրոր-
դութիւնն՝ զհայր և զորդի և
զս̃բ հոգի, այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից· ամէն ։

---

Ի քեզ եմք ապաւինեալ որ
մայրդ ես և աղախին քնի ·
լեր բարեխօս վասն մեր, զի
զանուն տեառն կարդասցուք
և զքեզ մեծարեալ պատուես-
ցուք ։

Յոյս մեր և ապաւէն մայր
տեառն և կոյս սուրբ, որ
հուր ա̃ծութեանն ոչ բոցա-
կիզեաց զքո սուրբ զորո-
վայն · բարեխօսեա առ տէր
վասն մերոյ փրկութեան ։

Միայն օրհնեալ՝ սրբուհիդ
'ի կանայս, բնակարան և ա-
ռագաստ արարչին • բարե-
խօսեա առ տէր վասն ան-
ձանց մերոց, զի փրկեսցէ
զմեզ 'ի սատանայեաց գեհե-
նոյն:

Աղէրս առ սուրբն ա̄ծածին:

Ո՛վ ամենասրբուհի ա̄ծա-
ծին՝ պարծանք կուսութեան,
Ճրագ պայծառագոյն քան
զարեգակն • ո՛վ ջահ փայլուն
քան զաստեղս: Ո՛վ աթոռ
քերովբէական բարձրագոյն
քան զերկինս • ով սերովբէ
հողեղէն վեհագոյն քան ըղ-
հրեշտակս, և պատուականա-

գոյն քան զանմարմին դասս երկնաւորացն ։ Ո՛վ պարծանք կուսանաց և փառք ամուսնացելոց ։ Դու ես հարսըն անսկզբնականին · դու ես մայր մարմնացելոյ միածնի որդւոյն այ · դու ես ընակարան հոգւոյն սրբոյ ։ Քև հաճեցաւ ած ընդ մարդկային բնութեանս որ մեռաւ· քև բացաւ փակեալ դուռն դրախտին, օրհնեցաւ երկիր յանիծից նախահօրն·քև անկեցաւ քաղցրութիւն և ճշմարտութիւն յերկրի·քև ծանեաք զած·քև անուանեցաք քրիստոնեայք · քև ընկալաք զապաշխարութիւն 'ի թողութիւն մեղաց ·քեզ մի-

այն տուաւ համարձակութիւն բարեխօսել վասն ազգի մարդկան ։

Ո՛վ որովայն ա̄ծակրող, մայր աստուածածնող , ա̄ծաշօշափ ձեռք , ա̄ծահանգիստ գիրկ , ա̄ծադիեցոյց ստինք , ա̄ծաբարձ բազուկք , ա̄ծամերձ բերան , ա̄ծահամբոյր շրթունք , աստուածահայեաց աչք , ա̄ծախօս լեզու , ա̄ծընկալ խորան , աստուածաբնակ տաճար . մի՛ մոռանար զխոստովանողս քո , որ քեզ փառաւորեմ զհայր և զորդի և զս̄բ զհոգին , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

---

Սուրբ և ա՟ծածին մարիամ, ցանկալի կուսից և պարծանք ազգի մարդկան, մայր և աղախին մեծացուցանեմք: Անկէզ մորենի և տաճար ընդհանուր լուսոյն՝ անարատ և անխախտելի կուսութիւն. մայր և աղախին մեծացուցանեմք: Խորհուրդ կենաց և մայր կենդանութեան, և առագաստ հրափայլ ծագմամբ. մայր և աղախին մեծացուցանեմք:

### Աղօթք առ Տիրամայրն օգնական քրիստոնէից:

Սրբուհի Մարիամ, կոյս անարատ, փառաւորեալ

մայր Քնի և մյ, Թագուհի հրեշտակաց, օգնական քրիստոնէից. ահաւասիկ առ ոտս քո կամ անարժանագոյնս ՚ի մարդկանէ՝ որ չիշխեմ իսկ ամբառնալ զաչս առ քեզ, խնդրել զողորմութիւն քո։ Որ ապաւէնդ ես մեղաւորաց և խնամակալ արդարոց, մի ՚ի բաց մերժեր զիս, բարեգութ մայր, այլ թող ինձ՝ արտասուալից հառաչանօք և զղջացեալ սրտիւ տարածանել առաջի քո զաղէտս իմ։ Անարժան եմ, երանուհի մայր, այս շնորհի վասն անօրէնութեանց իմոց, այլ ՚ի գթութիւն քո յուսացեալ պաղատիմ առ

քեզ: Հրապուրեն զիս հաճոյք զգայութեանց, ձգեն զիս փորձութիւնք յունայնութեան աշխարհի, տոչորէ զիս ցանկութիւն որպէս տենդ փաղաղիչ: Մոխիր եմ չիջանուտ յառաքինութեն, և այնպէս ընդ մեղօք ծանրաբեռնեալ, զի անկայց աներկբայապէս յանդունդս՝ եթէ ոչ դու լիցիս ինձ ձեռնկալու:

Խոստովանիմ, և դու ինքն գիտես, գշխոյ առատապարգև, զի երբեք երբեք ճանաչեմ և տեսեմ զայլանդակութիւն մեղաց իմոց, և առաջադրեմ իսկ գալ յուղղութիւն, և ջանամ կանգ-

նել՚ի կործանմանէս․ այլ
աւա՜ղ, այնպէս անզօր, զի
դարձեալ փաղփաղակի ան-
կանիմ՚ի նոյն անկարգութն։
Սրբուհի Մարիամ, օգնա-
կան հաւատացելոց, մեր-
ժեսցես զիս յօգնականու-
թենէ քումմէ՚ի թշուառու-
թեանս իմում։ Դու ես
փաստաբան իմ և յոյս հաս-
տատուն առաջի այ․ ընկալ
քոյին բարեխօսութբ շնորհս
վասն իմ յորդւոյ քո՝ զոր
պաշտեմ, զի մի ես հպար-
տութիւն և անձնասիրու-
թիւն, ցասումն և անժուժ-
կալութիւն տիրեսցեն ինձ,
և մի հոգի իմ թշուառ կո-
րիցէ։ Ո՛վ տիրուհի իմ սի-

րելի, գթա յիս միւսանգամ, և փութա հասանել ինձ յօգնութիւն մինչև չարութեան իմոյ լցեալ զաղբիւր բարութեանն այ̃, և անարժան կացուցեալ զիս 'ի ընպառ շնորհաց նորա և թողութեան յանցանաց իմոց:

Փառաւորեալ մայր այ̃, տաւ զքէն զի ոչ երբէք թողուս 'ի ձեռանէ ոք 'ի նեղութիւնս և 'ի վիշտս իւրեանց զղջացեալ սրտիւ խոնարհեալ դիմեն առ քեզ, և խնդրեն զբարեխօսութիւն քո և զգթութիւն: Ընկալ ապա զաղաչանս իմ, սրբուհի, դշխոյ մատակարար շընորհացն այ̃, մի անարժա-

նութիւն իմ խափան լիցի բարութե՛ սրտի քո. տուր ինձ զգալ զզօրութիւն խնամոյ քոյ՚ի վհատութե՛ սրտի իմոյ, և առ ոտն կոխեցից զամենայն հրապոյրս աշխարհի. այսուհետև զապաշխարութիւն եւեթ սիրեցից և զառաքինութիւն. մի՛ ևս սիրեցից ինչ բայց միայն վասն սիրոյ ա̃յ, և բարերարութիւնք քո այնպէս զմիտս իմ գրաւեսցեն՝ զի ա̃մ խորհուրդք և բանք և գործք իմ լցին ՚ի ծառայութեան տ̃ն իմոյ Յ̃ի Ք̃ի, որում փառք պատիւ օրհնութիւն և փառաբանութիւն ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն ընդ ամենայն յաւիտեանս. ամէն։

Աղօթք 'ի սուրբն Աստուածածին, և առ ամենայն սուրբս:

Երկնային դուռն, և առագաստ անմահ արքային, մայր լուսոյ՝ և կոյս անարատ. որ մարմնով ծնար ըզբանն Աստուծոյ, և երանեցար յամենայն ազգաց. որ ես պարծանք ազգի մարդկան, և միշտ բարեխօս առ միածինն: Անկանիմ առաջի քո, և աղաչեմ զքեզ. քո սուրբ կաթամբդ՝ որով սնուցեր զանդրանիկ որդին, բարեխօսեա առ նա զի սրբեսցէ զիս 'ի մեղաց, և ազատեսցէ յամենայն սխալանաց:

Այլ և դուք ո՛վ որք և սի-
րեցեալք 'ի տեառնէ, հրաւի-
րեալքդ 'ի սկզբանէ՝ և ընտ-
րեալք յորովայնէ , առա-
քեալք և մարգարէք , և
մարտիրոսք և վկայք , նա-
հատակք և ճգնաւորք , կու-
սանք և միանձունք , և այլ
ա̃մ համօրէն հաճոյացեալքդ
ա̃յ յիւրաքանչիւր յազգաց,
որք սիրեցէք զտէրն բոլորից
'ի բոլոր սրտէ, և տկար մար-
մնով զանմարմնոցն ցուցէք
զհանդէս քաջութեան · խա-
չակցեալք ընդ ք̃ի , որք և
ընդ նմին թագաւորելոց էք
յանվախճան յաւիտենին :
Եւ արդ ես անպիտանս 'ի
բարեաց , և ունայն յար-

դարութենէ , և բաղում մեղօք պաշարեալս , անկանիմ առաջի տեսողական ոսկերաց ձերոց, որ էք ծաղկեալք ընդ ա̃մ տեղիս · յորոց ոչ կորիցէ և ոչ մազ մի · աղաչեմ զձեզ սիրոյն քո՛ն՝ զոր ունէք առ նա , բարեխօս լերուք առ նա վասն բազմամեղ անձին իմոյ · զի մաքրեսցէ զիս 'ի յաղտոյ մեղաց , և ազատեսցէ 'ի պարտեաց յանցանաց , և փըրկեսցէ զանօրինեալս յանեզրական տանջանացն և 'ի վըշտագին դառնութենէ գեհեննին , և արասցէ զիս մասանակից և հաղորդս հանգըստեանդ ձերում · զի և ես ընդ

ձեզ հանգուցեալ՝ փառաւո-
րեցից զամենասուրբ զեր-
րորդութիւնն, այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

---

Զողորմութե՛ քո զդուռն
բաց մեզ տէր. և արժանի
արա զմեզ լուսեղէն յարկաց
քոց ընդ սուրբս քո:

Ի պատրաստեալ քո օթե-
վանս սրբոց քոց ընկալ և ըզ-
մեզ փրկիչ յորդէգրութիւն
'ի զարթութեան կենաց:

Ի նստիլ քո յատենի դատա-
ւոր ահեղ խնայեա յարա-
րածս քո. բարեխօսութեամբ

և աղօթիւք սուրբ ճգնաւո֊րացն ։

Աղօթք միջնորդութեամբ երկնային զօրացն ։

Ո՜ք և սիրեցեալք յամենա֊սուրբ երրորդութենէն , հո֊գիք հարկաւորք , գաբրիէլ, միքայէլ, ուրիէլ, ռափա֊յէլ, հրեշտակք , հրեշտակա֊պետք , և այլ ա̃մ դասակար֊գութիւնք երկնաւորք ։ Ո֊րոց առաջի անկանիմ, և զար֊գարողին ձերոյ տեառն ա̃յ երկիր պագանեմ, և խնդրեմ 'ի ձէնջ՝ հայցել 'ի տեառնէ զթողութիւն յանցանաց և զքաւութիւն մեղաց իմոց ։

Քանզի ձեզ տուեալ է համարձակութիւն վասն բարեխօսութեանց իմ մեղաւորաց: Քանզի դուք սուրբք էք, և առ ամենասուրբն մօտակայք: Դուք անմարմինք էք և անմեղանչականք, իսկ ես մարմնաւոր եմ և մեղանչական: Դուք անմահ՝ և 'ի լոյս բնակեալ. իսկ ես մահկանացու՝ և խաւարաւ մեղաց ծածկեալ: Դուք թեթևընթացք՝ և քան զմիտս երագունք. իսկ ես ծանրացեալ մեղօք՝ և զառածեալ յանցանօք: Վասն որոյ աղաչեմ զձեզ, աղաչեցէք վասն իմ զտէր, հայցեցէք զթողու՟ն բազում յանցանացս. քան-

զի և ինքն իսկ մարդասէրն
յօժար է 'ի փրկութիւն կո-
րուսելոյս ։ Մի անփոյթ առ-
նիցէք զխնդիր տարագրե-
լոյս , այլ միաւորեալ զա-
ղաչանս մեղուցելոյս ընդ ձեր
ամենամաքուր մաղթանացդ
մատուցէք խնդրողին զկո-
րուսեալս· զի փրկութեամբս
իմով ուրախութիւն արասցէ
ձեզ տէր 'ի յերկինսդ , և ես
ձերով միջնորդութ̃եդ սըր-
բեալ 'ի մեղաց , և ազատեալ
յա̃մ յանցանաց , փառաւո-
րեցից ընդ ձեզ զամենասուրբ
զերրորդութիւնն , զՀայր և
զՈրդի և զՍուրբ Հոգի , այժմ
և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից · ամէն ։

Աղօթք առ Յ՟ն բարեխօսութեամբ պահապան հրեշտակին :

Ինձ մեղաւորիս հողեղինի մարդասիրեցես ողորմել, Յիսուս, աղաչանօք իմոյն հրեշտակի, դարձուցանելով զիս, տէր, 'ի բարկիդ քո հեռա լուսոյ • զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութեան՝ զոր հաւատացեր նմին տեսչութեան, զընկալեալն 'ի քէն 'ի կենցաղ աստեացս՝ ուրախութ՟բ սրտիւ յիս բերկրեալ՝ անմեղադրելի առ 'ի քէն որհնեալ՝ խնդալից դիմաց զուարթութեամբ, քեզ արքայ բարձրութեան փառաց ան-

հասից, ՚ի խորախձանս կեն-
դանախոսումբս բերկրեցելոցն
պարուց մատուցեալ ընծա-
յեցուսցէ, գովեալ ողորմած:
Եւ քեզ անքնին ընդ հօր ան-
հասի՝ Թուակցութեամբ հո-
գւոյդ անճառի վայելէ փառք
պատիւ և երկրպագութիւն,
յաւիտեանս յաւիտենից. ա-
մէն:

Մաղթանք առ Երկնային
Հօրս:

Երկնաւոր հօտ ընտրեալ՝
զոր հովիւն քաջ Թողեալ
յերկինս, և եկեալ ՚ի խըն-
դիր մեզ մոլորելոցս. որով
լցեալ զԹիւ հարիւրոցդ, ա-

բար ուրախութիւն 'ի յերկինս երկնաւորացդ. աղաչեմք զձեզ բարեխօս լերուք առ տէր վասն քաւութեան մեղաց մերոց:

Տեսանողք անտեսլին. խորհրդածուք խորոցն այ՝ որք իջեալք ընդ միածնին, սպասաւորել անօրէնութեանն. 'ի ծննդեանն աւետաւորք հովուացն, և կանանցն իւղաբերից կենացքարոզք զկենդանոյն. աղաչեմք զձեզ բարեխօս լերուք առ տէր վասն քաւութեան մեղաց մերոց:

Պահապանք աշխարհի. բանակք տեառն շուրջ զերկիւղածովք. բարեկամք ազգի մարդկան՝ միջնորդք մահու

և յարութեան. միքայէլ և գաբրիէլ մեծք որք կայք միշտ առաջի ամենասուրբ երրորդութեանն. աղաչեմք զձեզ բարեխօս լերուք առ տէր վասն քաւութեան մեղաց մերոց ։

---



ԱՂՕԹՔ

# ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

## ԵՕԹՆ ՍԱՂՄՈՍՔ

### Սաղմոս Զ։

*Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։*

*Ողորմեա ինձ տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։*

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու տէր մինչև յերբ:

Դարձ տէր, և փրկեա զանձն իմ. կեցո զիս տէր ըստ ողորմութ̃ե քում:

Զի ոչ ոք է որ 'ի մահու յիշէ զքեզ, կամ 'ի դժոխս խոստովան առնի առ քեզ:

Վաստակեցայ ես 'ի հեծութեան իմում, լուացի զա̃մ գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի:

Խռովեցաւ 'ի սրտմտութ̃է աչն իմ, և մաշեցայ ես 'ի վերայ ա̃մ թշնամեաց իմոց:

Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն:

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ. լուաւ տէր աղօթից իմոց, եւ տէր զխնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն, եւ խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ, դարձցին յետս եւ ամաչեսցեն յոյժ վաղվաղակի եւ խռովեսցին։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտ։

Սաղմոս ԼԱ։

Երանի ում թողութիւն եղեւ մեղաց, եւ ծածկեցան ամենայն յանցանք նորա։

Երանի առն, որում ոչ

համարեսցի տէր զմեղս նո-րա. և ոչ գոյ նենգութիւն 'ի բերան նորա:

Լռեցի ես և մաշեցան ա-մենայն ոսկերք իմ, առ ա-ղաղակել ինձ առ տէր զօր-հանապազ 'ի տուէ, և 'ի գիշերի:

Ծանրեաց ձեռն քո 'ի վե-րայ իմ, դարձայ 'ի թշուա-ռութեան զի հարան յիս փուշք:

Զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից 'ի քէն:

Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ. և դու թող-ցես զամենայն ամբարշտու-թիւնս մեղաց իմոց:

Վասն այսորիկ յաղօթս

կացցեն առ քեզ ամենայն սուրբք՝ 'ի ժամ ընդունելի։

Բայց միայն 'ի ջուրցն հեղեղաց բազմաց, որ առ նոսա ինչ ոչ մերձեսցի։

Դու ես ապաւէն իմ 'ի նեղութենէ յայսմանէ, որ շուրջ եղեն զինև։

Ցնծութիւն իմ փրկեա զիս յայնցանէ, որ պաշարեցին զիս։

Իմաստուն արարից զքեզ և խելամուտ 'ի ճանապարհ յոր և գնասցես, և հաստատեցից 'ի վերայ քո զաչս իմ։

Մի լինիք որպէս զձի և զջորի, զի ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն, 'ի սանձս և 'ի դանդանաւանդս ձմլեսցես

զկշտակս նոցա , որ առ քեզ ենչ ոչ մերժեսցին :

Բազում տանջանք են մեղաւորաց , բայց դ.ք յուսան 'ի տէր՝ ողորմութ̃ի տեառն շուրջ եղիցի զնոքօք :

Ուրախ եղերուք՝ և ցնծացէք արդարք . 'ի տէր պարծեցարուք ամենեքեան, դ.ք ուղիղ էք սրտիւք :

Փառք հօր . և այլն :

Սաղմոս ԼԷ :

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմանիր զիս . և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս :

Զի նետք քո հարան յիս ,

և յիս հաստատեցաւ ձեռն քո։

Ոչ գոյ բժշկուն մարմնոյ իմոյ՝ յերեսաց բարկութե քոյ։

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց։

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ։

Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութե իմոյ։

Տառապեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ. զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղև չարչարա-

նօք, և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։

Չարչարեցայ, և խոնարհ եղէ մինչև յոյժ. մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ։

Տէր առաջի քո է ա՟մ ցանկութիւն իմ, և հեծութիւն իմ 'ի քէն ոչ ծածկեցաւ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց և այս ոչ եղև ընդ իս։

Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին, և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն։

Բռնադատէին զիս, և խնդրէին զանձն իմ, որք խորհէին չար 'ի վերայ իմ. խօսե-

ցան զանօրէնութն, և զնենգութն զօրհանապազ խորհեցան։

Այլ ես որպէս խուլ՝ զի ոչ լսէ, որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր։

Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ, և ոչ գոն խօսք 'ի բերան նորա։

Ես 'ի քեզ տէր յուսացայ. և դու լուիցես ինձ տր̃ Աստուած իմ։

Ասացի թէ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. 'ի սասանել ոտից իմոց՝ 'ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։

Ես 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Զանօրէնութեանս իմ պատ-
մեցից, եւ հոգացայց վասն
մեղաց իմոց։

Իսկ արդ թշնամիք իմ կեն-
դանիք են, եւ զօրացեալ են
քան զիս, եւ բազում էին՝
որք ատէին զիս 'ի տարա-
պարտուց։

Որք հատուցին ինձ չար
փոխանակ ընդ բարւոյ, չա-
րախօսէին զինէն, զի ես եր-
թայի զհետ արդարութեան։

Մի թողուր զիս տէր Աս-
տուած իմ, եւ մի 'ի բացեայ
անկիր յինէն. հայեաց յօգ-
նել ինձ՝ տէր փրկութեան
իմոյ։

Փառք հօր. եւ այլն։

Սաղմոս Ծ։

Ողորմեա ինձ Աստուած
ըստ մեծի ողորմութեան քում,
ըստ բազում գթութեան քում
քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօ-
րէնութենէ իմմէ, և 'ի մե-
ղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես
ինքնին գիտեմ, և մեղք իմ
առաջի իմ են յամենայն
ժամ։

Քեզ միայն մեղայ տէր,
և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցես 'ի
բանս քո, և յաղթեսցես 'ի
դատելն քո։

Անօրէնութբ̄ յղացայ, և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտկաւ և ս̄բ եղէց. լուա և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ ո̄ր զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո ՚ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, և հոգի ու-

ղիղ նորոգեա 'ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս տէր յե-
րեսաց քոց, և զհոգի քո
սուրբ մի՛ հաներ յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրր-
կութեան քո, և հոգւով պե-
տութեան քո հաստատեա
զիս։

Ուսուցից անօրինաց զճա-
նապարհս քո․ և ամբարիշտք
առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ Աս-
տուած, Աստուած փրկու-
թեան իմոյ, ցնծասցէ լեզու
իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ
բանաս, բերան իմ երգեսցէ
զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պա-

տարագս մատուցանէաք , բայց դու ընդ ողջակէզս եւս ոչ հաճեցար ։

Պատարագ այ հոգի խոնարհ , զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ ։

Բարի արա տէր կամօք քովք սիովնի , եւ շինեսցին պարիսպքն Երուսաղեմի ։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեն , ուխտից պատարագս հանցեն՚ի սեղան քո զուարակս ։

Փառք հօր. եւ այլն ։

Սաղմոս ՃԱ։

Տէր լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զունկն քո, յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի լուր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խռիւ չորացան։

Հարաւ որպէս խոտ, և ցամաքեաց սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ 'ի ձայնէ հեծութեան իմոյ։

Կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալուսն յանապատի։

Եղէ ես որպէս բու յաւերակի, տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն 'ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, և գովիչք իմ ինև երդնուին։

Զմոխիր որպէս հաց կերայ, և զմպելին իմ արտասուօք խառնեցի։

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր, և խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Դու տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո ազգէ մինչև յազգ:

Դու յարուցեալ գթասցիս 'ի վերայ սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ:

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա, և 'ի հողս նորա գթասցին:

Երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ, և ամենայն թագաւորք երկրի 'ի փառաց քոց:

Շինէ տէր զսիոն, և երեւեսցի փառօք իւրովք 'ի նմա:

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա:

Գրեսցի այս յազգ յայլ՝ ժողովուրդ զոր ստացեալ է՝ օրհնեսցէ զտէր:

Հայեցաւ նա 'ի բարձանց 'ի սրբութենէ իւրմէ, տէր յերկնից յերկիր հայեցաւ:

Լսել զհեծութիւն կապելոց, և արձակել զորդիս մահապարտաց:

Պատմել 'ի սիոն զանուն տեառն, և զօրհնութիւնս նորա յԵրուսաղէմ:

Ժողովել ժողովրդոց 'ի միասին, և թագաւորաց ծառայել տեառն:

Պատասխանի ետ նմա 'ի Ճանապարհի զօրութե իւրոյ, զնուազութիւն աւուրց իմոց ասա ինձ, և մի՛ հաներ

զիս՚ի կէս աւուրց իմոց, զի ազգէ յազգ են ամք քո։

Ի սկզբանէ տէր զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են։

Նոքա անցանեն, և դու կաս և մնաս յաւիտեան։

Ամենեքեան որպէս ըզձորձս մաշեսցին, որպէս վերարկուս փոխեսցես զնոսա, և փոխեսցին։

Բայց դու նոյն իսկ ես, և ամք քո ոչ անցանեն. որդիք ծառայից քոց բնակեսցեն՚ի նմա, և զաւակի նոցա յաւիտեան յաջողեսցի։

Փառք հօր. և այլն։

### Սաղմոս ՃԻԹ:

Ի խորոց կարդացի առ քեզ տէր, տէր լուր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիւն իմ քննես տէր՝ տէր, ո՛ կարէ կալ առաջի քո, զի 'ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քոյ համբերի տէր, համբերէր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ 'ի տէր:

Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյ, 'ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ 'ի տէր:

Ի տեառնէ է ողորմութիւն բազում, և 'ի նմանէ է փըրկութիւն, և նա փրկեաց զիսրայէլ յամենայն նեղութեանց նորա։

Փառք Հօր․ և այլն։

## Սաղմոս ՃԽԲ։

Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։

Լուր ինձ արդարութեամբ քով. և մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձըն իմ, խոնարհ արար յեր-

կիր զկեանս իմ, և նստոյց զիս 'ի խաւարի՝ որպէս մեռեալ յաւիտենից։

Զանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն 'ի գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ տէր, զի նուաղեաց յինէն հոգի իմ։

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցեմ այնոցիկ՝ որ իջանեն 'ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօ-

տու զողորմութիւնս քո, զի ես'ի քեզ տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց, տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ, և

կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ:

Փառք հօր․ և այլն:

## ԱՂԵՐՍՔ ԶՂՋԱԿԱՆՔ ԸՍՏ ԱՒՈՒՐՑ ԵՕԹՆԵԿԻՆ :

---

### Ի ԿԻՒՐԱԿԷԻ :

Որ ողորմութ̃ զգեցար մարմին և նորոգեցեր զհնացեալքս, նորոգեա և զմեզ հոգւովքն̃ և ողորմեա : Որ 'ի խաչին մեռար մարմնով, և զմեռեալքս դարձուցեր 'ի կեանս. կեցո և զմեզ հոգւով քն̃ և ողորմեա : Որ յարեար 'ի մեռելոց և յարուցեր զբնութիւնս մեր յուսով, յարո և զմեզ հոգւով

քո՛ և ողորմեա : Որ զախրե-լի՛նքս զՂազարոս կոչեցեր 'ի գերեզմանէն, կոչեա և ըզ-մեզ հոգւով 'ի կեանս և ողորմեա :

Արդ աղաչեա մայր աստուծոյ զծնեալն 'ի քէն վասն մեր • զի ընդ նմին պահելով, սուրբ յարութե՛ նորա նորոգեսցուք, առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ :

Յերկուշաբաթի :

Յոյս իմ ես դու տէր քաւիչ յանցանաց իմոց, մի՛ անտես առներ զըղջումն արտասուաց իմոց • ողորմեա ինձ ա՛ծ : Առ քեզ ապաւինեցայ

որպէս զանառակ որդին· Հայր մեղայ յերկինս և առաջի քո· ողորմեա ինձ ա՟ծ: Փրկեա զիս ա՟ծ 'ի բազում մեղաց իմոց, արա արժանի քոյին սուրբ արքայութ՟եդ· ողորմեա ինձ ա՟ծ:

Ա՟ծածին գերագոյն քերովբէից բանին բարձող, որ զամենայն կրէ զօրութեամբ· բարեխօսեա առ տէր վասն մերոյ փրկութեան:

## ՅԵՐԵՔՇԱԲԹԻ:

Աներևութից քննող գաղտնեաց, բժշկեա զհոգւոյ իմոյ զհիւանդութիւնս, և կեցո միայն մարդասէր: Որ եր֊

կոյսամօրդ եւ առ ամենեսեան, ողորմեա անձին իմոյ բազմամեղի, եւ կեցո միայն մարդասէր: Ամենաբաւական ողորմութեան շնորհ, պարգեւեա ինձ յահագին աւուրն զթողութիւն, եւ կեցո միայն մարդասէր:

Անտանելւոյն տաղաւար, բարձող էիցս բարձողին, որ ծնար զնա մարմնով զանմարմնաբար ծնունդն հօր, բարեխօսեա վասն մեր աստուածածին մարիամ:

### Ի ՉՈՐԵՔՇԱԲԹԻ :

Տէր որ 'ի մէջ լերինն աղբերացուցեր զջուրն 'ի վե-

մէն : Տէր 'ի սրտէ իմմէ հան ինձ արտասուս ապաշխարութեան : Զի կեցից և ապաշխարութեամբ ապրեցայց 'ի հանդերձեալ քոյ դատաստանաց :

Աղբիւր կենաց բղխեալ յեդեմայ սուրբ ա̄ծածին , որով արբեցաւ երկիր ծարաւուտ հոգւոյն իմաստիւք· տուր մեզ մաղթեա աղբիւրս արտասուաց, մաքրել զմեզ 'ի մեղաց մերոց :

### Ի ՀԻՆԳՇԱԲԱԹԻ :

Ք̃ս ա̄ծ յոյս ապաշխարողաց , շնորհեա զթողութիւն բազում յանցանաց իմոց :

Առ քեզ բազմագութ ապա-ւինեալ կարդամք, մի մերժեր զմեզ յողորմութենէ քումմէ: Որպէս զաւազակն աղաղակեմ առ քեզ, յիշեա և զիս տէր 'ի քում յարքայութեանդ: Որ անապական ծննդեամբդ քո լուծեր զերկունս նախամօրն, մարիամ մայր այ՟, բարեխօսեա առ միածին որդին լուծանել զկապանս մեղաց մերոց, և աղաչեա փրկել զանձինս մեր 'ի փորձութենէ:

Ի յաւրհնանս:

Ողորմեա ինձ քս՟ ողորմութբդ՟ քո մեծաւ, զի կարօտ եմ ես

շնորհի քո և ողորմութեանդ․ ողորմեա և լուր ինձ բազմամեղիս ։ Լուր տէր ձայնի ողբալոյս և յաւագին պաղատանացս, որ ամօթով կամ առաջի քո իմ չարաչար վարուքս․ ողորմեա և լուր ինձ բազմամեղիս ։ Ընկալ տէր զաղաչանս իմ և զհառաչանս սրտի իմոյ որ աղաղակեմ որպէս կինն քանանացի․ ողորմեա և լուր ինձ բազմամեղիս ։

Վասն որոյ աղաչեա մայր այ մարիամ զմիածին քո զորդին, զի շնորհեսցէ ըստ աւաղակին ժառանգել վերըստին մեզ զդրախտին վայելչութիւն ։

Ի շաբաթու ։

Որ վասն մեր յերկնից խո-
նարհեցար նորոգել զախե-
ղերս · օգնեա և ինձ փրկիչ
ողորմութ՟ե և կեցո ։ Որ ըստ
հոգեղէն բնութե՟ մարդկան
զգեցար զմարմին , զվերաւո-
րեալս մեղօք զանձն իմ մխի-
թարեա ողորմութեամբ և
կեցո ։ Որ զդատակնիք մա-
հու լուծեր զնախաստեղծին՝
զդատապարտեալս մեղօք ըղ-
հոգիս իմ նորոգեա ողորմու-
թեամբ և կեցո ։

Ա՟ծածին անհարսնացեալ
յերկրէ յերկինս հարսն ըն-
ծայեալ, յորժամ բաղմիս

լուսոյ նման քո միածնիդ
յաջակողմեան, յայնժամ
մաղթեա ընդ մեր զնոյն՝
փրկել զմեզ յահեղ բոցոյն,
համադասիլ ընդ արդարոցն
երգել քեզ փառս ընդ երկ-
նայնոցն։

Աղօթք Մանասէի Թագաւորին։

Տէր ամենակալ ա͞ծ Աբրա-
համու՝ Իսահակայ՝ Յակո-
բայ և զաւակին նոցա արդա-
րոց. ամենակալ տէր թող
զմեզ խմ։

Որ արարեր զերկինս և
զերկիր՝ և զամենայն զարդ-
նոցա. ամենակալ տէր թող
զմեզ խմ։

Որ կապեցեր զծովբանիւ հրամանի քոյ. փակեցեր ըզխորս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենակալ:

Որ ամենայն ինչ սարսէ՝ և դողայ յերեսաց ահի զօրութեան քոյ. ամենակալ:

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութե̄ քոյ, և սաստիկ է բարկութե̄ սպառնալեաց քոց 'ի վերայ մեղաւորաց. անչափ և անքննելի են ողորմութիւնք աւետեաց քոց. ամենակալ:

Դու տէր բարձրեալ՝ գըթած, երկայնամիտ, բազմողորմ, և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան. ամենակալ:

Դու Աստուած՝ ոչ եդիր ապաշխարութիւն վասն արդարոյն Աբրահամու՝ Իսահակայ՝ և Յակոբայ, որք ոչ մեղան քեզ. ամենակալ:

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ամենակալ:

Չեմ արժանի հայել՝ և տեսանել զբարձրութիւնս երկնից 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամենակալ:

Կորացեալ եմ ես 'ի բըռնութենէ կապանաց երկաթից, և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենակալ:

Բարկացուցի զսրտմտութիւն, և չար առաջի քոյ արարի. կանգնեցի պատկեր՝ և բազմացուցի զցասումն անձին իմոյ. ամենակալ:

Եւ արդ տէր խոնարհեցուցանեմ զծունկս սրտի իմոյ, և հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ. ամենակալ:

Մեղայ տէր մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենակալ:

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն, թող ինձ տէր, թող ինձ. և մի կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ. ամենակալ:

Մի յաւիտեան բարկանար ինձ տէր, և մի յիշեր

զչարկման իմ, և մի՛ պարտա-
ւորեր զիս ընդ իշխանս 'ի
ներքոյ երկրի չարեօք. ամե-
նակալ:

Զի դու Աստուած՝ Աս-
տուած ապաշխարողաց ես,
և յիս ցոյց զբարերարութիւնդ
քո, զի անարժան եմ. ա-
մենակալ:

Կեցուսցես զիս ըստ բա-
զում ողորմութեան քում.
և ես օրհնեցից զքեզ զամե-
նայն աւուրս կենաց իմոց.
ամենակալ:

Զքեզ տէր օրհնեն ամե-
նայն զաւարթունք երկնից,
և քո են փառք յաւիտեանս.
ամէն:

Փառք հօր և որդւոյ:

Աղաչեմ և խնդրեմ՝ի քէն տէր՝ Թող ինձ զմեղս իմ:

Բազումողորմ տէր, ողորմեաց ինձ:

Աստուած, քաւեա զիս զմեղաւորս:

Արարիչ իմ և յոյս Աստուած, գթա յիս 'ի մեղուցեալ ծառայս, և ողորմեա ինձ բազմամեղիս:

Ամենօրհնեալ սրբուհի՛ և միշտ կոյս Աստուածածին մարիամ, բարեխօսեա առ տէր վասն իմ մեղաւորիս:

Ամենայն սուրբք Աստուծոյ, բարեխօսեցէք առ հայր յերկինս վասն մեր մեղաւորացս:

Քրիստոս որդի Աստուծոյ

անոխակալ՝ ընկալ զաղաչանս մեր, զի՛ի քեզ են ապաւինեալ անձինք մեր։

Յաղթող զօրութ̅բ սուրբ և կենդանարար և պատուական խաչիւ քով տէր՝ պահպանեա զմեզ։

Առաքեա տէր զհրեշտակ խաղաղութեան քոյ, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս՚ի տուէ և ՚ի գիշերի։

Եւ մարդասիրութեամբ քո յիշեա զմեզ տէր, յիշեա զմեզ յորժամ գաս արքայութեամբ քով, և ողորմեաց մեզ։

---

Զարհուրեալ դողացուցանեմ ամենամեղ անձն իմ յահեղ քոյ դատաստանացդ յաններելի տանջանացն: Քանզի կամաւ մերձեցայ 'ի մեղս մեծամեծս, որդ կայ և մնայ ինձ աններելի պատուհասն: Արդ անկեալ աղաչեմ փըրկիչ և բարերար, խնայեա յիս 'ի մեղուցեալս և ողորմեա ինձ բազմամեղիս:

Ամենակալ քաւեա զմեղս իմ, զի Աստուած ես ապաշխարողաց: Եւ զհոգիդ սուրբ մի հաներ յինէն, զի Աստուած ես ապաշխարողաց: Եւ փրկեա զիս յահագին հրոյն, զի Աստուած ես ապաշխարողաց:

Աստուածածին ապաւէն մեր և յոյս, բարեխօսեա առ որդիդ քո միածին, զի փրկեսցէ զմեզ 'ի հրոյն տանջանաց և պարգևեսցէ մեզ զերկնից արքայութիւնն ։

Աղօթք զգենլոյն առ յոյ չզգեստաւորել
երէկագործ խաւարաբանութեան ։

Երկնաւոր թագաւոր, որ վասն գիւտի միոյ մեղաւորի՝ զհայր և զհոգի հանդերձ հրեշտակօքն ուրախացուցեր, արա մի յապաղեսցէ յինէն գութ ողորմութեան քո. գիտ զկորուսեալս մեղօք 'ի խորս անդնդոց, և արա խրախութիւն 'ի բարձունս

երկնաւորացդ. կանգնեա ըզ-
գլորեալս 'ի մեղաց, լուսա-
ւորեա զխաւարեալս, սըր-
բեա զաղտեղեալս, դարձո
զմոլորեալս: Մի՛ թողուր
զիս 'ի կամս անձին իմոյ գը-
նալ, զի մի՛ տիրեսցեն ինձ
ամ մեղք իմ: Խնդրեմ տէր,
հայցեմ և բախեմ, բաց ինձ
տէր զդուռն ողորմութեան քո:
Մի՛ ընդ վայր և 'ի զուր լի-
ցի այնքան աշխատութիւնն
վասն իմ, զոր կրեցեր 'ի գող-
գոթա՝ խաչին, բևեռքն, ծա-
րաւն լեղին, քացախն, հա-
րուածք տիգին, հեղումն ա-
րեանդ, ձայնն ահաւոր, դո-
չումն ուժգին, բարբառն է-
լի էլի, նա և այլ ամենայն

վշտաքն՝ զոր կրեցեր վասն կո-
րուսելոյս : Վասն որոյ միջ-
նորդ և բարեխօս ունիմ առ
քեզ զփրկարար տնօրէնու-
թեամբ զկիրսն, փրկեա զմե-
ղուցեալս՝ի սպառնալեաց գե-
հենոյն , և հանգո զգլխս ա-
րեան անեղծ յերկնայինն յա-
ռագաստն լուսոյ· զի ընդ իմ
սուրբս.քո փառաւորեցից ըզ-
քեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ
սրբոյ այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից · ամէն :

Այլ աղօթք :

Տէր տէր՝ տէր ամենակալ,
ես եթէ կամիմ և եթէ ոչ՝
դու կեցո զիս · և ես կաւ

եմ և տիղմ, զի սիրեմ ըզմեղս. այլ դու որպէս ամենազօր խափանեա զնա, և լոյծ զնա 'ի մալի մեղաց իմոց: Զի եթէ արդարոյն ողորմիս՝ ոչ մեծ է, և եթէ զսուրբն կեցուցանես՝ ոչ են սքանչելիք, զի արժանի ողորմութե՟ են նոքա: Այլ 'ի վերայ մեղաւորիս սքանչացո զգթութիւնքո, և յիս ցոյց զանթիւ ողորմութիւնքո տէր, քանզի 'ի քեզ թողեալ է աղքատն, և անկելոյն դու ես օգնական:

Տեառն Ներսէսի Հայոց կաթո-
ղիկոսի, ողբերգութիւն ան-
ձին զղջացելոյ:

Աշխարհ ամենայն,
Առ իս նայեցեալ,
Անխառնից լերուք,
Բանամ զշրթունս,
Բարբառիմ լեզուաւս,
Բողոքեմ զանձնէ,
Տէր ողորմեա, ՟Տր ողորմեա,
տէր ողորմեա:
Գող եղէ մեղաց,
Գտող կորստեան,
Գուբ ինձ փորեցի:
Դաւեցի զանձն իմ,
Դաւաճանեցի,
Դարան գործեցի. տէր ող:

Երբեմն էի լոյս ,
Եւ այժմ եմ խաւար
Եւ 'ի ստուերս մահու :
Զիա՞րդ պատմեցից
Զթիւ մեղաց իմոց ,
Զի բազումեն յոյժ . տ͞ր ող:
Էրկինք և երկիր ,
Եկայք ողբացէք
Եղկելի զանձն իմ:
Ընտրեցի զչարն ,
Ընկալայ կամաւ
Ըզհոյլս մեղաց . տէր ող :
Թաւթաւիմ տղմով ,
Թաւալիմ 'ի մեղս ,
Թօթափել չկարեմ :
Ժանտախտիւ լցեալ ,
Ժահահոտ եղէ
Ժամանակս բազումս . տէր:
Ի բաց մեկնեցայ

Ի սուրբ խորհրդոց ,
Ի բարեաց գործոց ։
Լաւ վարկաւ անձն իմ
Լուսոյն հեռանալ ,
Լինել ընդ խաւար ․ տէր ող ։
Խորհուրդքս չարին
Խաբեն զհոգիս ․
Խորասոյզ առնեն ։
Ծածկեն անդընդօք ,
Ծիծաղեն զլորմամբս ,
Ծանակ զիս առնեն ․ տէր ող ։
Կամաւ կորուսայ
Կարկամեալ անձամբս ,
Կանգնիլ ոչ կարեմ ։
Հուր մեղաց կիզող
Հրդեհեաց որ յիս
Հոգեւոր բարիս ։ տէր ող ։
Ձաղկեցայ մեղօք ,
Ձաղեցին անասողք ․

Ձանձրացաւ հոգիս ։
Ղեղն դառնութեան
Ղօղեալ 'ի սիրտ իմ,
Ղամբար իմ շիջաւ ․ տէր ող։
Ճաշակմամբ մեղաց
Ճաշեցի զմահ ,
Ճոխս աղքատացայ ։
Մեռեալ եմ հոգւով ,
Մոլորեալ մտօքս ,
Միայն կամ մարմնով ․ տէր։
Յորդայթ մահու
Յորսողին անկայ ,
Յաղթեցայ յախտից ․
Նետից թշնամւոյն
Նշաւակ եղէ ,
Նոր միշտ խոցոտիմ։ տէր ող։
Շուրջ պատեալ վնեւ
Շունք բազումք եղեն ,
Շաղախին արեամբս ։

Որս եղէ չարին
Ուսկանաւ մեղաց ,
Որսացաւ զանձն իմ՝ տէր ող:
Չարաչար վշտօք
Չարչարի անձն իմ ,
Չունիմ դադարումն ։
Պարտապան գտայ
Պարտուց յանցանաց
Պարտեաւս 'ի մեղաց· տէր ող:
Ջանամ զղջանալ ,
Ջեռանիմ դարձեալ ,
Ջեռնում հրով մեղաց ։
Ռաբբի կոչեցայ ,
Ռակայ անուանիմ
Ռամկական վարուքս· տր̃ ող:
Սիրով ցանկութեան
Սաստիկ բարկութեամբ
Սիրտ իմ խոցեալ է ։
Վիրօք յանցանաց

Վըշտանայ հոգիս ,
Վարանեալ շըջիմ . տէր ող՝
Տիրեցին ինձ չարք ,
Տարագիր հանին
Տիրական գըրկայն :
Րաբունւոյն բարւոյ
Րախճական ձայնին
Րաւինս ոչ լուայ . տէր ող՝
Ցակութիւն չարեաց
Ցանկալի դիմօք
Ցաւեցոյց զաչս իմ :
Ւիւրաքանչիւրոյ
Ւիւսմամբ խուռն ախտից
Ւիւծեալ է հոգիս . տէր ող՝
Փութացիր անձն իմ
Փախչել 'ի չարեաց ,
Փափաքել բարեաց :
Քեզ միշտ մերձ ծանիր
Քան մահու եկեալ

Քննող դատաւոր․ տէր ող։
Ած՟ածնին բարեխօսութե՟
Յիշեա տէր և ողորմեա ։

### Ս․ Եփրեմի աղօթք ըղձական առ Տէրն Յիսուս ։

Տէր երկնի և երկրի, իշխան մահու և կենաց, դատաւոր կենդանեաց և մեռելոց, Քն՟ ա՟ծ, յոյս և ապաւէն հոգւոյս իմոյ․ քեզ խոնարհեցուցանեմ զերկրպագութիւն և մատուցանեմ փառաբանութե՟ մաղթանս ։ Լուր, պարգևիչ, հայցուածոց իմոց՝ որ միայնդ ես առանց մեղաց․ որ միայնդ ես սբ՟ և 'ի սբ՟ս հանգուցեալ․ որ միայնդ ես գթած և ողոր-

մած ։ Ողորմեա ինձ ա̃ծ ըստ մեծի ողորմութեան քում, և ըստ բազում գթութեանց քաւեա զանօրէնութիւնս իմ ։ Ստեղծիչ իմ, ողորմեա ինձ և օրհնեա զիս · երևեցո զերեսս քո առ իս և հաշտեա ընդ իս ։ Ապրեցուցիչ իմ՝ դարձ առ իս, երևեցո զերեսս քո և յիշեա զիս յարքայութեան քում ։ Դարձ առ իս, ա̃ծ փրկիչ իմ, և դարձո զգթութիւնս քո յինէն · մի յաւիտեան բարկանար ինձ, և մի դարձուցաներ զերեսս քո յինէն · մի բարկութե̃ խրատեր զիս, և մի սրտմտութե̃ քով յանդիմաներ զիս · մի յաւիտեան բարկանար ինձ, և

մի յիշեր զչարիս իմ, և մի պարտաւորեր զիս ըստ անօրէնութեանս իմ. մի յաւիտեան պահեր ոխս, և մի 'ի սպառ բարկանար ինձ: Մի ըստ մեղաց իմոց առներ, և մի ըստ անօրէնութեան իմում հատուցաներ ինձ: Մի ընկեներ զիս յերեսաց քոց, և մի խնդրեր զգիր յանցանաց իմոց. մի դատապարտեր զիս, զի ես ինձէն գիտեմ զի անուղղայ եմ և յանցաւոր 'ի մանկութենէ իմմէ, և անպատասխանի յամենայնի:

Այլ դու դատաւոր Հզօր և անոխակալ, որ զյանցանս մեղաց թողեր զանառակ որդւոյն, թող ինձ ըզպարտիս

մեղուցեալ և անարժան քո ծառայիս ․ քանզի քո առատ բարերարութիւն յորժամ յիս ցուցցես, յայնժամ երևեսցի բարեգթութիւն քո, որ արժանի եմ բնաւ տանջանաց ․ զի զա̃մ զկեանս իմ անառակութե̃ անցուցի, և ոչ կացի 'ի հրամանի քում ։ Այլ քաղցրացիր ինձ քաղցրութե̃, քաղցր և բարի Թագաւոր, և հաշտեա ընդ բազմամեղիս ։ Մի հայիր յիմ անհնազանդութիւ և 'ի ծուլութիւնս․ մի անարգեր զիս և մի Թողուր զիս և մի ընդ վայր հարկաներ զիս ։ Զի Թէպէտ և զտաճար Հոգւոյդ սրբոյ ապականեցի իմով ծուլութե̃ս և անառակ

գնացիւքս, այլ դու գթա յիս
առեղծիչ իմ ողորմած և ան-
յիշաչար: Մի ապականեր
զհոգի իմ գեհենաժառանգ
այրմամբն յաւիտենականաւ.
այլ գթացեալ մարդասիրա-
պէս երկայնամիտ լեր առ
իս, և ներեա յանցանաց
իմոց, և շնորհեա ինձ ժամա-
նակ զղջմամբ արտասուաց և
ապաշխարութեան: Եւ տուր
զօրութիւն և իմաստութիւն խոր-
հել զօրէնս քո 'ի տուէ և 'ի
գիշերի, գործել զբարի և
առնել զարդարութիւն առաջի
երեսաց քոց:

Համբառնամ առ քեզ, Տ̃ր,
զաչս իմ բոլորով սրտիւ ի-
մով. կարդամ առ քեզ, Ք̃ս

ա̅ծ միածին Որդի ա̅յ։ Ո՛ կամաւոր խոնարհեցար յանճառ փառաց, առեր զկերպարանս ծառայի. և անպարտականդ յաղագս դատապարտութեան մերոյ համբերեցեր մինչև 'ի չարչարանս խաչի և մահու յանձն առեր վասն փրկութե̅ ստեղծուածոց քոց։ Արդ որ այսպիսի սէր ունիս առ ազգս մարդկան, և կամիս զի ա̅մ մարդ կեցցէ և 'ի գիտութի̅ ճշմարտութե̅ եկեսցէ, գթա 'ի բազմամեղս, գթած և մարդասէր տ̅ր, և կամեաց ընդ իմ փրկութի̅ն, և արա ողորմութի̅ ինձ եկեղեցւոյս և թշուառականիս, որ առաւել վիրա-

ւորեալ եմ և ողորմելի քան զա՟մ մարդիկ ։ Զի ոչ մի օր սիրեցի զքեզ ՚ի բոլոր սրտէ իմմէ , և ոչ մի ժամ յա՟մ զօրութէ իմմէ սպասեցի զպատուիրանս քո․ այլ պղերգութեամբ և զբօսանօք անցուցի զա՟մ ժամանակս իմ, և աղաւղի խորհրդովք անցուցի ըղկեանս իմ ։ Աւուրք իմ պակասեցան , և անօրէնութ՟ք իմ բարձրացան , և ոչ գոյ ինձ յոյս փրկութե՟ և անդի ապաւինի ․ բայց միայն յուսացեալ եմ և ապաւինեալ յառատ ողորմութ՟ի քո , Տ՟ր ա՟ծ ։

Եւ արդ անկեալ ընկամբ տրտմաւոք աղաչեմ զքեզ ,

և հառաչմամբ սրտիւ առ
քեզ պաղատիմ. մինչ չև եմ
կորուսեալ և մինչև չէ ժա-
մանակ դարձի իմոյ հասեալ՝
շնորհեա ինձ ժամանակ ա-
պաշխարութեան, և յառաջ
քան զմախճանն արձակեա
զիս 'ի կապանաց մեղաց ի-
մոց, և անտես արա զան-
թիւ անօրէնութիւնս իմ։ Որ
ա̃մ բարութեանց ես տ̃ր, և
իշխանդ ես թողուլ զմեղս,
ծածկեա և արա անտեսու-
թիւն անօրէնութե̃ իմոյ յա̃մ
մեծութե̃ քումմէ։ Մխիթա-
րեա զվշտացեալ և զտառա-
պեալ զհոգիս իմ. և արժա-
նի արա զիս յայսմ հետէ
ըստ կամաց քոց քաղաքավա-

րել զայլ ևս պանդխտումն իմոյ ժամանակս: Եթէ կամիմ և եթէ ոչ կամիմ՝ բռնադատեա զիս. և մի թողուր զիս 'ի կամս անձին իմոյ, մինչև տարեալ հասուսցես յօթեվանս արքայութեանդ երկնից:

Լուր, տ̃ր, աղօթից անարժան ծառայիս քո, և պաղատանաց իմոց ունկն դիր. որ ասացեր, թէ հայցեցէք և գտջիք, բախեցէք և բացցի ձեզ, և այժմ բաց ինձ, տէր, զդուռն ողորմութեան՝ որ ողբալով կարդամ առ քեզ: Եւ մի անտես առներ զաղաչանս մեղուցեալ անձին իմոյ: Որ ոչ եկիր կո-

չել զարդարս, այլ զմեղա-
ւորս յապաշխարութին։ Արդ-
խոնարհեալ անձամբ և բե-
կեալ սրտիւ և ամօթալից ե-
րեսօք անկանիմ առաջի քո և
աղաղակեմ առ քեզ. Հայր՝
մեղայ յերկինս և առաջի քո՝
թէպէտ և ոչ եմ արժանի կո-
չել որդի քո յաղագս ապակա-
նեալ վարուց իմոց, և ոչ
անուանել զանուն քո զար-
շելի բերանով իմով, այլ հա-
մարձակիմ 'ի գթութիւն քո
զի գտանեմ զքեզ քաղցր և ա-
նոխակալ, բազմախնամ և եր-
կայնամիտ առ արարածս քո։
Ես յաղագս այնորիկ ժամելով
պաղատիմ առ քեզ. և յառաջ
քան զգնել առնենին աղաչեմ,

և նախ քան զփակել զբանն աշխատութե̃ն և հատանել անդարձ վճռին զարտասուս իմ արկանեմ առաջի անո֊խակալ գթութեանդ քո, ո֊ղորմած տէր երկայնամիտ, քաղցր և անյիշաչար· մի ընդ քանքարաթաքոյցն դատա֊պարտեր զիս, և մի ընդ յի֊մար կուսանացն փակեր զդուռն արքայութեն քո· մի ընդ չար և ընդ վատ ծառա֊յիցն ընկեցեր զիս, և մի ընդ անհաւատան և ընդ հերձուա֊ծողան դներ զբաժին իմ, մի ընդ ախտաւորան և ընդ շաղա֊խեալան հոգւով հաներ զիս 'ի կենացն: Այլ զերծո զիս յանեզրական տանջա֊

նացն, և ապրեցո յանհան-
գիստ ալէկոծուեց, և փրկեա
յանմահ մահուանէն, և
ազատեա յաւիտենական ա-
մօթոյն · զերծո 'ի մշտա լա-
լոյն և հանապազորդ ողբա-
լոյն : Մի՛ տարագիր առներ և
մի՛ մերժեր զիս 'ի քո դա-
սուցն և յերանաւէտ կե-
նացն · մի՛ անբաժին հաներ
զիս 'ի հայրենի ժառանգու-
թենէն · և մի՛ զրկեր զիս յերկ-
նաւոր հարսանեացն, և մի՛
կարօտ պահեր զիս 'ի քո ան-
ճառելի տեսլենէդ : Այլ
շնորհեա ինձ ընդ արժանա-
ւորսն և ընդ կատարելոց ո-
գիսն վերանալ լուսեղէն ամ-
պովք ընդ առաջ քո յօդս,

և պարզ երեսօք և աչալըր-
ջութեամբ կալ առաջի քո,
տէր։ Եւ վասն քո փառաւո-
րեալ և հզօր և ահեղ թա-
գաւորութեան մի մոռանար 'ի
դատաստան ընդ ծառայս
քո, և մի հատուցաներ ինձ
ըստ անօրէնութեանս, և մի ա-
մաչեցուցաներ զիս առաջի
անթիւ և ահեղ բանականաց
քոց. այլ ողորմեա ինձ զի ոչ
ոք է հակառակ քեզ. և պար-
գևեա ինձ զքո արքայութիւնդ։
Ընդ սուրբս քո դասեա և ընդ
արդարան պսակեա. ընդ սի-
րելեան քո օրհնեա և ընդ կա-
մարարս կամաց քոց յարա-
զուարճ ուրախութեամբ ուրա-
խացո. և առատապարգև

փառօք փառաւորեա զնա, տէր, 'ի լուսեղէն երամս արդարոց՝ ընդ նոսին հանգչել 'ի վերինդ Երուսաղէմ յանստուեր և յանճառելեաց ուրախութիւնդ. զի ընդ նոսին համաձայնեալ փառաւորեցից զամենանք զԵրրորդութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ա. Մեսրոպայ վարդապետին բանք աղօթից և աղաչանաց:

Ով որ անեղդ ես և անստեղծ, և արարիչ ամ̃ արարածոց, որ ոչ երկինք բաւեն քեզ և ոչ երկիրս զոր-պիսութիւն քո. քանզի 'ի

վեր ես քան զերկինս, և
անդր քան զծագս. և ամե-
նայն երևելիք և աներևոյթք
քո են հաստատեալ. և քոյ-
ին հրամանաւդ կառավարին
ամ՟ արարածք։ Դու աղքա-
տացուցանես, և դու մեծա-
ցուցանես. հարկանես, և
դու բժշկես. դու ես սփո-
փիչ վշտացելոց 'ի սատա-
նայէ, և ողջացուցիչ հի-
ւանդացելոց մեղաց. խո-
նարհեցո տէր զունկն քո, և
լուր ինձ, տես տէր զտառա-
պանս իմ, որ Թագաւորդ ես
փառաց զի կարի վիրաւո-
րեալ եմ մեղօք, ցաւագ-
նեալ անօրէնութե՟. ժահա-
հոտեալ եմ հոգւովս, և յոլ

տեղեաւ մարմնովս․ զաղտա-
լի և ամօթալի երեսօք կամ
առաջի ամենատես աչացդ։
Եւ արդ դու տէր, քաղցր և
ողորմած վասն մեղաւորացս
կոչեցար, որպէս հրամայե-
ցեր թէ 'ի դառնալ անօրի-
նին ոչ ես յիշեցից զնմ ա-
նօրէնութիւն նորա, զոր ա-
րար։ Արդ և ահա առա-
ջի քո անկեալ աղաչեմ և
խնդրեմ ժտելով մի յիշել
զմեղս իմ բազում, և մի զա-
նօրէնութիւնս իմ յանդգ-
նմներ, թէ կամայ և թէ
յակամայ, զոր ինչ մեղայ․
թէ գիտութեամբ և թէ ան-
գիտութեամբ, եթէ բանիւ
և եթէ գործով, և թէ յան-

գէտս ինչ մտածութեամբ, և ամենայն ծուլութեամբ մեղաց. զի դու տէր սովոր ես գթալ, և թողուլ զմեղս բազում: Այլ և յագեցո զքաղցեալս, և լցո զծարաւեալս յառատաբուխ շնորհէդ, զի ցանկամ մերձենալ ՚ի շնորհս ողորմութեան քո, և բաղձամ հայել յարաժամ ՚ի քեզ: Միշտ շնորհաց քոց փափաքիմ, և հանապազ ողորմուեց քոց կարօտիմ. մի՛ ընդ պատժապարտս պատժեր, և մի՛ ընդ դատապարտեալս դատապարտեր, այլ ընդ կամարարս կամաց քոց ընկալ, և ընդ պահողսն պատուիրանաց քոց պա-

տուեա՛: Զի թէ առանց ներելոյ զյանցանս իմ քըն-նես, ընդունայն է ինձ յա-րութեան խոստմունք. զի հուր գեհենին է ժառան-գութիւն իմ. զի եթէ զդա-տապարտութիւնս իմ դա-տես, ապա երանեմ չեղե-լոցն 'ի մօրէ: Այլ նայեա տէր 'ի մաղթանս իմ և 'ի պաղատանս, և մի՛ մերժեր զիս յողորմութենէ քումմէ. զի միշտ զմարմինս իմ պըղ-ծեցի. և հանապազ զհոգիս իմ աղտեղացուցի. և ոչ թէ միայն չար գործովք, այլ և զաղրալի մտածութեամբ: Եւ արդ տէր, լուա զիս 'ի մեղաց, և մաքրեա յախտից

անօրէնութեան իմոյ. և սըր-
բեա որպէս զպոռնիկն, և
արդարացո որպէս զմաքսա-
ւորն, և ողորմեա ինձ որ-
պէս քանանացւոյն, և շնոր-
հեա ինձ ողորմութիւն որ-
պէս աւազակին. և բնա-
կեցո զիս ՚ի դասս սրբոց
քոց. և ՚ի խորանս սիրողաց
անուան քո. և քեզ փառք
և գոհութիւն յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Յոյս աներկիւան ՚ի Քրիստոս:

Փրկիչ իմ Յիսուս, աղ-
բիւր սիրոյ, ՚ի տեսանել ի-
մում բևեռեալ զքեզ ՚ի խա-
չափայտի, խոնարհեալ ըղ-

գլուխ քո առ իս, բազկատարած զձեռս, և զոտս քո վիրաւորեալ 'ի հեղուսից· համարձակիմ լի յուսով աղաղակել ըստ սաղմոսերգուին «Ոչ մեռայց այլ կեցից յաւիտեան»: Խաչ քո աղբիւր էր փրկութեան, արիւն քո պատուական և մահ քոյին ինձ 'ի քաւութիւն. սրբօք պաշտպանեալ՝ որպէս կարիցեմ մեռանել և ոչ կեալ յաւիտեան: Ո՛վ խաչելեալ փրկիչ իմ Յիսուս, խաչ և չարչարանք· արիւն քո և մահ են ինձ 'ի դրաւ յաւիտենական փըրկութեան աներկբայելի. արիւն քո ինձ 'ի լուացումն,

վէրք քո 'ի բժշկութիւն,
չարչարանք քո 'ի սփոփումն
խաչ քո 'ի զօրութիւն, և
մահ քո նախատալից առաջ-
նորդ 'ի կեանս յաւիտենից։
Յիրաւի արդ 'ի չարչա-
րանս քո է ամենայն յոյս
իմ, 'ի խաչ քո և 'ի պատուա-
կան արեանդ։ Ո՛վ բարե-
գութ Յիսուս, պատսպա-
րեալ 'ի խաչ քո և յարիւն,
և ծածկեալ 'ի վէրս սրտիդ՝
մատչիմ առ Հայր քո երկ-
նաւոր յաղերս համարձա-
կաձայն. Հայր իմ, թո՛ղ
ինձ վասն արեան Որդւոյ
քո, որ 'ի փրկութիւն ամե-
նայն իսկ աշխարհի առաւե-
լաւն բաւէ։ Աստուած ա-

մենայն մխիթարութեանց, լոյր աղօթից իմոց և հառաչանաց սրտի իմոյ՝ զոր հեղում առաջի քո․ Վերք Որդւոյ քո Թախանձեն վասն իմ անդադար շնորհս 'ի քէն և ողորմութիւն։ Հայր բազումողորմ, տուր ինձ յարատևութիւն 'ի բարին, և շնորհս մինչև 'ի սպառ 'ի ժամու մահուան, վասն նախատական խաչի և դառնակսկիծ մահու միածնի Որդւոյ քո Յիսուսի, որում չէ քեզ մարթ զլանալ ինչ։

Վասն որոյ 'ի խաչ փրկչին իմոյ դիմեմ, և ողջագուրեմ զայն անթողլի․ արկանեմ ընդ նովաւ զինքս

իմ, պատսպարիմ նովաւ ընդդէմ ամենայն վտանգաց և ամենայն փորձութեց մեղաց. սփոփիմ նովաւ, զօրանամ 'ի հոգեւորս իմ, և վանեմ նովաւ զյարձակմունս դժոխոց: Ի խաչ եւեթ, 'ի մահ և յարիւն տեառն իմոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի է ամենայն յոյս իմ, և աներկեւան ակն ունիմ գտանել նովաւ զթողութն մեղաց իմոց, զուղղութիւն վարուց, մահ քրիստոնէական, և զերանաւէտ կեանս յաւիտենից. ամէն:

Ս. Գրիգորի Նարեկացւոյ բան ապաւինութեան առ փրկամայրն։

Եւ արդ 'ի վերայ այսքանեաց յուսահատութեանց և ահարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց տատուածայլին բարկութեանց, տագնապեալ ոգւով թախծութեան խաւար, աղաչեմ ըզքեզ սուրբ աստուածածին։ Հրեշտակ 'ի մարդկանէ. մարմնատեսիլ քերովբէ. երկնաւոր արքայուհի. անխառն իբրև զօդ. մաքուր որպէս լոյս. անշաղախ ըստ նմանութեան պատկերի ա-

լուսեկքն բարձրութեան · գերազանց քան զընակութիւն անկոխելքն սրբութեանց · երանաւոր խոստմանն տեղի · եդեմ շնչական · ծառ կենացն անմահից բոցեղէն սրովն պարունակեալ, 'ի բարձրեալն հօրէ զօրացեալ և հոլանացեալ, հանգստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ · ընակութեամբ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ։ Մխածլինն հօր՝ և քեզ անդրանիկ · որդի քո ծննդեամբ՝ և տէր արարչութեամբ։ Ընդ անաղտ մաքրութեանդ՝ և անբիծ բարի · ընդ անարատ սրբութեանդ՝ և խնամակալ

բարեխօս. ընկալ զմաղթանս այսը ապերասանաց՝ քում դաւանողիս, և մատո ընծայեա ընդ սմին խառնեալ զբանն իմ՛ նախնի՝ մեծիդ ներբողի՝ 'ի քոյդ պալատանս: Հիւսեա միացո զմեղուցելոյս դառն հեծութիւն ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոց՝ տունկդ կենաց պտղոյն օրհնութեան. զի 'ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ, և 'ի մաքրական քո ծնելութիւնդ սպաւինեալ և լուսաւորեալ, կեցից Քրիստոսի որդւոյ քոյ և տեառն: Օժանդակեա թեւոցդ աղօթիւք՝ խոստովանեալ մայրդ կենդանեաց՝

և ելցն իմ յերկրէս հով_
ուէ, առանց լլկանաց հե_
տևել՝ի կեանս օթեվանացդ
պատրաստութեան. զի Թե_
Թևացի կատարածն իմ
ինձ՝ ծանրացելոյս անօրէ_
նութեամբ: Արասցես տօն
ինձ բերկրութեան՝ զօրն իմ
տագնապի՝ ողջացուցիչ եր_
կանցն եւայլ. բարեխօսեա
խնդրեա աղաչեա, զի ըստ
անձառելի մաքրութեանդ՝
և ահա զբանիդ հաւատամ
զընդունելութիւն: Արտա_
սուօք օգնեա վտանգեցելոյս՝
գովեալդ 'ի կանայս. ծունր
խոնարհեցո առ իմ հաշտու_
թիւն՝ ծնողդ Աստուծոյ.
ընդ իմում թշուառիս հա_

դա՝ խորան բարձրելոյն· ձեռն տուր անկելոյս՝ տաճար երկնային· փառաւորեա զորդիդ քո 'ի քեզ աստուածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և ողորմութիւն աղախին Աստուծոյ և մայր: Բարձրասցի պատիւ քո ինև, և ցուցցի փրկութիւն իմ քև: Եթէ զիս գտցես՝ տխրամայր, թէ ինձ ողորմեսցիս՝ սրբուհի, թէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ, թէ զհարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ, թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բարեշնորհ, թէ յուսահատեալս ինձ միջնորդեսցես՝ միշտ ն̃ր

կոյս, թէ զմերժեալս ըն-
տանեցուցես՝ մեծարեալդ
Աստուծոյ, թէ յիս ցուց-
ցես զգթածութիւն լուծիչդ
անիծից, թէ զծփեալս հաս-
տատեսցես՝ հանգիստ, թէ
'ի խռովութեանցս յուղ-
մանց փոխեսցես զիս՝ խա-
ղաղարար, թէ վրիպելոյս
ինձ հնարաւորեսցես՝ գո-
վեալ, թէ վասն իմ մտցես
'ի հանդէս՝ մահու նահան-
գիչ, թէ զդառնութիւնս իմ
անուշեսցես՝ քաղցրութիւն,
թէ զբաժանմանն իմ խըտ-
րոյ քակեսցես՝ հաշտու-
թիւն, թէ զանմաքրութիւնս
իմ բարձցես՝ եղծման ընդ-
ունիչ, թէ զմտանեալս մա-

հու փրկեսցես՝ կենդանի լոյս, թէ զլալեացս ձայն հասցես՝ բերկրութիւն, թէ զխորտակեալս կազդուրեսցես՝ գեղ կենաց, թէ 'ի կործանեալս յիս ակնարկեսցես՝ հոգելից, թէ ողորմութեամբ ինձ պատահեսցես՝ կատակնուիրեալ: Օրհնեալդ միայն 'ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց. ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ տ̃ն Յիսուսի արարչին երկնի և բնաւին երկրի, զոր անձառապէս ծնար բովանդակ մարմնովն և համայն աս-

տուածութեամբն, որ փա֊
ռաւորեալն է ընդ Հօր և
Հոգւոյն սրբոյ էութեամբ,
և անքննութեամբ մերոյին
բնութեամբս միացեալ, ա֊
մենայն և յամենայնում, մի
յերրորդութէն․ նմա փառք
յաւիտենից յաւիտեանս․
ամէն ։ Յ ։

ԱՂՕԹՔ

# ԵՐԵԿՈՅԵԱՆ

Մաղթանք ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո տէր․ համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի ։

Զօրհներգութիւնս բանաւոր պատարագ քեզ ՚ի մտանել արեգական վե-



րուաքեմք Թագաւոր յա-
ւիտենից: Յամենայն փոր-
ձութենէ Թշնամւոյն ամե-
նակարող աջովդ քո պահ-
պանեա զմեզ Թագաւոր յա-
ւիտենից: Ի մշտնջենաւոր
քո լերանց օրինագրեցաք
փառաւորել սուրբ զերրոր-
դութիւնդ Թագաւոր յա-
ւիտենից:

Աղօթք խոստովանութեան անձին հա-
ղորդելոյ 'ի Քրիստոս: Զոր ա-
րարեալ է սրբոյ Տեառն Ներսիսի
Հայոց կաթողիկոսի:

Հաւատով խոստովանիմ,
և երկիր պագանեմ քեզ՝
Հայր և որդի և սուրբ հոգի,

անեղ և անմահ բնութիւն, որարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց· ողորմեա քո արարածոց:

Հաւատով խոստովանիմ, և երկիր պագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ երրորդութիւն և մի աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի· հալածեա 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան, և լուսաւորեա զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ 'ի հաճոյս, և ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ· ողորմեա ինձ բազմամեղիս:

Հայր երկնաւոր ա՟ծ ճըշ-

մարիտ, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին՝ և զգեցո ինձ զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս: Որդի Աստուծոյ Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն Մարիամայ. վասն մերոյ փրկութեան խաչեցար՝ և թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց, և համբարձար առ հայր. մեղայ յերկինս և առաջի քո, յի-

շեա զիս որպէս զաւազակն՝ յորժամ գաս արքայութեամբ քով. և ողորմեա։ Հոգի Աստուծոյ Աստուած Ճշմարիտ, որ իջեր 'ի յորդանան և 'ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քոյ. մաքրեա զիս վերստին աստուածային հրով քո՝ որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ողորմեա։

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք՝ հոգւով և մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուան քո սրբոյ. և ողորմեա։

Տեսող ամենայնի՝ մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ 'ի դպրութեան կենաց. և ողորմեա:

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. Թողութիւն շնորհեա մեղաւորիս. զի 'ի ծննդենէ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քո զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս. և ողորմեա:

Ամենախնամ տէր՝ դիր պահապան աչաց իմոց զեր-

կեւղ քո սուրբ՝ ոչ ևս հա-
մել յարատ, և ականջաց
իմոց ոչ ախորժել լսել ըղ-
բանս չարութեան, և բերա-
նոյ իմոյ ոչ խօսել զստու-
թիւն, և սրտի իմոյ ոչ խոր-
հել զչարութիւն, և ձեռաց
իմոց ոչ գործել զանիրա-
ւութիւն, և ոտից իմոց ոչ
գնալ 'ի ճանապարհս ան-
օրէնութեան. այլ ուղղեա
զշարժումն սոցա լինել ըստ
պատուիրանաց քոց յամե-
նայնի. և ողորմեա:

Հուր կենդանի Քրիստոս,
զհուր սիրոյ քո զոր արկեր
յերկիր, բորբոքեա յանձն
իմ. զի այրեսցէ զաղտ հո-
գւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ

մտաց իմոց. և մաքրեսցէ ըզ-
մեղս մարմնոյ իմոյ, և վա-
ռեսցէ զլոյս գիտութեան քո
'ի սրտի իմում. և ողորմեա:

Իմաստութիւն Հօր Յի-
սուս, տուր ինձ զիմաստու-
թիւն զբարիս խորհել և
խօսել և գործել առաջի քո
յամենայն ժամ. 'ի չար
խորհրդոց՝ 'ի բանից և 'ի
գործոց փրկեա զիս. և ո-
ղորմեա:

Կամեցող բարեաց տէր
կամարար, մի թողուր զիս
'ի կամս անձին իմոյ գնալ.
այլ առաջնորդեա ինձ լինել
միշտ ըստ կամաց քոց բա-
րեխրաց. և ողորմեա:

Արքայ երկնաւոր, տուր

ինձ զարքայութիւն քո զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ողորմեա:

Խնամող արարածոց պահեա նշանաւ խաչիւ քո զհոգի և զմարմին իմ՚ի պատրանաց մեղաց՝ և՚ի փորձութեանց դիւաց՝ և՚ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա:

Պահապան ամենայնի ք՟ս, աջ քո հովանի լիցի ՚ի վերայ իմ՚ի տուէ և ՚ի գիշերի, ՚ի նստել ՚ի տան և ՚ի գնալ ՚ի ճանապարհի, ՚ի ննջել և

'ի յառնել, զի մի՛ երբէք ամաչեսցայց. և ողորմեա՛։

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, և լնուս զամենայն արարածս ողորմութեքով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. և ողորմեա՛։

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս 'ի չար սովորութեանց իմոց 'ի բարի սովորութիւն, և բևեռեա յոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենին, և ըզսէր արքայութեան քո. զի զղջացայց 'ի մեղաց, և գոր-

ծեցից զարդարութիւն. և ողորմեա:

Աղբիւր անմահութեան, աղբերացո 'ի սրտէ իմմէ արտասուս ապաշխարութե՟ որպէս պոռնկին. զի լուա֊ցից զմեղս անձին իմոյ՝ յա֊ռաջ քան զելանելն իմ յաշ֊խարհէս. և ողորմեա:

Պարգևիչ ողորմութեան, պարգևեա ինձ ուղղափառ հաւատով, և բարի գոր֊ծովք, և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողորմեա:

Բարերար տէր, հրեշտա֊կի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւան֊դել զհոգի իմ, և անխռով

անցուցանել ընդ չարութն այսոցն որ են 'ի ներքոյ երկնից. և ողորմեա:

Լոյս Ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց 'ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց յօթևանս արդարոց՝ մինչև յօր մեծի գալստեան քո. և ողորմեա:

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայիս քո, այլ փըրկեա զիս 'ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդա-

րոց յերկնից արքայութենդ· և ողորմեա։

Ամենողորմ տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց, 'ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց· շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն որ առ իս յանցանաց, և դարձո զնոսա 'ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին և նոքա· և ողորմեա։

Փառաւորեալ տէր՝ ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա 'ի բարի զխնդրուածս իմ, բարեխօսութեամբ սուրբ ածած-

նին, և յովհաննու մկրտչին, և սրբոյն ստեփաննոսի նախավկային, և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին, և սրբոց առաքելոցն և մարգարէից և վարդապետաց և մարտիրոսաց և սրբոց հայրապետաց և ճգնաւորաց և կուսանաց, և ամենայն սըրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց. և քեզ փառք և երկրպագութիւն անքաժանելի սուրբ երրորդութեդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԵՐԳ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՌ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ:

*Նայեաց սիրով Հայրդ գը-թած՝ 'ի քո ստեղծեալ գործս ձեռաց, և զբանակս հրեշտակաց տուր պահապան մեզ տկարաց. փրկեա զանձինս 'ի փորձանաց 'ի խաւարի շրջոց դիւաց, զի 'ի տունջեան և գիշերի տացուք քեզ փառս անլռելի: Էին անեղ անսկզբան՝ ծընունդ անճառ որդի և բան, որ արարեր զտիւ գործոյ և զգիշեր 'ի հանգիստ քնոյ, տուր 'ի ննջել աչաց մարմնոյ արթուն լինել մեզ ըստ*

հոգւոյ, զի 'ի տունջեան և գիշերի տայցուք քեզ փառս անլռելի: Բարուն հոգւոց բանաւորաց՝ աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց, 'ի փակել դրանց բնութեանց մարմնոց լոյս տուր աչաց սրտից մե-րոց. 'ի գիշերայ առ քեզ կանխել, ընդ հրեղինացն օրհնաբանել, զի 'ի տուն-ջեան և գիշերի տայցուք քեզ փառս անլռելի:

Ս. Գրիգորի Նարեկացւոյ Տաղ-ճանք զօրաւորք արհաւրաց գի-շերայնոյ:

Ընկալ քաղցրութեամբ տէր Աստուած հզօր զգաւ-

նացողս զաղաչանս. մատոյց գթութեամբ առ պատկառեալս դիմօք. փարատեա ամենապարգեւ՝ զամօթական տխրութիւնս. բարձ յինէն ողորմած՝ զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա հընարաւոր՝ զմահացու կըրթութիւնս. աւարեա միշտ յաղթող՝ զխաբողին հաճութիւնս. բացադրեա վերնային՝ զմոլեգին մառախուղ կնքեա կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս. ցրուեա ծածկատես՝ զմբռնողին չարգամունս. խորտակեա անքնին՝ զմարտողին դիմեցմունս։ Տեառնագրեա քո անուամբդ՝ զուսանցոյց երդ

յարկիս. պարփակեա քո ձեռամբդ զաւաստաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս. կերպացո զքո նշանդ՝ 'ի հետս ելից մաղթողիս. ամրացո քո աջովդ՝ զհանգստեանս խշտի. մաքրեսցես 'ի հաղբից՝ զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ՝ զտառապեալ անձն ոգւոյս. անխարդախ արասցես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջափակ՝ զպարզորուդ երկնայնոյ. կարգեսցես 'ի գլխի ընդդէմ գլուացն դասու: Տուր հանդիստ բերկրութեան մահահանգոյն

նիրհման 'ի խորութեան գի-
շերիս, բարեխօսութե՛ հայ-
ցուածոց սրբոյ աստուա-
ծածնիդ և ամենայն ընտրե-
լոց: Ամփոփեալ պարուրեա
զպատուհան տեսութեանց՝
զգայարանացս իմաստից՝ ան-
զարհուրելի զետեղմամբ՝ 'ի
ծփական խաղաղութե՛ց, կեն-
ցաղական զբաղմանց, անըն-
ջական երազոց, խօլակա-
նաց ցնորից, յիշատակա-
քո յուսոյդ՝ անմխասելի
պաշտպանեալ: Եւ սթա-
փեալ վերստին 'ի ննջմանէ
ծանրութե՛՝ ամենազգաստ
արթնութեամբ, հոգենորոգ
զուարթութեամբ 'ի քեզ
արձանացեալ, զայս ձայն

մաղթանաց՝ բուրմամբ հաւատոյ՝ քեզ ամենօրհնեալ Թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկրինս առաքել: Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ծէ:

Նորին աղօթք զօրաւորք:

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի, հօրդ ահաւորի անքննին ծնունդ. որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ: Որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմու-

Թեան քոյ փառաց՝ հալին մեղք, հալածին դեք, ջնջին յանցանք, խղին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բըժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տըխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մըռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւքն, և թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի։

Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել, թող ինձ զանթիւ չարիսն իմ՝ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննին, 'ի տարր գոյի, և յեզրս ծագաց աշխարհի. սկիզբն ամենայնի և յամենայնի՝ ամենայն լրումն. օրհնեալ 'ի բարձունս. և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն: Խա:

Նորին այս մաղթանք գիշերային:

Ա̃ծ յաւիտենական, բարերար և ամենակալ. տեղ-

ծիչ լուսոյ, և յօրինիչ գի-
շերոյ. կեանք 'ի մահու, և
լոյս 'ի խաւարի. յոյս ակն-
ունողաց, և երկայնմտու-
թիւն տարակուսելոց. որ
ամենարուեստ իմաստութե̃
քո դարձուցանես յայգ զըս-
տուերս մահու, աննուաղ
ծագումն և անմուտ արե-
գակն. քանզի ոչ զօրէ ծած-
կել զփառս տէրութեան
քո խաւար գիշերոյ: Որում
կրկնի ծունր երկրպագու-
թեան ամենայն եղելոց՝ երկ-
նաւորաց և երկրաւորաց և
սանդարամետականաց. որ
լսես զհեծութիւն կապելոց,
և հայիս յաղօթս խոնարհաց,
և ընդունիս զխնդրուածս

նոցա, Աստուած իմ և Թագաւոր իմ, կեանք իմ և ապաւէն իմ, յոյս իմ և վստահութիւն իմ, Յիսուս Քրիստոս Աստուածդ ամենայնի. սուրբդ հանգուցեալ 'ի հոգիս սրբոց. մխիթարութիւն վշտաց և քաւարան մեղուցելոց. որ գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա. առաքեա զպահպանողական զօրութիւն աջոյ քո, և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և 'ի դիւէ չարէ: Որպէս զի զյիշատակ սոսկալի և սուրբ քո անուանդ՝ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձութեան շնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝

որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ: Եւ 'ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր աստուածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկըրտեցեր, և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր. այսու պարգևօք աստուածականօք՝ ամաչեսցէ սատանայ, քակտեսցին մեքենայքն, բարձցին որոգայթքն, պարտեսցին մարտուցեալքն, պակասեսցին զէնքն սայրասուրք, մերժեսցի մէգն, փարատեսցի խաւարն, մեկնեսցի մառախուղն: Բազուկ քո հովանասցի, և աջ քո կնքեսցէ.

վասն զի գԹած ես և ողոր-մած, և անուն քո կոչե-ցեալ է 'ի վերայ ծառայից քոց: Եւ քեզ ընդ Հօր՝ Հո-գւոյդ սրբոյ՝ փառք և իշ-խանուԹիւն յաւիտեանս յա-ւիտենից. ամէն: ղէ:

## Երգ Գիշերային:

Ի քէն հայցեմք Հայր գը-Թութեանց և Աստուած մը-խիԹարութեանց, 'ի տխրա-կան գիշերային մերձեալ ժամուս մխիԹարեա զմեզ 'ի տրտմութեանց մերոց, և շնորհեա զուրախութիւն գոր-ծովք արդարութեան, ա-ղաչանօք սուրբ աստուա-

ծածնին և ամենայն արդարոց։ Ըստ քաղցրագոյն աստուածային քո հրամանի կոչման որդի Աստուծոյ, եկեալ եմք առաջի քոյ յերեկոյիս աշխատեալք և ծանրաբեռնեալք. Թեթևացո՛ ի ծանրութեանց մերոց զանձինս, և զօրացո բառնալ կամաւ զքաղցր լուծ քոց պատուիրանաց, աղաչանօք սուրբ աստուածածնին և ամենայն արդարոց։ Պաղատիմք առ քեզ հոգւով 'ի հանգստեան հասեալ ժամուս մարդասէր հոգի Աստուծոյ. յորժամ Նորոգես զերեսս երկրի և վերածին առնես զոգիս մարդկան,

Նորափետուր զարդարեա զննջեցեալսն մեր զծնեալսն 'ի քէն սուրբ աւազանաւ, աղաչանօք սուրբ աստուածածնին և ամենայն արդարոց: Զկենդանագիր անարատ ծնողի քոյ արկանեմք առաջի անոխակալ տէրութեանդ քոյ, յորժամ գաս փառօք Հօր դատել զթշնամին խաչի քո. Ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քոյ և կուսի. աղաչեմք զքեզ տէր պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ:

## Առ Քրիստոս Յիսուս:

Սէր անուն Յիսուս
Սիրով քով Ճմլեա
Սիրտ իմ քարեղէն:
Վասն գթութեան,
Վասն ողորմութեան
Վերստին կեցո:
Տենչալի տեսլեամբ
Տուր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս:
Րաբունդ երկնաւոր,
Րոտեա զաշակերտս
Րամից երկնայնոց:
Ցօղ արեան քո տէր
Ցօղեա ՚ի հոգիս,
Ցնծացէ անձն իմ:
Խուծեալս մեղք

Ււծեալ աղաչեմ
Ււսել 'ի բարիս։
Փրկիչ բոլորից
Փութա զիս փրկել
Փորձութեանց մեղաց։
Քաւիչ յանցանաց,
Քաւեա զօրհնաբանս
Քեզ երգել ըզվաուս։

### Մաղթանք առ սուրբ աստուածածինն։

Անկանիմք առաջի քո ո՞վ աստուածածին և աղաչեմք զանարատ զկոյսդ· բարեխօսեա վասն անձանց մերոց, և աղաչեա զմիածին որդիդ՝ փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վը-

տանգից մերոց: Առ.քեզ ապաւինիմք ամենասրբուհի, գերագոյն և հրաշալի և բաշխող բարութեանց. աղբիւր ես ծարաւեաց, և հանգիստ աշխատելոց, և եղեր մերընկալ աստուածային բանին:

Փութացիր յօգնութիւն սուրբ աստուածածին, և աղաչեա զառ 'ի քէն զմարմնացեալ բանն Աստուած, զի յահաւոր և 'ի միւսանգամ գալստեանն իւրոյ պարգևեսցէ մեզ զկեանսն յաւիտենից:

Աղօթք առ սուրբ Տիրամայրն :

Աղաչեմ զամենօրհնեալ տիրուհիդ, զՄարիամ ծնողդ Աստուծոյ, դուստր արքային երկնաւորի. մայր որդւոյ, մխիթարութիւն վշտացելոց, Ճանապարհ մոլորելոց, փրկութիւն յուսացելոյս 'ի քեզ: Կոյս գոլով յառաջ քան զծնունդն, կոյս ծննդեամբ, և կոյս յետ ծննդեան: Աղբիւր ողորմութեան և շնորհաց, աղբիւր գթութեան և քաղցրութե. աղբիւր մխիթարութեան, փրկութեան և խաղաղութեան:

Բարեխօսեա վասն իմ մե֊
ղաւորիս քոյոյ ծառայիս ա֊
ռաջի քո միածնին. զի նո֊
րով ողորմութեամբն և քոյ֊
ին բարեխօսութեամբ շնոր֊
հեսցէ ինձ ողորմելւոյս ժա֊
մանակ յառաջ քան զօր
վախճանին իմոյ. որպէս զի
մաքուր զղջմամբ և ճշմա֊
րիտ խոստովանութեամբ և
լիակատար ապաշխարութ̃
քաւեցից զմեղս իմ. և ամե֊
նայն հաւատացելոց կեանք
և հանգիստ կենդանեաց և
մեռելոց յաւիտենական. և
քեզ փառք յաւիտեանս յա֊
ւիտենից. ամէն:

# ՀԱՅՑՈՒԱԾՔ ՊԷՍՊԷՍ

## Աղօթք 'ի ժամանակի փորձութեան :

### Սաղմոս :

Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. յարդարութե՛ն քում փըր-կեա և ապրեցո՛ զիս:

Խոնարհեցո առ իս զունկն քո և կեցո զիս:

Լեր իմ Աստուած ապա-ւէն, և տեղի ամուր 'ի կե-

ցուցանել զիս. զի հզօրիչ իմ և ապաւէն իմ դու ես։

Աստուած իմ փրկեա զիս 'ի ձեռաց մեղաւորի, 'ի ձեռաց անօրինի և անի– րաւի։

Դու ես համբերութիւն իմ տէր, տէր յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ։

Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ, և առ 'ի քէն է օգնութիւն իմ։

Նայեաց և լուր ինձ տէր Աստուած իմ։ Մինչև յերբ տէր մոռանաս զիս 'ի սպառ, մինչև յերբ դարձուցանես զերեսս քո յինէն։

Աստուած յօգնել ինձ նայեաց. և տէր յընկերել ինձ փութա։ Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք խնդրեն զանձն իմ։

Հառաչանք առ Աստուած։

Ջերծո զիս յորոգայթէ որսողին, և յամենայն վը-տանգից ապրեցո և ողոր-մեա։

Յաներևոյթ թշնամւոյն և 'ի գաղտնի նետից բանսար-կուին պահեա և ողորմեա։

Փրկեա զիս 'ի յանցանաց մեղաց իմոց, և նորոգեա զիս հոգւով գիտութեան և ողորմեա։

Մերձ եմ յընկղմել, օգ-
նեա ինձ նաւապետ բարի,
քանզի ծանրացան 'ի վերայ
իմ բեռինք մեղաց: Աս-
տուած յօգնել ինձ փու-
թա, քանզի խորք չարեաց
ընկղմեն զիս յանդունդս,
այլ դու նաւապետ լեր և
ինձ ձեռնտու: Փրկեա'ի վը-
տանգէ զնաւաբեկս 'ի յա-
լեաց ծովուս, քանզի կորըն-
չիմ 'ի մեղաց անօրէնութեան
իմոյ:

Առ սուրբ Յոյսն:

Աստուածածին անարատ
կոյս առ քեզ ապաւինիմք,

բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց: Առ քեզ ապաւինիմք խորան և տաճար Աստուծոյ բանին, Մարիամ մայր և կոյս, բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց: Զքեզ աղաչեմք հանապազ սուրբ աստուածածին, բարեխօսեա Քրիստոսի Աստուծոյ մերոյ փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վըտանգից մերոց:

Առ քեզ ապաւինիմք ով աստուածածին, բարեխօսեա անդադար առ որդիդ-քո և Աստուած մեր փրկել զմեզ 'ի փորձութենէ և յա-

մենոյն վտանգից մերոց։ Որ
տարար յորովայնի զանտա-
նելըն ամենեցուն, և ծնար
անձառապէս զքո յոյս ազ-
գի մարդկան, առ նա միշտ
բարեխօսեա կեցուցանելըզ-
մեզ։ Միայն օրհնեալ սըր-
բուհիդ ՚ի կանոյս բնակա-
րան և առագաստ տարաչին,
բարեխօսեա առ տէր վասն
անձանց մերոց, զի փրկեսցէ
զմեզ ՚ի սպառնալեաց գե-
հենոյն։

Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ
ԱՂՕԹՔ ԱՌ ՏԷՐ ՅՍ. ՔՍ։

Օրհնեալ է մարդասիրու-
թիւն քո տէր իմ և փրկիչ

Յիսուս Քրիստոս: Ընդէր լքանես զիս. զի դու միայն ես առանց մեղաց, և անուն քո զանոխակալութիւն և զմարդասիրութիւն ցուցանէ: Գթա յիս, վասն զի դու միայն ես մարդասէր: Ապրեցո զիս զանկեալս 'ի մեղս, զի դու միայն ես առանց մեղաց: Հան զիս 'ի տղմոյ անօրէնութեան իմոյ, զի մի՛ ընկղմեցայց յաւիտեանս յաւիտենից: Փրկեա զիս 'ի Թշնամեաց իմոց. քանզի ահա իբրև զառիւծ մինչէ՝ կամելով կլանել զիս. արդ տէր իմ փայլատակեա ըզփայլատակունս քո, և կործանեա զզօրութիւն նորա.

երկիցէ և խաւարեսցի յերեսաց քոց· քանզի անկար է, և ոչ ունի զօրութիւն կալ առաջի քո տէր, և ոչ առաջի երեսաց սիրողաց քոց: Տեսանէ զզօրութիւն նշանի խաչի քո և զարհուրի· և ամաչելով 'ի բաց հեռանայ յայնցանէ որ կարդան առ քեզ: Այժմ տէր կեցո զիս և ապրեցո զիս· վասն զի 'ի քեզ ապաւինեցայ: Հան 'ի նեղութենէ զանձն իմ, զի մի իսպառ կորուսցէ զիս նենգաւորն, որ մարտնչի ընդ իս ծածուկ հնարիւք:

Որ խորհրդոց ես տէր, և քննես զսիրտս և զերիկա-

մունս, որքեա զսիրտ իմ և
զխորհուրդս 'ի զազիր և 'ի
պիղծ խորհրդոց. զի մի խա-
պառ կորեայց յաւիտենա-
կան կորուստն: Որ կարող-
ես յամենայնի, ողորմեա
ինձ Աստուած իմ: Տուր շը-
նորհս արտասուաց մեղու-
ցեալ հոգւոյս, որպէս զի
լուացից զբազմութիւն մե-
ղաց. զի ապրեցայց 'ի ձե-
ռաց անողորմ հրեշտակաց,
որ արկանեն զամբարիշտն 'ի
հուր գեհենին: Երանի թէ
լայի հանապազ, զքեզ ա-
ղաչելով Աստուած. զի մի
անարժան գտայց 'ի ժա-
մուն՝ յորժամ գայցես. և
մի լուայց զահաւոր զձայնն

ղայն, եթէ երթ 'ի բաց մը-
շակդ անիրաւութեան, ոչ
գիտեմ ուստի ես: Աստուած
բարձրեալ՝ միայն տուանց մե-
ղաց, շնորհեա լինձ մեղաւո-
րիս յաւուրն յայնմիկ զբա-
ղում գթութիւն քո. զի
մի յայտնեսցին ծածուկ ամ-
բարշտութիւնք իմ առաջի
տեսողաց հրեշտակաց և հը-
րեշտակապետաց, մարգա-
րէից, առաքելոց և արդա-
րոց սրբոց: Այլ ապրեցո
զիս զամբարիշտս շնորհօք ո-
ղորմութեամբ քով: Ընկալ
զիս 'ի դրախտն փափկու-
թեան ընդ կատարեալ ար-
դարոն: Ընկալ զաղօթս մե-
ղուցեալ ծառայի քո՝ բա-

րեխօսութեամբ սրբոցն, որք հաճոյ եղեն քեզ, Յիսուս Քրիստոս տէրդ մեր: Եւ քեզ ընդ հօր և սուրբ հոգւոյդ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### Աղօթք 'ի ժամանակի նեղութեան:

Անկեալ առաջի քո բարերար և բազումողորմ Աստուած, և աղաչեմք ամենայն սրտիւք մերովք, և խնդրեմք զգթութիւն 'ի քէն. որպէս խոստացար ծառայից քոց և ասացեր զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն Որդւոյ 'ի Հօրէ՝ տացի ձեզ: Շնորհեա

և այժմ հաւատացելոցս 'ի քեզ, և կատարեա 'ի բարի զխնդրուածս մեր. զի 'ի քեզ եմք ապաւինեալ, և քո սուրբ ողորմութեամբ մխիթարեա զմեզ 'ի կեանս յայսմիկ. և առաջնորդեալ հասո յանձառ երկնից արքայութիւնդ, 'ի փառաբանութիւն և 'ի պատիւ ամենասուրբ Երրորդութեան. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### Աղօթք սրբոյն Բեռնարդոսի առ Տիրամայրն :

Յիշեա՛ ով մայր բարեգութ, զի 'ի սկզբանէ ժա-

մանկաց չեք երբէք չեք ու-
րուք լուեալ զի 'ի խնդիր
օգնականութեան քո և բա-
րեխօսութեան դիմեալ ու-
րուք յոտս քո՝ չիցէ լեալ
լսելի։ Քաջալերեալ արդ սո-
վին վստահութեամբ գամ
առ քեզ, կոյս և մայր, առ
քեզ դիմեմ, և յոտս քո ող-
բալով անկանիմ. մի անտես
առներ, մայր բանին Աստու-
ծոյ, զաղօթս իմ, այլ տուր
ինձ գթութեամբ, և ընկալ
զպաղատանս իմ. ամէն։

Մաղթանք առ Տէրն Յիսուս։

Տուր մեզ տէր օգնութն
'ի նեղութեան, զի օրհնես-

ցուք հանապազ շահաւոր անուն քո սուրբ։ Պահեա զմեզ տէր յամենայն փորձութենէ, յաներևոյթ թըշնամւոյն և 'ի գաղտնի նետից նորա։ Դու յոյս մեր և ապաւէն յամենայն ժամանակի, որ օրհնիս հանապազ 'ի քոյոց արարածոց։

Հովանի աջոյ ձեռին քո տէր պահեսցէ զմեզ, և ոչ նիրհեսցէ որ հովուէրն զիսրայէլ։ Զօրութիւն սրբոյ խաչի քո Քրիստոս պահեսցէ զմեզ, և եղիցի մեզ պահապան 'ի տուէ և 'ի գիշերի։ Ետուր երկիւղածաց քոց նշան, և զէն յաղթութեան ընդդէմ աներևոյթ թշնամւոյն։

Առ սուրբ աստուածածինն :

Ի բարեխօսութիւն փութացիր մեզ սուրբ աստուածածին դու 'ի փրկել զժողովուրդս 'ի մեղաց և յապականութենէ : Ապաւինիմք 'ի քո բարեխօսութիդ աստուածածին Մարիամ, մայր տեառն և կոյս սուրբ, հարսն երկնից և դուռն կնքեալ՝ զոր մարգարէն ետես : Փութացիր յօգնութիւն սուրբ աստուածածին, և աղաչեա զառ 'ի քէն զմարմնացեալ բանն Աստուած, զի յահաւոր և 'ի միւսանգամ գալստեանն իւ-

քոյ պարգևեսցէ մեզ ըզկեանսն յաւիտենից։

Այլ մաղթանք առ Յիսուս և առ Աստուածամայրն։

Զքեզ կարդամք յօգնութիւն որ անքուն ականք պահես զիսրայէլ, և զիս փրկեա 'ի փորձութենէ, ալէլուիա ալէլուիա։ Զքեզ աղաչեմք տէր, անսասանելի պահեա զոտս մեր 'ի քո սուրբ 'ի պատուիրանիդ, ալէլուիա ալէլուիա։ Զքեզ Փառաւորեմք տէր, որ նըստիս 'ի վերայ չորեքկերպեան կենդանեաց, և հայիս քաղցրութե՟ յարարածս քո, ալէլուիա ալէլուիա։

Բարեխօսութեամբ սուրբ աստուածածնի և միշտ կուսի աղաչեմ տէր փրկեա զիս 'ի յորոգայթէ աներեւոյթ թշնամւոյն: Բարեխօսութ̃ ծնողի քո և միշտ կուսի հայցեմք 'ի քէն փրկիչ աշխարհի, վասն զի բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք մարդասէր: Խնդա Մարիամ որ եղեր մայր Քրիստոսի, և աղաչեա զառ 'ի քէն զմարմնացեալ բանն Աստուած, զի փրկեսցէ զմեզ 'ի փորձութենէ:

Աղօթք 'ի ժամանակի հիւանդու-թեան ։

Գոհանամ զքէն տէր իմ Յիսուս Քրիստոս վասն այս-չափ սիրոյ քո և բարերա-րութեանց, որ անհաւատա-չեայք են աներկբայելիք մարդասիրութեան քո ։ Պա-տուհասակած արա զմեզ իմ յայսմ աշխարհի, զի խնայեսցես յիս 'ի հանդեր-ձելումն, պատրաստ եմ 'ի կրել զամենայն ըստ կամաց քոց բարեսիրաց ։

Գոհանամ զքէն, տէր, վասն ամենայն վշտակրու-

թեանց իմոց, և խնդրեմ 'ի քէն յաւելուլ զայնս հարիւրապատիկ, եթէ այդպէս հաճոյ իցէ քեզ. ցանկամ զի մի խնայեսցես յիս, զի կատարումն կամաց քոց յիս առաւելագոյն մխիթարութիւն է ինձ:

Գոհանամ զքէն, Աստուած յաւիտենական, վասն բարերարութեանցդ՝ որովք լնուս զիս հանապազօր զհէքս և զթշուառ: Քեզ յանձն առնեմ զկեանս իմ և զմահ, և բիւրիցս բիւր մահունս յանձն առնում, եթէ այսպէս իցէ քեզ հաճոյ:

Մի՛ խնայեր յիս Տէր, մի՛ խնայեր. կատարեա յիս զբարեհաճութիւն սուրբ և արդար և երկրպագելի կամաց քոց. յաւել վիշտս 'ի վիշտ, լցո զցաւս. բայց միայն յաւել ինձ մարդասիրութեամբ և զհամբերութիւն։ Օգնեա ինձ Տէր, զի առանց օգնականութեան քո չկարեմ և ոչ ինչ։

### Աղօթք վասն ազատելոյ 'ի յանկարծական մահուանէ։

Բազումողորմ Տէր, հայցեմ 'ի քէն վասն տագնապի մահուն՝ զոր կրեցեր ցքերան

արեան, և վասն մահուան քո փրկեա զիս 'ի յանկարծահաս յանակնկալ մահուանէ: Մարդասէր տէր, վասն դառնակսկիծ և նախատալից ձաղկանացդ և փըշովք պսակելոյ, վասն խաչելութեան քո և դժնդակ չարչարանաց, և վասն բարութեան քո խոնարհեալ աղաչեմ, մի՛ թողուր ինձ մեռանել յանկարծակի, և մի՛ առանց սուրբ խորհրդոց ելանել 'ի կենաց աստի:

Ո՛վ ամենասիրելի փրկիչ իմ Յիսուս, վասն ամենայն տառապանացդ և ցաւոց, վասն պատուական արեանդ և սուրբ վիրաց, վասն յե-

տին բանիցդ՝ զոր տայցեր 'ի խաչին, « Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր Թողեր զիս. և Հայր, 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ ». յամենայն սրտէ խնդրեմ 'ի քէն, փրկեա զիս 'ի յանկարծահաս մահուանէ: Ձեռք քո արարին զիս, փրկիչ իմ, և ստեղծեր զիս 'ի հողոյ. մի՛ Թողուր մահու յեղակարծում 'ի վերայ իմ հասանել: Աղաչեմ զքեզ, տէր, տուր ինձ ժամանակ ապաշխարութեան, շնորհեա երջանիկ ելս 'ի մարմնոյ աստի 'ի շնորհս քո, զի բոլորով սրտիւ սիրեցից զքեզ, գովեցից և օրհնեցից յաւիտեան. ամէն:

### Աղօթք պօրտաւորք առ սուրբ Աստուածածինն ։

Ողջ լեր թագուհի, մայր ողորմութեան, կեանք, քաղցրութիւն և յոյս մեր, ողջ լեր։ Առ քեզ կարդամք վտարանդեալ որդիքս Եւայի։ Առ քեզ հառաչեմք միշտ հեծութեամբ և լալագին 'ի հովտէ աստի տրտմութեան և արտասուաց։ Եւ արդ աղէ ով բարեխօս մեր, դարձո առ մեզ զգորովագութ հայեցուածս աչաց քոց, և զՅիսուս զօրհնեալ պտուղ որովայնի քո յետ աստանօր պանդխտութեանս ցոյց մեզ,

ո՜վ բարեբարոյ, ո՜վ գթած, ո՜վ քաղցր և անոյշ կոյս Մարիամ։ Լեր բարեխօս վասն մեր սուրբ աստուածածին, որպէս զի արժանաւորք եղիցուք խոստմանցն Քրիստոսի. ամէն։

---

Առ սուրբ Հրեշտակն պահապան։

Ո՛վ սուրբ հրեշտակդ Աստուծոյ, պահապան իմ, զիս՝ 'ի գթութենէն Աստուծոյ յանձնեալս 'ի քեզ՝ լուսաւորեա՛, պահպանեա, ուղղեա և առաջնորդեա ինձ. ամէն։

Ո՛վ սուրբ հրեշտակ իմ
պահապան ,
Ինձ որ խնամոց քոց չեմ
արժան ,
Այլ՝ի սըրտէ առ քեզ կար-
դամ,
Լեր ապաւէն յամ ժամ։
Ի վըտանգից զիս ըխուրա-
ւոր
Դու կեցուցեր մինչև ցայ-
սօր •
Մի՛ , զիս մաղթեմ և յայսմ
աւուր ,
Ի ձեռանէ քումմէ թողուր ։
Յորոգայթից փըրկեա չա-
րին
Զիս՝ որ յաճախ անսամ
նըմին •

Եւ մի՛ մեկնիր յանարժա-
նէս,
Որ յանձն առնեմ զանձն իմ
'ի քեզ։

Առ սուրբն Յովսէփ աստուածահայր, մաղթանք վասն բարի մահուան։

Աղաչեմ զքեզ, ով աստուածահայրդ Յովսէփ, և խնդրեմ 'ի քէն, որ 'ի վերայ բազկացն յոր և անարատ մօր Նորա և կուսի աւանդեցեր զսուրբ հոգիդ, բարեխօս լեր վասն իմ մեղաւորիս, փրկել ինձ 'ի յանկարծահաս մահուանէ, և հրեշտակի բարւոյ խաղաղութեամբ ա-

ւանդել զհոգի իմ, կարդալով զանուն քո ընդ Յիսուսին և ընդ Մարիամու, և օրհնել զքեզ ընդ նոսին յաւիտեանս. ամէն:

Աղօթք վասն հոգեվարաց:

Բազումողորմ և մարդասէր տէր, աղաչեմ զքեզ վասն մահուն տագնապի՝ զոր ամենասուրբ սիրտ քո կրեաց 'ի խաչին, և վասն ցաւոց անարատ մօր քո, լուա պատուական արեամբդ քով զմեղաւորս առհասարակ, որ ամենայն ուրեք կան արդ 'ի հոգեվարս, և մինայ նոցա այսօր մեռանել. ամէն:

Սիրտ Յիսուսի տագնապեալ 'ի հոգեվարս, ողորմեա որոց մերձ կան 'ի մեռանել։

Աղէրս առ սուրբ Տիրամայրն։

Ո՛վ տիրուհի մեր, ո՛վ միջնորդ մեր, ո՛վ բարեխօս մեր ընդ որդւոյ քում հաշտ արա զմեզ, որդւոյ քում յանձն արա զմեզ, և տարեալ կացո զմեզ յանդիման որդւոյ քո։

# ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

## ՎԱՍՆ ԲԱՐԻ ՄԱՀՈՒԱՆ

*Յանձնաբարութիւն անձին առ Յիսուս 'ի ժամու մահուան։*

*Յիսուս Քրիստոս, հայր գթութեանց և Աստուած ողորմութեանց, ահաւասիկ կամ առաջի քո խոնարհեալ անձամբ, բեկեալ սրտիւ, զղջացեալ 'ի մեղաց, և քեզ զվերջին վայրկեանս իմ և որ ինչ յետ այնորիկ մնայ ինձ՝ յանձն առնեմ։*

Յորժամ ինձ ոտք իմ անգնացք ազդ արասցեն՝ ասպարիզի կենաց իմոց 'ի ծայր հասեալ, յայնժամ գթա յիս տէր Յիսուս բազումողորմ։

Յորժամ բազուկք իմ դողդոջունք ընդարմացեալ՝ ոչ ևս զխաչ քո կարասցեն ողջագուրել, և ակամայ զայն 'ի մահիճ ցաւոց իմոց թողից անկեալ, յայնժամ գթա յիս տէր Յիսուս բազումողորմ։

Յորժամ յառեալ զարհուրանօք պլիշ 'ի մահ անդր մօտալուտ՝ կկոցին աչք իմ մթագնեալ, յայնժամ գըթա յիս տէր Յիսուս բազումողորմ։

4 Յորժամ շրթունքս երկ-
թացեալ զպաշտելի անուն
քոյին թոթովելով կիսահա-
գագ կարդայցեն հուսկ յե-
տին նուագ, յայնժամ գը-
թա յիս տէր Յիսուս բա-
ղումողորմ:

5 Յորժամ գունատ և կա-
պուտակ դէմք իմ սոսկումն
'ի կարեկիր ընթերակայս
իմ ազդիցեն, և հերք իմ
թուրմք 'ի քիրան ցուրտ
քամինեալք 'ի գլուխ իմ
գուժեսցեն ահա հասեալ
ինձ զվախճան, յայնժամ
գթա յիս տէր Յիսուս բա-
ղումողորմ:

6 Յորժամ ականջք իմ ծան-
րացեալ անլուրք խօսից՝

բայցին 'ի լուր անդարձ վը-ճռոյդ 'ի սահմանել ինձ զվիճակ յաւերժական, յայն-ժամ գթա յիս տէր Յիսուս բազումողորմ։

Յորժամ յահեղ և սոսկա-լի արհաւրաց միտք իմ զար-հուրեալ և յերեսաց մե-ղաց իմոց և յերկիւղէ ար-դարութեան քո խռովի անձն իմ 'ի տալ մարտ ընդ իշ-խանն խաւարի՝ 'ի հնարել նորա բառնալ յինէն զյոյս ողորմութեան քո հզօրչի սրտի իմոյ, և 'ի ջանալ իւր զիս 'ի վիհ վհատութեան դահավիժել, յայնժամ գը-թա յիս տէր Յիսուս բա-զումողորմ։

Յորժամ ընկճեալ յախ-
տէն ցաւոց սիրտ իմ անզօր ,
և յարհաւրաց մահունուա-
ղեալ տկարասցի 'ի ձիգն
ընդդէմ դարանակալ իւր
ոսոխին , յայնժամ գթա յիս
տէր Յիսուս բազումողորմ:

Յորժամ յետին շիթք ար-
տասուաց հեղցին յաչաց ի-
մոց 'ի սկիզբն շննուածոյս
եղծանելոյ , ընկալ 'ի նուէր
զայն քաւութեան , զի որ-
պէս զոհ զղջման լիցի ինձ
զհոգի իմ աւանդել , և յա-
հագին յայնմ պահու գթա
յիս տէր Յիսուս բազում-
ողորմ:

Յորժամ 'ի գութ խան-
դաղատեալ լուրջ ընդ ա-

զճառս իմ ընտանիք և կարևորք իմ բարեկամք պաղատեսցեն առ քեզ վասն իմ, յայնժամ գթա յիս տէր Յիսուս բազումողորմ։

Յորժամ ապուշ և անզգայ անկեալ դնիցիմ, և տիեզերք համայն ոչ ևս իցեն վասն իմ, 'ի հոգեվարս անդ և 'ի վիշտ օրհասական 'ի հեծեծել իմում և տալ զշունչ յետին, յայնժամ գթա յիս տէր Յիսուս բազումողորմ։

Յորժամ վերջին հառաչ սրտի տացէ հոգւոյ իմում տեղի տալ 'ի մարմնոյս, ընկալ տէր զայն որպէս անձուկ առ քեզ գալոյ, և ո-

ողորմեա ինձ տէր Յիսուս բազումողորմ:

Յորժամ հոգի իմ հրաժարեալ յերկրէ անդարձ ելցէ ընդ շուրթն իմ, զմարմին լքեալ 'ի բաց դի ցուրտ տժգոյն և անկենդան, ընկալ 'ի նուէր զեղծման էխ՝ զոր քում մեծի վայելչութեան մատուցանեմ, և ողորմեա ինձ տէր Յիսուս բազումողորմ:

Յորժամ հոգի իմ յանդիման քո երևեալ յելս 'ի 'ի մարմնոյն՝ զանմահական փառացդ քոց նախկին նուազտեսցէ զլոյս, մի յերեսաց քոց զիս մերժեր, այլ արժանի արա 'ի ծոց բարեգո-

րով ողորմութեանդ ընդունելոյ, զի զօրհնութիւնս քոյին լիցի երգել ինձ յաւիտեան, բազումողորմ տէր գթա յիս:

Աղերս առ սուրբ Տիրամայրն:

Մայր բնաւից բոլորից շընորհաց, Թագուհի սիրոյ, գութ քո մայրենի առաջնորդեսցէ ինձ յամենայն աւուրս կենաց իմոց, ամենազօր ողորմութիւն քո լիցի ինձ հովանի և պաշտպան 'ի շունչ իմ վերջին. վասն այնր ժամու, ամենողորմ կոյս, 'ի տուէ և 'ի գիշերի կարդամ առ քեզ. վասն այնր վեր-

ջին վայրկենի կամիմ հաւա-
տարիմ պաշտօն ընդ ամե-
նայն կեանս իմ քեզ հար-
կանել: Ցածել ևեթ զմտաւ
զվայրկեանն զայն՝ զարհուրի
սիրտ իմ, և արիւն յերա-
կունս իմ պաղի. դադարես-
ցեն յայնժամ աղօթք իմ և
պաղատանք, ոչ ևս գիտա-
ցից որպէս խնդրել օգնու-
թիւն: Ո՜վ աղբիւր անըս-
պառ ողորմութեան, կոյս
Մարիամ, անկեալ առ ոտս
քո՝ արտասուօք խնդրեմ
օգնել ինձ 'ի վերջին յայնմ
պահու, զի մի՛ վնասել ինձ
կարասցէ թշնամին: Մի՛ և
մի՛ լիցի ինձ յուսահատել,
եթէ դու ևեթ զփրկութե

իմ կամիցիս։ Ո՛վ միակ յոյս իմ, պաշտպանեա զիս յայնժամ յերեսաց դիւաց և 'ի բռնութենէ նոցին. զօրացո զիս 'ի վհատել իմում, քաջալերեա քաղցրագութ հայեցուածով քով զսիրտ իմ լքեալ յերեսաց մօտալուտ մահուն. ձգեա զաջ քո, և ընկալ քաղցրութեամբ ըզհոգի իմ, մատուցանել զայն ողջ անվնաս փրկչին իմում և դատաւորի։

## Աղօթք վասն ննջեցելոց։

### Առ սուրբ Երրորդութիւնն։

Փառաբանութիւն առաջի քեզ հայր երկնաւոր. յիշեա զննջեցեալսն մեր՝ և հանգո ընդ սուրբս քո։ Որ էակից ես հօր և հոգւոյ՝ որդիդ միածին. յիշեա։ Որ փառակից ես հօր և որդւոյ՝ հոգիդ ճշմարիտ. յիշեա։

Ա— ՔՐԻՍԻՆ Յի...... :

Որ անճառ տնօրէնու-
թբ՛ 'ի փրկութի ազգի մար-
դկան խոնարհեցար բանդ
Աստուած. այսօր հանգո և
զմեր զննջեցեալսն ընդ սբս
քո, որ միայնդ ես մարդա-
սէր։ Որ անչարչարելիդ մար-
մնով եկիր կամաւ 'ի չար-
չարանս, և 'ի խաչին բևե-
ռեցար հեղեր զարիւնդ 'ի
փրկութիւն. այսօր ։ Որ
Թաղմամբ երեքօրեայ զբռ-
նութիւն մահու լուծեր, և
կոխեցեր զիշխանն մահու, և
վերածեր զննջեցեալսն. այ-
սօր ։ Որ հրաւիրեցեր յան-

մահութիւն զազգս մար-դկան • անմահութեանց բաշ-խող Քրիստոս աղաչանօք աստուածածնին • այսօր:

Առ սուրբ Աստուածածինն:

Աստուածածին անարատ մայր տեառն և կոյս սուրբ բարեխօսեա առ որդին քո միածին, զի փրկեսցէ զմեզ 'ի սպառնալեաց գեհենոյն, և պարգևեսցէ մեզ զերկ-նից արքայութիւնն, և հան-գուսցէ զհոգիս մեր ննջեցե-լոցն: Ցօղ քաղցրածաւալ ցանկալի զուարթնոցն նիւ-թեղէն սրովբէ, գեղ մար-գարտափայլ հիմն եկեղե-

ցւոյ․ մաքուր աղաւնի ամպ հովանաւոր սուրբ կոյս Մարիամ, առ ծնեալն 'ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ շնորհել ըզթողութիւն մեր ննջեցելոցն ։

ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ ։

Աղաչանօք սրբոյ խաչին և անբարբառ բարեխօսին, և սրբոյ Աստուածածնին և յովհաննու կարապետին, և սրբոյն ստեփաննոսի և առաջին մարտիրոսի, և սրբոյ լուսաւորչին՝ հայաստանեայց հայրապետին, և սրբոց առաքելոց և համօրէն մար-

տխրոսաց. ողորմած տէր ողորմեա հոգւոյն մեր ննջեցելոյ:

Աղօթք վասն Նորոգ ննջեցելոյ:

Զհոգիս ծառայից քոց Քրիստոս ընկալ 'ի դասս անդրանկաց գրելոց 'ի յերկինս: Ընկալ վասն սոցա ըղբանաւոր պատարագս 'ի մէնջ, և շնորհեա նոցա զթողութիւն գտանել յաւուրն յետնում: Հաշտեաց 'ի ձեռն սուրբ մարմնոյ և արեան քոյ տէր, և պարգևեա նոցա դասել յաջակողմեանն քում:

Որ եղար հոգի Յիսուս,

զատ պահեա, զի քոյ խաչի և յարութեանդ հաւատամ. Թագաւոր երկնաւոր հանդո զհոգի սորա, յիշելով սորա զհաւատս: Միաբան հայցեմք 'ի քէն սուրբ հոգիդ կենդանարար. աղաչանօք սուրբ աստուածանին արա արժանի և զմեր զննջեցեալն մտանել 'ի յերկնային քո սուրբ առագաստ, և ընդ վերին զօրսն օրհնել սուրբ զերրորդութիւնդ: Կուսածին մարդացեալ Աստուած իմ Յիսուս, յայնմ աւուր ահեղ ատենին զգինս արեան քո մի՛ դատապարտեր. օգնեա և ինձ Քրիստոս այսօր յառա-

ջին ճանապարհին, և 'ի միւսանգամ գալստեանդ քո օգնեա ինձ:

---

Դու ես Քրիստոս կեանք և յարութիւն ազգի մարդկան, ողորմեա: Դու յարուցեալ նորոգեցեր զտխեղերս, ողորմեա: Յոյս յարութեան մերոյ աղբիւր կենաց և փրկութեան. ողորմեա:

Առ հինաց հայրն:

Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս որ կանգնե-

ցեր 'ի փրկութիւն աշխար֊
հի. սա պահեսցէ զմեզ յա֊
մենայն փորձութենէ: Քան֊
զի 'ի սմա բարձրացար Աս֊
տուած և 'ի սմա հեղեր ըզ֊
պատուական սուրբ զա֊
րիւնդ. սա պահեսցէ զմեզ
յամենայն փորձութենէ:
Եւ զքո միւսանգամ զգա֊
լուստդ նշանաւ խաչի քոյ
ցուցեր աշխարհի. սա պա֊
հեսցէ զմեզ յամենայն փոր֊
ձութենէ: Ստեղնեալ ծա֊
ռոյ մահաբերին, այն որ
բուսաւ 'ի մէջ դրախտին,
փոխան բարձեր ըզփայտ
խաչին՝ 'ի գողգոթա հաներ
տեղին. զիմ առ 'ի մեզս ան֊
կեալ զոգի, և ծանրագոյն

բարձող բեւեռն, բարձ 'ի յուսոյդ ըստ ոչխարին, հան 'ի յերկինս յուխտեալ տեղին :

Առ փշանիւն պսակն :

Սրբափայլ պճնեալ զարդուն՝ զոր զգեցուցեր Ահարոնելին, փոխան պսակ 'ի փշոց եդին մըշակք այգւոյն Իսրայելին· ըզփուշ մեղաց հանցես յինէն՝ զոր յիս եհար իմ՛ թշնամին, և ողջացո զխայթուած վիրին, զի ապլիք մեղացըն ջնջեսցին :

Առ նշխարս սրբոց ։

Երկրպագեմք առաջին տէրունական նշխարաց Ճգնաւորին Քրիստոսի և պատուական վկային, որ է պարծանք աշխարհի և բարեխօս վասն մեր։ Զճգնութիւնս սորա առ քեզ ունիմք բարեխօս, և աղաչեմք սովաւ հրաշագործեա զբժշկութիւն հիւանդաց. որ է պարծանք։

Ցնծութեամբ տօնեսցուք զյիշատակս սորա հաւատացեալ ժողովուրդք 'ի փառս ամենազօր տէրութեան. որ է պարծանք։

Ի տաճարի քում սրբու-

*թեան երկրպագեմք քոյ նշխարաց, փառաւորեմք զօր յիշատակի կատարման քոյ հանգստեան. առ Քրիստոս բարեխօսեա վասն մեր քո տօնողացս:*

Յովհաննու Կրպտին:

*Փութացիր մեզ յօգնութիւն առ՚ի վերուստ սուրբ Յովհաննէս, առաքեալ և մարգարէ և կարապետ և մկրտիչ որդւոյն Աստուծոյ, առ Քրիստոս բարեխօսեա վասն անձանց մերոց:*

Ստեփանոսի Նախավկային:

Նախասարկաւագ և ա-ռաջին մարտիրոս որ 'ի Քրիստոսէ պսակեցար, և յերկնաձեմ առագաստին պայծառացեալ բերկրեցար· աղաչեա զԱստուած շնոր-հել մեզ զկեանս անվախ-ճան: Որ քոյին համբերու-թեամբդ զդրունս երկնից բացեալ տեսեր և զորդի ընդ աջմէ հօր· աղօթէիր 'ի վերայ քո քարաձգողացն· աղա: Եկեղեցիք արդարոց և ժողովք ուղղափառաց, այսօր զյիշատակս քո տօ-նեմք· և արտասուօք հայ-

ցեմք 'ի քէն Ճշմարիտ վկայ Քրիստոսի. աղա:

Գրիգորի Լուսաւորչին:

Իւծելոյս մեղք տառապեալ որդեայս, աստուածագութ ծնող հայր գրիգորիոս, հայցմամբ աղօթիւք առ հայրն երկնաւոր խընդրեա կատարել զընթացս մեր ուղղափառութեամբ: Զ.քեզ ունիմք բարեխօս առ Յիսուս միածինն և աղաչող վասն քո ուխտաւորացս:

Սրբոյն Յակոբայ։

*Զարժանահաս մահապարտաժամ' ի ցասմանէ քում հրամանի բարձ' ի մէնջ բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոյն յակոբայ, տէր Աստուած հարցն մերոց։*

*Հայրապետ սուրբ և անբիծ և ընտրեալ յորովայնէ, սքանչելագործ վկայ և պարծանք ազգի մարդկան, առ Քրիստոս բարեխօսեա վասն մեր քո տօնողացս։*

Անփոփոխին անապաշխարանին ։

Պարծանք եկեղեցւոյ և ուրախութիւն հրեշտակաց, ով սուրբ հայր անտոն, զաղաչանս մեր հանապազ մատո սուրբ երրորդութեան ։

---

Վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի՝ տէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ ։

Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ հայր յերկինս, զի կամեցեալ ո-

զօրմեացի, և դթացեալ կեցուսցէ զարարածս իւր: Ամենակալ տէր Աստուած մեր կեցո և ողորմեա:

Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սբ. Աստուածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քո, և աղաչանօք ամենայն սրբոց քոց, և որոց այսօր է յիշատակ: Լուր մեզ տէր և ողորմեա, ներեա, քաւեա, և թող զմեղս մեր: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտ:

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն: Հայր մեր որ յերկինս:

Զհանգստեան զաղօթս և զաղաչանս ընկալ մարդասէր Աստուած 'ի հաճոյս բարերար կամաց քոց: Եւ մեր մեղաց և բազում յանցանացն Թողութիւն շնորհեա. և քեզ փառք յաւիտեանս. ամէն:

Փառք քեզ տէր ած, որ պարգևեցեր զօրս բարեաւ և խաղաղութեամբ անցուցանել: Մարդասէր ած զառաջակայ գիշերս՝ որ 'ի վերայ մեր գալոց է, 'ի մեղաց փրկեա, 'ի չարեաց ազատեա, 'ի գործս բարիս առաջնորդեա: Առաւօտու օրհնութեանցն և փառաբանութեանցն արժանի արա զա-

մինայն հաւատացելոյս ա-
նուանդ քում սրբոյ, և պա-
հեա 'ի խաղաղութեան:

Տէր Աստուած մեր տուր զքո խաղաղութիւնդ ամենայն աշխարհի. բարձ զցասումն և զպատուհասն 'ի յարարածոց: Ողորմեա հարց և եղբարց մերոց կենդանեաց և հանգուցելոց: Ողորմեա զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, պտղատուաց, սպասաւորաց, և այնոցիկ՝ որք ընդ հովանեաւ սուրբ տաճարիս են հանգուցեալ: Տէր Աստուած օգնեա թագաւորաց քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից, զօրաց և զա-

ւակաց նոցին պահելով ՚ի խաղաղութեան:

Տէր Աստուած մեր պահեա զառաջնորդս և զեղբայրութիւնս մեր ամբողջ և անխռով ՚ի կամս ողորմութեան քո:

Նշանաւ սուրբ և պատուական խաչիւ քո հալածեա զերևելի և զաներևոյթ թշնամին ՚ի սահմանաց մերոց և ՚ի բնակութենէս մերմէ: Փրկեա զմեզ ՚ի հրոյն յաւիտենից: Եւ քեզ փառք յաւիտեանս· ամէն:

## Ցանկ աղօթից ըստ գլխակարգութեանց:

Առաւօտեան. 1–24. 44.
Երեկոյեան. 240–267.
Ըստ աւուրց եօթնեկի. 25–42. 183–190.
Հայցուածք կարեւորք. 44. 151. 241:
Խոստովանութեան. 48–58.
Հաղորդութեան. 59–71. 95.
Հաւատոյ. 17. 23. 63. 72. 75–76.
Յուսոյ. 18. 23. 46. 63. 75. 227.
Սիրոյ. 19. 23. 63. 75. 268.
Զղջման. 20. 191–227.
Եօթն սաղմոսք ապաշխարութեան. 159–182.

Ի ժամ սրբոյ պատարագին 77–105.
Զկնի սրբոյ պատարագին. 105.
Ի ժամ հաղորդութեան. 44. 114. 117. 273. 275. 278. 283. 285. 287. 288. 317.
Աղօթք երրորդութեան. 108. 311.
Աղ. Ած Հայր. 76. 110.
Աղ. Յս Քրիստ. 96. 112. 113. 114. 117. 155. 209. 227. 268. 278. 285. 288. 292. 301. 312. 315. 317.
Աղ. սուրբ Հոգին. 120. 123.
Զչարչարանաց Փրկչին. 299. 227. 292.
Աղօթք արեանն Քրիստոսի. 102.
Սրբոյ խաչին. 314. 317.
Փշանիւթ պսակին. 319.
Սրբոյ Աստուածածնին. 47. 124–148. 232. 269. 271. 276. 284. 287. 288. 295. 300. 308. 313.

Ի ժամանակի հիւանդութեան. 290.
Առ սուրբն Յովսէփ. 298.
Վասն բարի մահուան. 292. 298.
299. 301. 308.
Հրեշտակաց. 152. 156.
Պահապան հրեշտակին. 155. 296.
297.
Յովհաննու Մկրտչին. 252. 314.
Ստեփանոսի Նախավկային. 252.
314.
Գրիգորի Լուսաւորչին. 252.
314.
Սրբոյն Յակոբայ Մծբ. 320.
Սրբոյն Ղազարու. 183:
Ամենայն սրբոց. 149. 314.
Նշխարաց սրբոց. 320:
Վասն ննջեցելոց. 311–317.

## Ցանկ սկզբնաւորութեանց Աղօթից։

Ահա ապաւած իմ. 32.
Ահաւասիկ դէր իմ. 48.
Աղաչանօք սրբոյ խաչին. 314.
Աղաչեմ զամենօրհնեալ. 271.
Աղաչեմ զքեզ, ո՜վ. 298.
Աղաչեմ զքեզ տ՟ր հրեշ. 52.
Աղբերացն անապական. 99.
Ամենախնամ ամենա. 55.
Ամենակալ և բարի. 18.
Ամենակալ քաւեա զմեզս. 198.
Այլ դու նայեա յիս. 114.
Այլ շնորհ պատեալ. 117.
Անբաժանելի և հայ. 7.
Աներևութից քննող. 185.
Անկանիմք առաջի քո. 269.

Անձեաւ առաջի քո. 283.
Աշխարհ ամ. 203.
Առ քեզ անձնարկեմ. 96.
Առ քեզ ապաւինիմք ամէ. 47.
Առ քեզ ապաւինիմք աւուրբ. 277.
Ածածին անարատ լոյս. 276.
Ածածին անարատ մայր. 313.
Ածածին մայր բանի. 134.
Աստուած ած. 13.
Ած յաւիտենական. 261.
Արեւն Քրիստոսի. 102.
Արքայ երկնաւոր. 13.
Բազումողորմ ն. 299.
Բազումողորմ տէր. 292.
Բարձր առնեմ զքեզ. 58.
Գառն այ՝ տէր. 76.
Գոհանամ զքէն տէր իմ. 290.
Գոհանամք զքէն տէր. 70.
Դու ես քս կեանք. 317.

Երանի ում. 161.
Երկնային դուռն, Ն. 148.
Երկնաւոր թագաւոր. 199.
Երկնաւոր հօր ընտրեալ. 156.
Երկրպագելի ծնկիւ. 82.
Երկրպագեմ քեզ քո. 100.
Երկրպագեմք առաջի. 320.
Երրորդութիւն անբաժանելի. 3.
Ես արդ ’ի վերայ. 232.
Ես ո՞ր վայր. 62.
Զարհուրեալ դողայցա. 198.
Զերկնեաւք ինձ ’ի. 104.
Զերծո զիս. 275.
Զինչ պէտք այսօր. 22.
Զհոգին ծառայից քոց. 315.
Զողորմութեան քո զդուռն. 151.
Զքեզ կարդամք. 288.
Զօրհներգութիւն բանաւոր. 240.
Զօրուի սուրբ խաչի. 317.

Ընդ անապատին. 50.
Ընդ հովանեաւ պալատ. 9.
Ընկալ, Տէր, պղպջուն. 56.
Ընկալ քաղցրութեամբ. 255.
Ժողովեալքս 'ի քէն. 61.
Ի բարեխօսութիւն ձութայիր. 287.
Ի խորոց կարդացի. 178.
Ինչ մեղաւորիս. 155.
Ի քեզ եմք ապաւինեալ որ. 138.
Ի քեզ եմք ապաւինեալ քոյ. 128.
Ի քեզ Տէր յուսացայ. 273.
Ի քէն հայցեմք. 265.
Լոյս ճշմարիտ. 92.
Լուսաւորեա զիս. 23.
Լուսով աճութեան. 75.
Լցաք 'ի բարութեց. 70.
Ծագեա Տէր. 44.
Ծառ կենաց տնկեալ. 71.
Ծառ կենաց որ. 61.

Հաւատամ քեզ օգնեա. 63.
Հաւատամք 'ի մի ա̅ծ. 72.
Հաւատովխոստովանեմ. 241.
Հոգի քոյ սրբեա զիս. 67.
Ճանապարհ և ճշմարտութի̅. 17.
Մայր բնաւից. 308.
Մայր հաւատոյ. 95.
Մայր սուրբ սքանչելի. 130.
Մարիամ խոյս ան. 51.
Մարմին քո պատուական. 66.
Մեծայուսոյէ անձին իմ. 127.
Յիշեա ով մայր. 284.
Յիսուս Քրիստոս, հայր. 301.
Յիսուս Քրիստոս յոյս. 64.
Յոյս իմ ես դու քեզ. 184.
Յոյս իմ 'ի մանկութենէ. 46.
Նայեա, քեզ. 52.
Նայեաց սիրով. 254.
Ո՞ պայծէ ինչ. 35.

Ողորմեա ինձ ա̅ծ. 169.
Ողորմեա ինձ ք̅ս ողորմ. 188.
Ողջ լեր Թագուհի. 295.
Ողջոյն քեզ Մարիամ. 125.
Ով ամենասրբուհի. 139.
Ով ամենօրհնեալ սուրբ. 8.
Ով ա̅ծ յա̅յ և նորոգող. 120.
Ով երրորդութիւն սուրբ. 108.
Ով լոյս մշտնջենաւոր. 42.
Ով որ անեղդ ես. 222.
Ով սիրելի. 25.
Ով սուրբ հրեշտակդ. 296.
Ով սուրբ հրեշտակ իմ. 297.
Ով սրբուհի մեր. 300.
Ով տէր՛ և դաստիարակ. 123.
Որ աղբիւրդ ես. 19.
Որ անճառ տնօրէնութեամբ. 312.
Որ դատաւորդ. 21.
Որդի ա̅յ կենդանւոյ. 259.

Որ ողորմութբ պգեցար. 183.
Որ վառեցար ՚ի յարփւոյն.
Որ վասն մեր չերկնից. 190.
Ուղիղ եղիցին. 240.
Սաղարթ եմք քո. 110.
Սէր անուն յս . 268.
Սիրտ իմ առ քեզ. 87.
Սուրբք և սիրեցեալք. 152.
Սրբափայլ պճնեալ. 319.
Սրբուհի Մարիամ, կոյս. 142.
Սրբուհի Մարիամ սափոր. 133.
Սրբուհւոյ ածածնին. 17.
Տէր ամենակալ ած. 191.
Տէր ամենայն ինչ. 38.
Տէր Աստուած իմ. 30.
Տէր ած փրկ. 20.
Տէր ած օրհնեալ. 105.
Տէր երկնի և երկրի. 209.
Տէր իմ և ած իմ Յս. 59.

Տէր իմ և ա̄ծ իմ, շնորհ. 6.
Տէր լուր աղօթից. 173.
Տէր մի՛ որպմպութե̄—Ողորմ. 159.
Տէր մի՛ որպմպուե̄—Զինեպք. 164.
Տէր որ 'ի մէջ. 186.
Տէր տէր՝ տէր. 201.
Տուր ինչ տէր Յս̄. 113.
Տուր ինչ տէր օգնութիւն. 28.
Տուր մեզ տէր. 285.
Ցանկամ տէր. 23.
Փառաբանութի̄ առաքեմք. 311.
Փառք 'ի բարձունս. 10.
Փրկիչ իմ Յիսուս. 227.
Փրկութիւն դու ես. 112.
Քրիստոս ա̄ծ յոյս. 187.
Օրհնեալ մարդասիրութի̄. 278.
Օրհնեալ Քրիստոս. 107.

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Թ. Ա.
№ 8160